# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 21 (1571) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 9, 2012
VOLUME 32, NO. 21 (1571) SATURDAY, JUNE 9, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՏԷՐ ԿԱՆԳՆԻՆՔ ՄԵՐ ԵՐԱԽԱՆԵՐՈՒՆ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

«ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ՕՐ» ՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ՏՈՔԹ Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Յունիս 1-ով ծնունդ առած ու մինչեւ Հոկտեմբերի աւարտը, այլեւայլ թուականներով յիշատակուող «Երեխաներու Օր»ը, ոսկէ առիթ կ'ընծայէ մեզի, «Մեր Անկիւնէն»ի մէջ շարադրելու կարգ մը մտքեր, որոնք կ'առնչուին մեր մեսրոպաշունչ լեզուի գոյութեան պահպանման հետ:

Շատ ուշ, դեռեւս 1949, Յունիս 1-ին, Կանանց Դեմոկրատական Տիեզերական Կազմակերպութեան համագումարին, Փարիզ, կը հաստատուի «Երեխաներու Օր»ը, որ նման «Մայրերու Օր»ուան, «Հայրերու Օր»ուան եւ «Արանց Միջազգային Օր»ուան՝ աշխարհով մէկ լայն տարածում կ'ունենայ, իր պաշտպանութեան տակ առնելով այն անուս, փողոցային, խուլիգան, մուրացկան երեխաները, որոնք չքաւորութեան բերումով, ընդհանրապէս ենթակայ կը դառնային նիւթապէս, ֆիզիքապէս եւ բարոյապէս անարգել բազմաբնոյթ շահագործումի: Այս կապակցութեամբ ընդհանուր պատկերացում մը կու տայ անգլիացի համբաւաշատ վիպասան Չարլ Տիքընզ, իր «Օլիվեր Թուիսթ» բարձրորակ հեղինակած վէպի մէջ:

Աւելին, այդ թուականէն մօտաւորապէս հարիւր տարի առաջ, տասնիններորդ դարուն, Ամերիկան ծնունդ կու տար «Կենդանիներու դէմ Անողորմ Վերաբերմունքը Կանխարգիլող Ամերիկեան Ընկերակցութեան», պաշտպանելու համար կենդանիները, մինչ դաժան, դառն վերաբերմունքի ենթակայ կը մնար երեխաներու շնորհազուրկ դասակարգը աշխարհի մակերեսին: Կենդանիներու դէմ դաժան վերաբերմունքը կանխարգիլող օրէնքի տակ, 1884-ին դատի կը կանչուին երկու Նիւ Եորքցիներ, որոնք կը չարաշահէին ութ տարեկան երեխայ մը...:

Այս դատավարութիւնը պատճառ կը դառնայ, որ մարդիկ անդրադառնան, որ իրենց նակատագրին թողլքուած երեխաներու հսկայ զանգուած մը կ'ապրի Ամերիկայի, Լոնտոնի եւ եւրոպական շատ մը երկիրներու մէջ, թէ այլուր, ուր կը նեղուին այդ երեխաները: Շուտով ծնունդ կ'առնէ Առաջին Ընկերակցութիւնը, որ իր պաշտպանութեան տակ կ'առնէ զանոնք:

Այսօրուան դրութեամբ կացութիւնն այնպիսին է, որ երեխաներու պաշտպանութիւնը պետական հակակշռի տակ առնուած է: Ամէն կարգի հոգածութիւն կը

Շար.ը էջ 18

## ԱՄԷՆՕՐԵԱՅ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՀԱՅ-ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎՐԱՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԷՆ ԿԱՆ ՉՈՐՍ ՁՈՀԵՐ



Արխիւային նկար՝ հայկական պաշտպանական դիրքերէն մէկուն վրայ

Վերջին օրերուն լարուած վիճակ կը տիրէ Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ, ուր տեղի ունեցած բախումներու ընթացքին հայկական կողմը տուաւ չորս զոհեր ու բազմաթիւ վիրաւորներ: Սակայն, նախայարձակ Ատրպէյճանական բանակի կորուստները շատ աւելի մեծ են:

Առաջին միջադէպը տեղի ունեցաւ Յունիս 3-4-ի գիշերը Տաւուշի մարզի Չինարի գիւղին մէջ: Այս կապակցութեամբ Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը հրապարակեց յայտարարութիւն մը, ուր ըսուած էր թէ, սահմանի հիւսիսարեւելեան հատուածին վրայ ատրպէյճանական կողմը հերթական անգամ կոպտօրէն խախտած է սահմանին հաստատուած հրադադարը՝ փորձելով ներթափանցել ՀՀ Տաւուշի մարզի Բերդաւան եւ Չինարի գիւղերու ուղղութեամբ տեղակայուած հայկական յենակէտեր»:

Հաղորդագրութեան մէջ նաեւ կը նշուի, որ ձեռնարկուած քայլերուն եւ հայ զինուորական ծառայողներու քաջարի գործողութիւններուն իբրեւ արդիւնք, յարձակումը կասեցուած է եւ կորուստներ տալով՝ հակառակորդը ետ մղուած է: Ատրպէյճանական գործողութեան իբրեւ արդիւնք զոհուած են զինուորական ծառայողներ Հրաչ Սարգսեան, Ջոհրապ Բալաբէկեան

Շար.ը էջ 5

## ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԴՐՈՒԱՏԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ Կ'ՈՒՂՂԷ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՍՑԷԻՆ



Երեւանի մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին՝ Հիլըրի Քլինթըն եւ Սերժ Սարգսեան բարձր տրամադրութեան մէջ

Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Քլինթըն Յունիս 4-ի, երկրորդ անգամ ըլլալով այցելեց Երեւան, ունենալով հանդիպումներ Նախագահ Սերժ Սարգսեանի եւ արտաքին գործոց նախարար Էտուարդ Նալպանտեանի հետ: Քննարկումներու առանցքը կազմեց տարածաշրջանային ապահովութեան եւ ժողովրդավարութեան առնչուող հարցերը:

Նախագահական պալատէն ներս ընդունելով Տիկ. Քլինթընին, Սերժ Սարգսեան ջերմ խօսքեր ուղղեց իր հիւրին: Նոյնքան ջերմ էին պետական քարտուղարի խօսքերը՝ Սերժ Սարգսեանի հասցէին, անտեսելով տակաւին շաբաթ մը առաջ Ամերիկայի Պետական Գրասենեակի հրապարակած կոշտ ու քննադատական զեկոյց Հայաստանի իշխանութիւններու հասցէին:

«Պարոն Նախագահ, ինծի համար պատիւ է կրկին գտնուիլ այստեղ մեր դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 20-ամեակի տարին: Վերջին 20 տարիներու ընթացքին Միացեալ Նահանգները սերտօրէն համագործակցած է Հայաստանի հետ: Ես եւ Նախագահ Օպաման բարձր կը

Շար.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆ ԿԻՍԱՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ

«Ազատութեան Տուն» (Freedom House) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը Յունիս 6-ին հրապարակեց իր հերթական զեկոյցը: «Պետութիւններ անցումային շրջանին» կոչուող այս փաստաթուղթը կ'ամփոփէ Արեւելեան Եւրոպայի, Պալքաններու եւ յետխորհրդային տարածքի 29 պետութիւններուն մէջ վերջին մէկ տարուայ ընթացքին արձանագրուած միտումները:

«Հայաստան կը շարունակէ մնալ կիսամիապետական կառավարում ունեցող պետութիւններու շարքին», - ըսուած է զեկոյցին մէջ: Ըստ «Ազատութեան Տունի»-ի, ժողովրդավարութեան մակարդակը Հայաստանի մէջ գնահատուած է, 1-7 աստիճանի վրայ՝ 5.39, ինչ որ աննշան կերպով աւելի լաւ է, քան նախորդ տարի արձանագրուած 5.43-ը: Ժողովրդավարութեան զարգացման եւ կայացման առումով Հայաստանէն աւելի վատ վիճակի մէջ են միայն Ատրպէյճանը, Կեդրոնական Ասիայի բոլոր հինգ պետութիւնները, ինչպէս նաեւ Ռուսաստանն ու Պելառուսը:

Անդրադառնալով առանձին ոլորտներուն, զեկոյցի հեղինակները որոշ բարելաւումներ կը նկատեն կոռուպցիայի դէմ պայքարի առումով: Միւս ոլորտներուն մէջ, նախորդ տարուայ համեմատ վիճակը կը մնայ անփոփոխ:

Ընտրական գործընթացներու համապատասխանութեան առումով, Հայաստանի ցուցանիշը աւելի վատ է, քան միապետական պետութիւններու շարքին դասուած Ղրղզստանի մէջ:

Լրատուամիջոցներու անկախութեան առումով եւս իրավիճակը մխիթարական չէ: Այստեղ Հայաստանը նոյն մակարդակի վրայ է, ինչ որ՝ Տաճիկստանը:

Ամենալաւ ցուցանիշը արձանագրուած է քաղաքացիական հասարակութեան կայացման ոլորտէն ներս, ուր Հայաստանի արձանագրած յառաջընթացը համեմատելի է Վրաստանի եւ պալքանեան շարք մը երկիրներու հետ:

Հրապարակուած զեկոյցի կապակցութեամբ, քաղաքական եւ ընտրական հարցերու մասնագէտ Արմէն Բաղալեան «Ազատութիւն» ռատիոկայանին կարծիք յայտնեց, որ Մայիսի 6-ի խորհրդարանական ընտրութիւններն ալ եկան ցոյց տալու, որ Հայաստանի մէջ ժողովրդավարական երկրներու յատուկ ընտրական գործընթացներ տեղի չեն ունենար:

«Մայիսի 6-ը ոչ թէ ընտրութիւններ էին, այլ՝ ֆինանսական լայնամասշտաբ միջոցառում: Այստեղ գումարը բաւականին մեծ դեր խաղաց՝ այդ ընտրակաշառք կոչուածը», - ըսաւ Բաղալեան:

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՊԱՐՏԻԶԱՆՈՒԹԻՒՆԸ

*ՋԵՅՄՍ ՅԱԿՈԲԵԱՆ*

*Բրիւսելում պատասխանելով արտասահմանցի լրագրողների հարցերին, մասնաւորապէս անդրադառնալով կոռուպցիայի թեմային, Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը յայտարարել է, որ պայքարն սկսել են վերեւից: Վարչապետը մատնանշել է 500 բարձրաստիճան պաշտօնեաների գոյքի եւ եկամուտների շարժը հրապարակայնացնելու վերաբերեալ օրինագիծը, ասելով, որ դա թոյլ կը տայ նուազեցնել գործարարների ձգտումը դէպի բարձրաստիճան պաշտօններ:*

*Տեսական առումով, Տիգրան Սարգսեանը գուցէ միանգամայն իրաւացի է: Բայց, կոռուպցիան խիստ գործնական երեւոյթ է, եւ հետեւաբար դրա դէմն առնելու կամ այն նուազեցնելու համար անհրաժեշտ են խիստ գործնական քայլեր:*

*Օրինակ, արդեօք այդ 500 բարձրաստիճան պաշտօնեաներից ո՞վ է ներկայում գործարար:*

*Կարծում եմ, որ թէ Տիգրան Սարգսեանը, թէ առաւել եւս Սերժ Սարգսեանը գիտեն նրանց անուն առ անուն: Անուն առ անուն գիտեն նրանց, ովքեր ունեն գործարար շահեր, ընդ որում այն ոլորտներում, որոնք ղեկավարում են կամ որտեղ զբաղեցնում են ղեկավար դիրքեր:*

*Չի՞ կարող արդեօք հանրապետութեան նախագահը, կամ վարչապետը, ոլորտը ազատել այդ գործարարներից: Օրինակ, գրեթէ բոլորը գիտեն, որ Պետական եկամուտների կոմիտէի նախագահ Գագիկ Խաչատրեանը խոշոր գործարար է, ունի բազմաթիւ բիզնեսներ: Վարչապետը չի կարողանում հասնել նրա հեռացմանը, դա հասկանալի է: Իսկ արդեօ՞ք այդ գործարարի պաշտօնեական ձգտումը չի կարողանում իր հրամանագրով նուազեցնել նաեւ հանրապետութեան նախագահը:*

*Սերժ Սարգսեանը ներկայում Ճապոնիայում է, ծանօթանում է ճապոնական տնտեսական եւ ընդհանրապէս քաղաքակրթական հրաշքի ձեռքբերումների հետ: Ի՞նչ է կարծում Սերժ Սարգսեանը, արդեօք հնարաւոր կը լինէ՞ր այդօրինակ ձեռքբերում, եթէ օրինակ Ճապոնիայի հարկերն ու մաքսերը հաւաքէր մարդ, ով խոշոր հետաքրքրութիւններ ունի բիզնես ոլորտում, յատկապէս ներկրումների:*

*Գործարար բարձրաստիճան պաշտօնեաների ցանկը կարելի է շարունակել: Նրանք իրենք էլ չեն թաքցնում, որ գործարար են, միայն թէ իրենք իրենց համարում են այսպէս ասած սեփականատէր, իբր կառավարիչն իրենք չեն: Դա իհարկէ շատ քիչ բան է փոխում, ինչ էլ փոխում է՝ ընդամէնը ֆորմալութեան մէջ:*

*Չի՞ կարող արդեօք հանրապետութեան նախագահն այդ գործարարներին ազատել առանցքային պաշտօններից եւ նրանց փոխարէն նշանակել կոմպետենտ գործիչների: Օրինակ, ո՞վ ստիպեց Սերժ Սարգսեանին գիւղատնտեսութեան նախարարի պաշտօնում նշանակել մի մարդու, ով դրանից առաջ հանդիսանում էր նոյն ոլորտում վերամշակող, ընդ որում ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանի ընտանիքին պատկանող ձեռնարկութեան տնօրէն:*

*Վառ օրինակներից է խորհրդարանի ընտրութեանը ՀՀԿ առաջադրած եւ սատարած մեծամասնական թեկնածուների ցանկը, որում համատարած գործարարութիւն է, բացառութեամբ մէկ-երկու թեկնածուի:*

*Ինչն է խանգարում Սերժ Սարգսեանին իր կադրային քաղաքականութեան մէջ հրաժարուել գործարար կարգավիճակն առաջ մղելուց:*

*Մի կողմ թողնենք այդ գործարարների տնտեսական օրինապահութեան հարցը: Համարենք, որ նրանք ամէն ինչ վաստակել եւ կուտակել են օրէնքով, արդար քրտինքով, ինչպէս յայտարարում էր գործարարներից մէկը, ով նախարար էր, իսկ հիմա էլ դեսպան է Ուկրաինայում:*

*Ի՞նչն է խանգարում հանրապետութեան նախագահին նրանց մի կողմ թողնել, թող գնան, վայելեն իրենց ունեցուածքը, հարստութիւնը, կուտակածը, վաստակածը, իրենց բիզնէսը թող շարունակեն, զբաղուեն նոր ծրագրերով, իսկ պետական պաշտօնները թող հասնեն մարդկանց, ովքեր չունեն բիզնես շահեր, ովքեր խոշոր գործարարների լոբբինգի տակ չեն, ովքեր ունեն կեանքի, պետականութեան, հասարակութեան, մարդկային յարաբերութիւնների մասին բոլորովին նոր ու թարմ պատկերացումներ, ովքեր կ՚ամաչեն անգամ հայելու առաջ կաշառքի մասին մտածելիս:*

*Թէ՞ Սերժ Սարգսեանը վախենում է այդ գործարարների ապստամբութիւնից: Բայց, եթէ երկրի նախագահը ստիպուած է կառավարման համակարգի, իշխանութեան որակի փոփոխութեան հասնել «պարտիզանական» մեթոդներով՝ եթէ անգամ համարենք, որ նա ունի անկեղծ մեծ ցանկութիւն, ապա դա արդէն վկայում է, որ իրավիճակը բաւական լուրջ է:*

*Պարտիզանական պայքարն այդ համակարգի դէմ որեւէ շանս չունի: Աւելին, ինչպէս ցոյց է տալիս այդ պայքարի ընթացքը, պարտիզանական պայքարն առաւել խոցելի է դարձնում հասարակութեանը:*

*Ինչպէս պատերազմի ժամանակ, երբ թշնամին չկարողանալով որսալ պարտիզաններին, նրանց ամէն գործողութիւնից յետոյ վրէժ է լուծում խաղաղ բնակիչներից: Նոյն կերպ կարծես թէ Հայաստանում է, երբ համակարգն իր ներսից իրականացուող «պարտիզանական» գործողութիւնների դիմաց «գոհեր» է պահանջում հասարակութեան տիրոյթից, իսկ Սերժ Սարգսեանն ու միւս «պարտիզաններն» էլ տալիս են, որպէսզի համակարգը յանկարծ չկասկածի, թէ իրենք են պարտիզանները:*

*Այդպէս, Հայաստանը ներկայում գտնւում է «մէկ գոհ առաջ, երկու գոհ հետ» վիճակում, ու դժուար է պատկերացնել, թէ դա կարող է ունենալ էվոլյուցիայի էֆեկտ: Հայաստանում իրավիճակն այնքան է արատաւորուել, որ էվոլյուցիայի էֆեկտ հազիւ կարող է ունենալ ռեվոլյուցիան, որ պարտաւոր է իրականացնել իշխանութիւնը, այլապէս երբ այն կ՚անի արդէն ժամանակը, էֆեկտի համը կարող է դուրս գալ բոլորի համար:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ՅԱՋՈՐԴ ԱՒՏՈԲՈՒՍԻՆ ՍՊԱՍԵԼԻՍ

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

*Ազգային քաղաքագիտական միտքը տուայտանքների մէջ է: Բոլորը ջանում են հասկանալ, թէ ի վերջոյ ընդդիմադի՞ր է արդեօք այս կամ այն քաղաքական ուժը, կամ եթէ ընդդիմադիր է՝ որքանո՞վ է ընդդիմադիր, կամ մէկ այլ ուժի յաջորդ քայլերը վճռակա՞ն են լինելու, թէ՝ ընդամէնը հուժկու եւ այլն: Այս հարցերի շուրջ բանավէճերն այնպիսի կրքոտութեամբ են ընթանում, կարծես դրանցից է կախուած տիեզերքի յետագայ գոյութիւնը:*

*Մինչդեռ փաստերի պարզ համադրումը ցոյց է տալիս, որ առանձնապէս մեծ նշանակութիւն չունի՝ պաշտօնապէս կը փոխուի՞ այս կամ այն կուսակցութեան դիրքորոշումը, թէ՝ չի փոխուի: Ենթադրենք՝ որեւէ կուսակցութիւն ունի 100 հազար կամ կէս միլիոն համակիր: Հիմա ի՞նչ, եթէ այդ կուսակցութիւնը կտրուկ փոխի իր դիրքորոշումը, այդ 100 հազար կամ կէս միլիոն հոգին նոյնպէ՞ս պիտի փոխեն իրենց դիրքորոշումները: Իհարկէ ոչ, որովհետեւ այդ մարդիկ կուսակցութեան շարժական գոյքը չեն:*

*Սա պիտի որ հասկանալի լինի բոլորին: Պատկերացրէք՝ կայարանում կանգնած է, ասենք, Երեւան-Վարդենիս աւտոբուսը, մի 40 հոգի տեղաւորւում են, յետոյ գալիս է վարորդն ու ասում. «Ժողովուրդ ջան, միտքս փոխել եմ, քշում եմ Ապարան»: Մարդիկ, բնականաբար, պիտի իջնեն աւտոբուսից: Բա հօ չե՞ն ասելու «դէ լաւ, ի՞նչ տարբերութիւն, էկէք գնանք Ապարան»: Քաղաքականութեան մէջ սրա լաւագոյն ապացոյցն ՕԵԿ-ն է: 2008թ. Փետրուարին այդ կուսակցութիւնն ունէր համարեա 20 տոկոսանոց վարկանիշ, յետոյ մի օրում կտրուկ փոխեց դիրքորոշումը, ու վարկանիշը դարձաւ զրօ (մարդիկ «իջան աւտոբուսից»): Հիմա ի՞նչ տարբերութիւն՝ քաղաքական ուժերը կը փոխե՞ն իրենց դիրքորոշումները, թէ՝ չեն փոխի, եթէ հասարակութեան դիրքորոշումը մնալու է նոյնը: Կուսակցութիւնն ընդդիմադիր է՝ հասարակութիւնը նրա կողքին կը լինի, կուսակցութիւնն իշխանամէտ կը դառնայ՝ հասարակութիւնը «կ՚իջնի աւտոբուսից» ու կը սպասի յաջորդին:*

*Մի ուրիշ հարց էլ կայ: Ժամանակ առ ժամանակ քաղաքական գործիչները դէմքի հնարաւորինս լուրջ արտայայտութեամբ մտքեր են յայտնում առ այն, որ ցանկացած պահի Հայաստանում կարող է ֆորսմաժորային իրավիճակ ստեղծուել, եւ այդ դէպքում շատ արագ իշխանափոխութիւն տեղի կ՚ունենայ: Ճիշդ են ասում: Բայց Հայաստանում վերջին 21 տարիներին ընդամէնը երկու անգամ է իշխանափոխութիւն տեղի ունեցել, երկու դէպքում էլ առանցքը եղել է ղարաբաղեան խնդիրը: Այսինքն՝ ֆորսմաժորային իրավիճակի մասին խօսողներն ակնյայտօրէն նկատի ունեն, որ ղարաբաղեան կարգաւորման հարցում կարող են կտրուկ փոփոխութիւններ լինել, ինչն էլ կը յանգեցնի իշխանափոխութեան: Շատ հնարաւոր է, որ հենց այդպէս էլ լինի, բայց ժողովրդին դրանից ի՞նչ օգուտ: 1998-ին մի անգամ արդէն «ղարաբաղեան մոտիւներով» յեղաշրջում եղել է, եւ ի՞նչ է շահել ժողովուրդը դրա արդիւնքում: Բնականաբար՝ ոչինչ, որովհետեւ շահում է նա, ով իրականացնում է իշխանափոխութիւնը: Ժողովուրդն այդ իշխանափոխութեան մասին տեղեկացել է երեկոյեան՝ լրատուական թողարկումներից, իսկ շահել են Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը (Վազգէն Սարգսեանի «շահումը» կարճ տեւեց): Հիմա ենթադրենք՝ Ղարաբաղի հարցով ֆորսմաժորային իրավիճակ է ստեղծւում, ժողովուրդն էլ դուրս է գալիս փողոց: Իսկ ո՞վ պիտի վերցնի իշխանութիւնը: Թէ՝ ամէն մէկը պիտի մի աւտոմատ առած՝ փողոց վազի, եւ ով առաջինը կրակեց՝ նա էլ վերցնի իշխանութիւնը:*

*Մի խօսքով՝ իշխանափոխութիւնն ինչ-որ արժէք ունի միայն այն դէպքում, եթէ իրականացնողը ժողովուրդն է՝ քաղաքական որեւէ ուժի առաջնորդութեամբ: Ներիշխանական դաւադրութիւններն ու յեղաշրջումները «հաշիւ չեն», հասարակութիւնը դրանից չի շահում: Քաղաքական ուժերն, իհարկէ, իրենց լաւ կը զգան, հին հաշիւները կը մաքրեն, միմեանցից վրէժ կը լուծեն, բայց հասարակութեանն ի՞նչ օգուտ դրանից: Հասարակութեանը պէտք է նորմալ, յստակ ծրագրեր ու դիրքորոշումներ ունեցող քաղաքական ուժ, որը կը բացատրի, թէ յանուն ինչի է պայքարում, ինչ միջոցներով, եւ որն է լինելու արդիւնքը: Կը լինի այդպիսի ուժ՝ շատ լաւ, չի լինի՝ «կը սպասեն յաջորդ աւտոբուսին»: Մի մասը կը յուսահատուի, մի մասը ոտքով կը գնայ, բայց մնացողները հաստատ ի վիճակի կը լինեն իշխանափոխութիւն իրականացնել: Եւ խնդիրն այն չէ, թէ ինչ ուղղութեամբ է քշում վարորդը: Խնդիրն այն է, թէ ինչ ուղղութեամբ են ուզում գնալ ուղեւորները:*

*«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԿԱՅԱՑԱՒ «ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ» 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

*«Ժառանգութիւն» կուսակցութիւնն Յունիս 2-ին Գրողների միութեան դահլիճում անցկացրեց իր 8-րդ համագումարը: Նախագահի պաշտօնում վերընտրուեց կուսակցութեան հիմնադիր Րաֆֆի Յովհաննիսեանը:*

*Համագումարն ընտրեց կուսակցութեան նոր վարչութեան 10 անդամներին, այդ թւում՝ Անահիտ Բախշեանին, Յովսէփ Խուրշուդեանին, Զարուհի Փոստանջեանին, Արմէն Մարտիրոսեանին, Ստեփան Սաֆարեանին եւ Րաֆֆի Յովհաննիսեանին:*

*Համագումարի աւարտին կայացած նորընտիր վարչութեան նիստում կուսակցութեան վարչութեան նախագահ է ընտրուել Րաֆֆի Յովհաննիսեանը, Արմէն Մարտիրոսեանը ընտրուել է հանրային քաղաքականութեան համար պատասխանատուութեան հարցերով «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ, իսկ Ստեփան Սաֆարեանը՝ գլխաւոր քարտուղար միջազգային յարաբերութիւնների հարցերի պատասխանատու:*

*Վարչութիւնը նաեւ որոշել է լիազօրել «Ժառանգութեան» խորհրդարանական խմբակցութեանը վերսկսել աշխատանքները Ազգային ժողովում՝ առաջարկելով Ռուբէն Յակոբեանին խմբակցութեան ղեկավար եւ Զարուհի Փոստանջեանին՝ քարտուղար: Րաֆֆի Յովհաննիսեանի մասնակցութեան վերաբերեալ որոշում կը կայացուի սեպտեմբերին մեկնարկող Ազգային Ժողովի նստաշրջանին ընդառաջ:*

*Համագումարի իր ելոյթում Րաֆիի Յովհաննիսեանը յայտարարեց, որ մինչեւ աշուն պէտք է ստեղծել աննախադէպ նորարար, հասարակական-քաղաքական մի ուժ՝ Հայաստանը հետ բերելու համար. - «Մեր ժողովուրդը պարտաւոր է ունենալ մինչեւ այս տարուայ աւարտը իրեն պատկանող նախագահական թեկնածու: Այդ թեկնածութեանը մենք միասին պարտաւոր ենք մասնակցել, որովհետեւ եթէ մենք միասին ունենալու ենք դե յուրէ նախագահութիւն, դե յուրէ հանրապետութիւն, այս անգամ բոլորս պիտի նոր կանոններով, նոր պատասխանատուութեամբ ընթանանք»:*

*Համագումարի աւարտին «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ տեսնում է իրեն նախագահի թեկնածու առաջիկայ ընտրութիւններում, Րաֆֆի Յովհաննիսեանը պատասխանեց. - «Ես չեմ կարծում, որ որեւէ առանձին կուսակցութիւն իր թեկնածուն առաջադրելով կը դառնայ յաջողակ, յաղթական այլընտրանք Հայաստանի ժողովրդի կողմից»:*

*Ուղղակի հարցին, թէ պատրաստւում է իր թեկնածութիւնն առաջադրել, նա պատասխանեց. - «Ես նախընտրում եմ լրիւ ուրիշ թեկնածութիւն պաշտպանել»:*

# ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ



**ՀՀ վերանշանակուած վարչապետ՝ Տիգրան Սարգսեան**

*Նախագահ Սերժ Սարգսեանը, ղեկավարուելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 55-րդ յօդուածի 4-րդ կէտով, հրամանագիր է ստորագրել Տիգրան Սարգսեանին Հայաստանի Հանրապետութեան վարչապետ նշանակելու մասին:*

*Հրամանագիրը ստորագրուել է իշխող Հանրապետական կուսակցութեան գործադիր մարմնի անդամների ու խորհրդարանական խմբակցութեան պատգամաւորների հետ խորհրդակցութիւնից յետոյ:*

*Տիգրան Սարգսեանին վարչապետ նշանակելու առաջարկը Սերժ Սարգսեանն է արել: Այլ առաջարկութիւններ, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին ՀՀԿ-ի ղեկավար ներկայացուցիչները, չեն եղել:*

*«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին ի պատասխան Տիգրան Սարգսեանն ասաց, որ վերանշանակումն իր համար սպասելի էր: Նա յաւելեց, որ նոր կառավարութեան կազմը ներկայացուելու է մինչեւ Յունիսի 15-ը, եւ որ ապագայ կառավարութեան ծրագրի հիմքում լինելու է ՀՀԿ-ի նախընտրական ծրագիրը. - «Այն փոփոխութիւնները, որ մենք խոստացել ենք մեր ընտրողներին, այդ բոլոր փոփոխութիւնները ներառուած են լինելու մեր ծրագրում»:*

*Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը լրագրողներին ասաց, որ խորհրդարանը նոր կառավարութեան ծրագիրը կը քննարկի այս ամսուայ ընթացքում:*

*Սերժ Սարգսեանը, Սահմանադրութեան համաձայն, վարչապետի առաջարկութեամբ Յունիս 4-ին նշանակել է կառավարութեան անդամներից երեքին:*

*Նախագահի մամլոյ գրասենեակի փոխանցմամբ՝ Սերժ Սարգսեանի հրամանագրերով Էդուարդ Նալբանդեանը, Սէյրան Օհանեանը եւ Արմէն Երիցեանը նշանակուել են, համապատասխանաբար, արտաքին գործերի, պաշտպանութեան եւ արտակարգ իրավիճակների նախարարների պաշտօններում, որոնք զբաղեցնում էին նաեւ նախորդ կառավարութեան կազմում:*

# ՄԻԱՒՈՐՈՒԱԾ ՌԱԿ-Ը ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԱՌԱՒԵԼ ԱԿՏԻՒ ԼԻՆԵԼ

*Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը (ՀՌԱԿ) եւ Արմենական-ՌԱԿ կուսակցութիւնը, որոնք Յունիսի 3-ին տեղի ունեցած համագումարին վերակազմաւորուել են Ռամկավար Ազատական Կուսակցութիւն (Հայաստան) անուամբ՝ առաջիկայում խոստանում են լինել առաւել ակտիվ:*

*Յունիսի 5-ին լրագրողների հետ հանդիպմանը Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Հայաստան) նորընտիր ատենապետ Յակոբ Աւետիքեանը նշեց, որ չնայած անցած տարիների դժուարութիւններին, 90-ականներին ստեղծուած Հայաստանի ՌԱԿ անդամներից շատերը պահպանել են իրենց ռամկավարարութիւնը, ուստի վերածնունդ ապրող կուսակցութեան գործին նրանք նոյնպէս կը լծուեն:*

*Յակոբ Աւետիքեանը, խօսելով առկայ խնդիրներից, նշեց, որ 2003-ից այս կողմ ՌԱԿ-ը չի մասնակցել որեւէ համապետական ընտրութիւնների, իսկ պատճառներից է կուսակցութեան բազմաթիւ կառոյցների բարձր թօղի վիճակը:*



**Ռամկավար Ազատական Կուսակցութեան ատենապետ Յակոբ Աւետիքեան**

*«Միւս խնդիրը գրասենեակներ ստեղծելն է, մեր 6 գրասենեակներից 5-ը վաճառուել է, եղած միակն էլ Եղվարդում է»,- ասաց նա եւ աւելացրեց, որ կորուստներ կան նաեւ կուսակցութեան շարքերում. «Մեր կառոյցում գերակշիռ մասը ուսուցիչներ էին: Այսօր նրանցից շատերը կամաւոր սկզբունքով այլ կուսակցութեան են անդամագրուել»:*

*«Այսօր կայ այսպիսի բան, մէկ անձը 2-3 կուսակցութիւնների է պատկանում, մենք, անշուշտ, դրանից կը խուսափենք, բայց կ'աշխատենք վերականգնել բարոյական կապիտալը»,-ասաց նա եւ նշեց, որ իրենք աշխատում են համակիրները շատ լինեն, այլ ոչ թէ անդամները:*

*Յակոբ Աւետիքեանը յստակեցրեց, որ երբ 1990թ-ին ստեղծուեց Հայաստանի ՌԱԿ-ը, դա նոյն դրսի Ռամկավար ազատական կուսակցութիւնն էր, որը գործում էր 1921թ-ից: Իսկ այլ անուն վերցրեց, քանի որ դա օրէնքի պահանջ էր:*

*«Կար այսպիսի բան. չէր կարելի դրսից ղեկավարուել: Դրա համար «Հայաստան» բառը աւելացրեցինք:*

*Կուսակցութիւնների վերամիաւորումը, ըստ ատենապետի, չի նշանակում գաղափարական փոփոխութիւններ:*

*«Մենք միշտ եղել ենք պետականամէտ, կ'աշխատենք այդ գիծը տանել առաջ»,- ասաց նա եւ յստակեցրեց, որ ոչ թէ իշխանամէտ, այլ պետականամէտ: Չնայած դրան՝ իշխանութեան ոչ նպաստաւոր քաղաքականութեան դէպքում իրենք կ'արտայայտեն իրենց դիրքորոշումը:*

*Կուսակցութիւնն առաջիկայ նախագահական ընտրութիւններին չի մասնակցի, բայց թեկնածուներից մէկին սատարելու իրենց դիրքորոշումը կ'արտայայտեն, երբ որ արդէն առաջադրուեն այդ թեկնածուները:*

# ՀԱԿ-Ը ԵՒ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ԱԺ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

*Նոր խորհրդարանի առաջին նիստը բոյկոտած երկու ընդդիմադիր խմբակցութիւնները՝ Հայ ազգային կոնգրէսն (ՀԱԿ) ու «Ժառանգութիւն»-ը, Երեքշաբթի, Յունիս 5-ին առաջին դռնփակ նիստերն անցկացրեցին Ազգային ժողովում: Աշխատանքային հանդիպումից առաջ ընդդիմադիրները նաեւ կազմակերպչական հարցեր լուծեցին՝ նոր աշխատասենեակներ ստացան առաջին հարկի տարբեր թեւերում:*

*ՀԱԿ-ը քննարկեց եւ որոշեց, որ կը հրաժարուի Ազգային ժողովի 12 մշտական յանձնաժողովներից մէկի փոխնախագահի պաշտօնից:*

*«Կոնգրէսը որոշել է, որ փոխնախագահի տեղ իրեն հարկաւոր չէ», - «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը:*

*Թէեւ ՀԱԿ-ը հրաժարւում է յանձնաժողովի փոխնախագահի իրեն հասանելիք պաշտօնից, սակայն յանձնաժողովների աշխատանքներին կը մասնակցի: ՀԱԿ-ը խորհրդարանում եօթ պատգամաւոր ունի. քանի որ յանձնաժողովների թիւը աւելի մեծ է ՀԱԿ պատգամաւորների թուից, ընդդիմադիր խմբակցութեան իւրաքանչիւր անդամ, Փաշինեանի խօսքով, երկուական յանձնաժողովում կ'աշխատի: Թէ ով որ յանձնաժողովում կ'աշխատի, դեռ քննարկւում են:*

*«Ժառանգութեան» նիստին չէր մասնակցում Րաֆֆի Յովհաննիսեանը: Միւս չորս անդամները (նրանցից երկուսը՝ Խաչատուր Քոքոբելեանը եւ Ալեքսանդր Արզումանեանը «Ազատ դեմոկրատներ» կուսակցութիւնից են) խմբակցութեան ղեկավար ընտրեցին Ռուբէն Յակոբեանին, քարտուղար՝ Զարուհի Փոստանջեանին: Նրանք եւս քննարկեցին յանձնաժողովներում իրենց ներկայացուածութեան հարցը:*

*«Ժառանգութեան» նիստին մասնակցող բոլոր պատգամաւորները երկուական յանձնաժողովում կ'աշխատեն. նրանք փոխնախագահներ չեն կարող ունենալ, միայն՝ անդամներ:*

*Փոստանջեանն ասում է՝ նոյն ոգով են շարունակելու աշխատել. եթէ իրենց գաղափարները այլ խմբակցութիւններ պաշտպանեն, նաեւ նրանց հետ կը համագործակցեն:*

*«Նոյն ոճի մէջ շարունակութիւն է լինելու այն խմբակցութեան, որը հիմնադրուեց հինգ տարի առաջ, չնայած նրան որ իմ հարազատ գործընկերները այս խմբակցութեան մէջ այս պահին չկան, բայց դա ժամանակաւոր լուծում է: 2013 թուականին ենք պատրաստւում, որպէսզի յարուցենք այնպիսի լուծումներ, այնպիսի խնդիրներ, որոնք բերելու են արտահերթ լուծումների, եւ այդ արտահերթ լուծումների արդիւնքում մեր խմբակցութիւնը ոչ միայն լինելու է այն հին կազմով, այլ նաեւ համալրուած նոր դէմքերով, նոր շնչով եւ ոգով», - ասաց Փոստանջեանը:*

# ԼՈՒՐԵՐ

## «ԲԱՔՈՒՆ ԵՒ ԵՐԵՒԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԶԻՆՈՒԵԼ»

«Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից վերջին շրջանում իրականացուած՝ զէնք ու զինամթերք ձեռք բերելու գործարքները, պատուէրներն ու նոր զինատեսակների ներկրման ծրագրերը մեծացնում են երկու երկրների միջեւ Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտութեան վերսկսման հաւանականութիւնը», - նշում են Ստոկհոլմում գործող Խաղաղութեան ուսումնասիրութեան միջազգային ինստիտուտի՝ SIPRI-ի մասնագէտներն իրենց տարեկան զեկոյցում:

Ռազմական խնդիրները՝ մասնաւորաբար զէնքի ու զինամթերքի համաշխարհային շուկայում արձանագրուող զարգացումները դիտարկող ու վերլուծող այս կենտրոնի մասնագէտների հրապարակած զեկոյցում նշում են. - «Ադրբեջանն ու Հայաստանը պարբերաբար սպառազինութիւնների մրցավազք սկսելու փոխադարձ մեղադրանքներ են հնչեցնում»:

Անդրադառնալով պաշտօնական Բաքուի՝ վերջին տարիներին որդեգրած քաղաքականութեանը, SIPRI-ի մասնագէտները նշում են. - «Ադրբեջանը ռազմական ուժի կիրառման մարտաշունչ հռետորաբանութեան ֆոնին զգալիօրէն աւելացրել է ներկրուող զէնքի ծաւալները»:

Ինչ վերաբերում է Հայաստանի կողմից ձեռք բերուած զէնքերին, ապա ստոկհոլմցի վերլուծաբանները նշում են, որ հանրութեանն այս մասին տրամադրուող տեղեկատուութիւնը «սահմանափակ բնոյթ է կրում»:

Չնայած այդ հանգամանքին՝ SIPRI-ի մասնագէտները նկատում են, որ 2010 եւ 2011 թուականներին Հայաստանը յայտարարել է աւելի ժամանակակից զինատեսակներ գնելու մտադրութեան մասին՝ «Ադրբեջանի սպառազինութեան գնումների աճող ծաւալներին ի պատասխան»:

Արձանագրելով, որ տարիներ առաջ ԵԱՀԿ-ի կողմից սահմանուած զէնքի մատակարարումների էմբարգոն ուժի մէջ է, SIPRI-ի զեկոյցը շարունակում է. - «Կազմակերպութեան անդամ պետութիւնները, սակայն, տարբեր կերպ են մեկնաբանում այս էմբարգոն՝ շարունակելով սպառազինութիւններ մատակարարել թէ՛ Հայաստանին եւ թէ՛ Ադրբեջանին: Ռուսաստանը երկու պետութիւնների պարագայում էլ զէնքի թիւ մէկ մատակարարն է»:

«Հայաստանը զէնքի մատակարարների աւելի սահմանափակ շրջանակ ունի եւ լրջօրէն կախուած է Ռուսաստանից», - պնդում են զեկոյցի հեղինակները՝ նշելով, որ Ադրբեջանն այս առումով ընտրութեան անհամեմատ աւելի լայն հնարաւորութիւններ ունի:

«Ադրբեջանը վերջին շրջանում զէնքի արտադրութեան լիցենզիաներ է ձեռք բերել Իսրայէլից, Թուրքիայից եւ Հարաւային Աֆրիկայից: Դա Բաքուին հնարաւորութիւն կը տայ արտերկրեայ տեխնոլոգիաներն օգտագործել հայրենական ռազմական արդիւնաբերութիւնը զարգացնելու նպատակով», - նշում են Խաղաղութեան ուսումնասիրութեան միջազգային ինստիտուտի մասնագէտները:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՃԱՊՈՆԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ




*Սերժ Սարգսեան եւ վարչապետ Եոշիհիկօ Նոդա Թոքիոյի մէջ կայացած հանդիպման ընթացքին*

Ճապոնիա պաշտօնական այցի շրջանակներում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանն Յունիս 6-ին հանդիպում է ունեցել այդ երկրի վարչապետ Եոշիհիկօ Նոդայի հետ:

Նախագահի մամլոյ գրասենեակի փոխանցմամբ՝ հանդիպման Սերժ Սարգսեանը ցաւակցութիւն է յայտնել արքայազն Տոմոհիտօ Միկասանոմիյայի մահուան կապակցութեամբ:

Հայաստանի նախագահը եւ Ճապոնիայի վարչապետը քննարկել են երկկողմ յարաբերութիւնների զարգացման եւ տարբեր ոլորտներում համագործակցութեան ընդլայնման հնարաւորութիւնները: Նրանք ընդգծել են, որ Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումից ի վեր հայ - ճապոնական յարաբերութիւնները զարգացել են բարեկամութեան եւ փոխադարձ վստահութեան մթնոլորտում:

Սերժ Սարգսեանը եւ Եոշիհիկօ Նոդան նշել են, որ երկու երկրների միջեւ գործակցութիւնը զարգացնելու մեծ ներուժ կայ: Յատկապէս կարեւորուել է բնական աղէտների կանխարգելման, դրանց հետեւանքների վերացման ուղղութեամբ համագործակցութիւնը եւ փորձի փոխանակումը: Համագործակցութեան առումով հեռանկարային են համարուել նաեւ գիտանտեսութեան եւ արդիւնաբերութեան ոլորտները:

Ճապոնիայի վարչապետը նշել է, որ իր երկիրը մտադիր է միջազգային հանրութեան հետ կիսուել ատոմակայանների անվտանգութեան բարձրացման հետ կապուած փորձով, եւ այդ նպատակով երկուստեք կարեւորուել է Ճապոնիայի հետ Հայաստանի համագործակցութիւնը:

Երկուստեք գոհունակութեամբ արձանագրուել է, որ հայ - ճապոնական քաղաքական երկխօսութիւնը վերջին շրջանում ակտիւացել է, ինչի վկայութիւնն է նաեւ Տոկիոյում Հայաստանի դեսպանութեան բացումը, կարեւորուել է Հայաստանում եւս Ճապոնիայի դեսպանատան հիմնումը:

Զրուցակիցները քննարկել են նաեւ Հարաւկովկասեան եւ Ասիախաղաղովկիանոսեան տարածաշրջանների արդի հիմնահարցերը, արձանագրելով դրանց խաղաղ եւ բանակցային ճանապարհով լուծման երկու երկրների մօտեցումների ընդհանրութիւնը:

Հանդիպման աւարտին Սերժ Սարգսեանը եւ Եոշիհիկօ Նոդան համատեղ յայտարարութիւն են ստորագրել:

Երեկոյեան ի պատիւ Հայաստանի Նախագահի Ճապոնիայի վարչապետի անունից տրուել է պաշտօնական ճաշ:

## ԹՈՒՐՔԻԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԻ ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՓԻՒՌՔ ԿԸ ՁԵՒԱՒՈՐԻ

Թուրքական կառավարութիւնը աւելի կազմակերպուած «Թուրքական սփիւռք» ձեւաւորելու համար պետական մակարդակով առաջին քայլերն է անում: Արտերկրում ապրող 6 մլն թուրքերի ներկայացուցիչներն առաջին անգամ հաւաքուելու են Անկարայում:

Ինչպէս տեղեկացնում է «Անադոլու» գործակալութիւնը Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրդողանի որոշմամբ՝ փոխվարչապետ Բեքիր Բոզդաղը հայկական կազմակերպուած սփիւռքի նմանութեամբ սփիւռք ձեւաւորելու աշխատանքներին է լծուել:

Յունիսի 7-8-ին Անկարայում կայանալիք հաւաքը եւս Բոզդաղն է կազմակերպելու: Դրան մասնակցելու են Թուրքիայից դուրս գործող թուրքական եւ «եղբայրական» 500 կազմակերպութիւն ու հիմնադրամ: Քննարկուելու են Թուրքիայինմ հետաքրքրող հարցերում համախմբուած աշխատելու ճանապարհները:

Ֆրանսիայում օրակարգային Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագծի դէմ պայքարից մինչեւ Թուրքիայի՝ Եւրոպական միութեանն անդամակցութիւն, վիզային ռեժիմի վերացում եւ այլն:

«Թուրքական սփիւռքի» ներկայացուցիչների նման հանդիպումները պարբերական բնոյթ են կրելու: Այդ աշխատանքներին ներգրաւուելու են նաեւ տարբեր նախարարներ: Նախատեսւում է, որ նրանցից իւրաքանչիւրը իր ոլորտին առնչուող հարցերում իւրաքանչիւր երկրի սփիւռքի համար առանցին ռազմավարութիւն են մշակելու:

## ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 1-էն*

գնահատենք Ձեզ հետ ունեցած մեր շփումները: Ես եւ Դուք շատ ու շատ զրոյցներ ունեցած ենք եւ ինչպէս Դուք նշեցիք, անոնք եղած են շատ անկեղծ, ինչ որ բնորոշ է ընկերներուն: Եւ ես գիտեմ, թէ Դուք անձամբ ինչպիսի ջանասիրութեամբ աշխատած էք Հայաստանին առնչուող տարածաշրջանային խնդիրներուն լուծում գտնելու համար: Այսպիսով, կ՚ակնկալենք շարունակել երկխօսութիւնը: Միացեալ Նահանգները պատրաստակամ է օժանդակել եւ աջակցիլ Ձեր շարունակական գործունէութեան, որպէս հիանալի առաջնորդ»,- ըսած է պետական քարտուղար Հիլըրի Քլինթըն:

Երեկոյեան Նախագահական Նստավայրէն ներս, արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ կայացած միատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, Հիլըրի Քլինթըն իր գոհունակութիւնը յայտնեց Մայիսի 6-ին Հայաստանի մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններու կապակցութեամբ, ըսելով թէ անոնք եղած են «մրցակցային ու բաց»:

«Մենք ուրախ ենք տեսնելու, որ Հայաստան կը շարունակէ աշխատիլ՝ ամրապնդելու իր ժողովրդավարական կառոյցները, առաջ տանելու համար թափանցիկութիւնը, ազատ մամուլի իրաւունքները, վերացնելու կոռուպցիան, յարգելու համամարդկային իրաւունքները եւ ազատութիւնները», - ըսաւ Քլինթըն:

Հիլըր Քլինթըն անդրադարձաւ նաեւ ղարաբաղեան հակամարտութեանը՝ յայտնելով, որ Լեռնային Ղարաբաղի հարցը չի կրնար լուծուել ուժի կիրառմամբ:

Երեւան ժամանելէ ետք, Միացեալ Նահանգներու դեսպանատան մէջ Տիկ. Քլինթըն հանդիպում ունեցաւ Հայաստանի քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներու հետ եւ անոնցմէ ոմանց, յանձնեց մրցանակներ:

Այս առթիւ իր ունեցած ելոյթի մէջ Քլինթըն ըսաւ,- «Միացեալ Նահանգները համոզուած է, որ հաշուետու կառավարութիւններն ու առաջնորդները յաջողակ հասարակութիւններու ամենակարեւոր տարրերէն մէկն են: Այնպէս որ մեծարելով այս մարդկանց՝ մարդու իրաւունքները պաշտպանելու համար, մենք նաեւ կը ճանչնանք զիրենք՝ որպէս առաւել ուժեղ Հայաստանի կառուցման հաւատարիմ յառաջատամարտիկներ: Միացեալ Նահանգները կը շարունակէ մնալ անոնց կողքին, որոնք կը պաշտպանեն մարդկային իրաւունքները եւ ժողովրդավարութիւնը: Միացեալ Նահանգները եւ ես անձնապէս խորապէս կը հաւատամ, որ Հայաստան կրնայ շատ պայծառ ապագայ ունենալ՝ լի հնարաւորութիւններով իր ողջ ժողովուրդի համար»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ. «ՍԱՀՄԱՆԻՆ ԶՈՀՈՒԱԾ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՐՑԵՐԸ ՊԷՏՔ Է ՏԱԼ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ, ՈՉ ԹԷ ՔԼԻՆԹՈՆԻՆ»

*«Հայելիի» Հարցազրոյց «Համագործակցութիւն յանուն ժողովրդավարութեան» կենտրոնի նախագահ Ստեփան Դանիէլեանի հետ:*

- Մինչ Հայաստանում դեռ չեն կարողանում մարսել խորհրդարանական ընտրութիւնները, Հիլարի Քլինտոնն իր գոհունակութիւնն է յայտնել ընտրութիւնների մասին՝ ասելով, որ դրանք եղել են բաց եւ մրցակցային: Եւ ընդհանրապէս, Հիլարի Քլինթոնն ուրախ էր, որ »Հայաստանը շարունակում է աշխատել՝ ամրապնդելու իր ժողովրդավարական ինստիտուտները, վերացնելու կոռուպցիան, յարգելու համամարդկային իրաւունքներն ու ազատութիւնները«: Որտեղից Հիլարի Քլինթոնին այս լաւատեսութիւնը:

***- Չեմ կարծում, թէ սա լաւատեսութիւն է: Սա ուղղակի քաղաքական ելոյթ է, որն առանձնապէս ոչինչ չի ասում: Երեւի հիմնական միտքը հետեւեալն է՝ Հայաստանի խորհրդարանում, այնուամենայնիւ, յայտնուել են բոլոր ազդեցիկ քաղաքական ուժերը, եւ փողոցում լուրջ քաղաքական կուսակցութիւն չի մնացել: Սա նախկին խորհրդային երկրի համար, ինչ-որ առումով, ցուցանիշ է: Երկրորդը՝ այս յայտարարութեամբ նա ուզում էր ասել, որ շարունակելու են համագործակցութիւնը հայաստանեան իշխանութիւնների հետ: Իսկ թէ ինչպէս կը համագործակցեն, դա արդէն ուրիշ խօսակցութիւն է:***

- Ինչ էք կարծում, ինչ են ակնկալում նրանք այս իշխանութիւններից այլեւս:

***- Չեմ կարծում, թէ այս իշխանութիւններից են ակնկալում: Նրանք այս ռեգիոնում տեղի ունեցող քաղաքական գործընթացներից ակնկալիքներ ունեն: Իմ կարծիքով, այս պահին համար մէկ խնդիրը Սիրիայի դէպքերն են, որ եթէ Սիրիայում քաղաքացիական պատերազմ սկսուի, արտաքին ուժերը միջամտեն, ինչպիսի ազդեցութիւն կ'ունենայ նաեւ Իրանի վրայ: Իսկ սա արդէն վերածւում է տարածաշրջանային սպառնալիքի, որը անդրադառնալու է նաեւ Հարաւային Կովկասի վրայ եւ վե-***



***րաբերուելու է բոլորիս: Ինձ թւում է՝ հիմնական խօսակցութիւնները նախագահի հետ սրա շուրջ են լինելու: Սա շատ լուրջ աշխարհաքաղաքական փորձութիւնների սկիզբ է, եւ ամէն ինչ շատ աւելի լուրջ է, քան մենք ենք կարծում:***

- Սիրիայում խմորուող դէպքերի հետ կապուած մենք ինչ եզրակացութիւններ պէտք է անենք:

***- Հայաստանեան իշխանութիւնը թէ՛ ներքին, թէ՛ արտաքին քաղաքականութեանը, թէ՛ տնտեսութեանը, թէ բնութեանը վերաբերող հայեցակարգ չունի: Սա ոչ մի ոլորտում քաղաքականութիւն չունեցող իշխանութիւն է: Այս իշխանութիւնը օրուայ խնդիր է լուծում եւ նոյնիսկ մէկ օր առաջ ծագելիք խնդիրների մասին չեն մտածում: Այս առումով, նման գլոբալ եւ անկախատեսելի խնդիրների մասին ասել, թէ մենք ինչ պիտի սպասենք իշխանութիւններից, իհարկէ, լուրջ չէ:***

- Սահմանային գօտում կատարուած վերջին դէպքերը տխրեցրել են Քլինթոնին, եւ նա խոստացել է լուրջ հարցեր տալ Ադրբեջանին: Ինչպէս կը մեկնաբանէք Քլինթոնի այս յայտարարութիւնը:

***- Սա ոչինչ չասող յայտարարութիւն է: Զինուորներ են սպանուել, բայց նա ասելիք չունի: Բնականաբար, պէտք է ասի, որ կը խօսի Ադրբեջանի նախագահի հետ: Սակայն ինձ համար անհասկանալի է այն մարդկանց տրամաբանութիւնը, ովքեր Քլինթոնին նման հարցեր են տալիս: Կայ Հայաստան, կայ Ադրբեջան, կայ կոնֆլիկտ: Ու երբ զինուորներ են զոհւում, դրա պատասխանատուութիւնը պէտք է կրի ոչ թէ Քլինթոնը, այլ՝ Հայաստանի նախագահը: Այս հարցը պէտք է տալ միայն Սերժ Սարգսեանին: Եւ սպասել, թէ ինչ-որ մէկը պէտք է գնայ ու Ադրբեջանի նախագահին ասի, որ նա չարութիւններ չանի, ուղղակի հարուած է պետական արժանապատուութեանը:***

- Հիլարի Քլինթոնը Վրաստանին խոստացել է շարունակել օգնութիւնը անվտանգութեան ոլորտում, աւելին՝ ՆԱՏՕ-ի անդամութիւն է խոստացել: Ինչ եզրակացութիւններ պէտք է անի Հայաստանը:

***- Վրաստանն իր քաղաքականութեան առանցքում դրել է ՆԱՏՕ-ին անդամակցութեան հարցը: Ի տարբերութիւն Հայաստանի, Վրաստանն ունի նպատակներ, որոնք նա յստակ ձեւակերպել է: Բնականաբար, այստեղ կայ Ռուսաստանի գործօնը, որը չի ցանկանում, որ ՆԱՏՕ-ն մօտենայ իր սահմաններին եւ ամէն կերպ փորձում է խոչընդոտել այդ գործընթացը: Իսկ ԱՄՆ-ն յստակ ասաց, որ շարունակելու են տարածաշրջանում հաստատուելու խնդիրն իրենց օրակարգում պահել: Սա ուղղակի քաջալերանք էր Վրաստանին: Ընդամէնը:***

- Ընդհանուր առմամբ, ինչ մեսիջներ հասցէագրեց Հայաստանին տիկին Քլինթոնը:

***- Իմ կարծիքով, հիմնական մեսիջն այն էր, որ նա բացի գործող իշխանութիւններից այլ «պարտնյորներ» Հայաստանում չի տեսնում: Գուցէ գործող իշխանութեանն էլ չի համարում արժանի գործընկեր, բայց քանի որ այլընտրանք չկայ, պէտք է եղածի հետ պահի յարաբերութիւնները: Այսինքն՝ այս պահին Հայաստանում չկան ուժեր, որոնք նախընտրելի կը լինեն ԱՄՆ-ի համար: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականութեանը, ապա այս առումով հիմնական մեսիջները փակ են՝ հաշուի առնելով այն շատ վտանգաւոր իրավիճակը մեր ռեգիոնում, որը մենք դեռեւս չենք գիտակցում:***

- Հայաստանի նման փոքր պետութեան համար որքանով է ճիշդ ռուսամէտ դիրքորոշումը, կոմպլիմենտարութիւնը, կամ այն, ինչ մենք անում ենք արտաքին քաղաքականութեան դաշտում:

***- Ինձ համար անհասկանալի են «կոմպլիմենտար», «ռուսամէտ», «եւրոպամէտ» տերմինները: Հայաստանը մի փոքր երկիր է, որն ունի շատ լուրջ խնդիրներ, որոնք կարող են բերել տոտալ, ռեգիոնալ պատերազմի: Այս առումով Հայաստանը պէտք է հաւասարակշռութեան վրայ խաղայ, ինչը ապահովում են ՀԱՊԿ-ը եւ ՆԱՏՕ-ն, որոնք միւս երկրների համար էլ հաւասարակշռութեան երաշխիքն են: Այս հաւասարկշռութեան վրայ ոչ միայն Հայաստանի նման փոքր երկիրն է խաղում, այլեւ Ռուսաստանի, ԱՄՆ-ի նման գերտէրութիւնները:***

***- Ինչ էք կարծում, մենք հաւատի խնդիրներ ունենք, որ իշխանութիւնն իր տեսակի, վարքաբանութեան մէջ, ըստ էութեան, չփոխուեց:***

***- Ով ասաց, որ «Հաւատանք, որ փոխենք» կոչը մեզ էր ուղղուած: Իսկ գուցէ ՀՀԿ անդամներին էր վերաբերում, չինովնիկական հատուածին կամ օլիգարխներին, որ՝ «Հաւատացէ՛ք, մենք վերափոխման շանսեր ունենք»: Սա միայն հեգնանք չէ. Եթէ իշխանութեան վերարտադրութիւնը կախուած չէ հասարակութիւնից, ուրեմն հասարակութեանը դիմելու իմաստն էլ է կորում: Մենք գիտենք, թէ ինչպէս անցակցուեցին ընտրութիւնները: Եւ ուրեմն, ինչու ՀՀԿ-ն պիտի դիմեր մեզ: Հասարակութիւնը շատ մեծ կարծիքի է ինքն իր մասին, եթէ կարծում է, թէ իրեն են դիմել: Հասարակութեան հետ ոչ ոք հաշուի չի նստում:***

- Եթէ իշխանութիւնն ինքն իրեն էր կոչ արել հաւատալ, որ փոխուեն, ինչու չեն փոխւում:

***- Շատ պարզ պատճառով: Եթէ նրանք փորձեն փոխուել դէպի լաւը, ապա սա լուրջ խնդիրների առաջ կը կանգնեցնի իշխանութեանը, եւ յաջորդ քայլին նրանք արդէն կը կորցնեն իշխանութիւնը: Նրանք դատապարտուած են այս ուղիով գնալ: Եթէ որեւէ մէկը յոյս ունի, թէ իշխանութիւնները կը փոխուեն, ուրեմն պէտք է ցաւակցել այդ մարդուն սին յոյսեր փայփայելու համար:***

- Իսկ ինչ պէտք է պատահի, որ իշխանափոխութիւն լինի:

***- Խնդիրը իշխանափոխութեան մէջ չէ: Հայաստանում կարող է հազար անգամ իշխանափոխութիւն լինել, բայց դարձեալ ոչինչ չի փոխուի, աւելին, վիճակը գնալով վատանայ: Այլ խնդիրներ պիտի դնենք՝ մենք ինչն ենք ուզում փոխել: Երբ սահմանենք, թէ ինչ երկիր ենք ուզում, դրան ինչպէս պէտք է հասնել, եւ ձեւակերպումը լինի համոզիչ ու հասարակութիւնը հաւատայ դրան, յաջորդ քայլն ինքն իրեն կը լինի: Իշխանափոխութիւնն ինքնաբերաբար կը լինի Հայաստանում: Իսկ երբ ուղղակի իշխանափոխութեան հարց ենք դնում՝ չհասկանալով ինչի համար, ոչինչ էլ չի լինի:***

***ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝***
***ՄԱՐԻՆԱ ԲԱՂԴԱԳԻՒԼԵԱՆ***

## ԱՄԵՆՕՐԵԱՅ ԲԱԽՈՒՄՆԵՐ

*Շարունակուածէջ 1-էն*

*եւ Կարէն Դաւթեան: Կան նաեւ վիրաւորներ:*

*Զինարի գիւղին մէջ այս միջադէպը կ'արձանագրուէր Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Քլինթընի տարածաշրջան եւ Հայաստան այցելութեան նախօրէին:*

*Յունիս 4 լոյս 5-ին, Ատրպէյճանի Զինուած ուժերու ստորաբաժանումները, շարունակելով նախօրէին ձեռնարկած սադրիչ գործողութիւնը, փորձած են կրկին խախտել ՀՀ պետական սահմանը: Տաւուշի մարզի Ոսկեպար գիւղի մերձակայքին Ատրպէյճան փորձած է հայկական տարածք ներխուժել 15-20 հոգիէ բաղկացած զինուած յարձակողական խմբաւորումով: Հայ դիրքապահներու զգօնութեան շնորհիւ, յայտնաբերուած է յարձակող խումբը եւ ձեռնարկուած յատուկ միջոցներով խումբը վնասազերծուած է: Ատրպէյճանական կողմէն, ըստ նախնական տուեալներու, կայ հինգ զոհ, բազմաթիւ վիրաւորներ: Յարձակող խումբի միւս անդամները կրցած են փախչիլ, իրենց հետ տանելով զոհերուն դիակները եւ վիրաւորները:*

*Այս բախումներու ընթացքին Հայկական կողմէն զոհեր եւ վիրաւորներ չկան:*

*Ատրպէյճանական ԱՊԱ գործակալութիւնը, վկայակոչելով Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը, յայտնած է, որ զոհուած են Ամիլ Ալիեւ, Խալիտ Ազիզով, Ուահիտ Պագիրով, Զուլֆուգար Աթաշըը, Էլչին Իսմայիլով:*

*Յունիս 5-ի գիշերը ատրպէյճանական զինուած ուժերը փորձած են գրաւել Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի մարտական դիրքերը: Այս յարձակման ընթացքին զոհուած է մէկ հայ զինծառայող:*

*Ինչպէս կը տեղեկացնէ ԼՂ պաշտպանութեան նախարարութիւնը, հակառակորդը երեք տարբեր ուղղութիւններով ձեռնարկած է ԼՂՀ ՊԲ-ի մարտական դիրքերը գրաւելու ռազմական գործողութիւն:*

*«Ղարաբաղեան ուժերի առաջապահ ստորաբաժանումները, ժամանակին հաւաստանշելով դարանակալ հակառակորդի նախայարձակ գործողութիւնները, դիմել են պաշտպանական մարտի եւ վերջինիս հետ շպրտել իր ելման դիրքեր: Ատրպէյճանական ուժերի վնասազերծման գործողութեան ժամանակ զոհուել է ՊԲ կրտսեր սերժանտ Վարդան Ռոբերտի Օհանեանը:*

*Ղարաբաղի ռազմական գերատեսչութիւնը կ'ընդգծէ որ, այս միայն Յունիս ամսուայ ընթացքին, սահմանին վրայ կատարուած չորրորդ նախայարձակ գործողութեան փորձն է, ինչ որ որը հիմք կու տայ ենթադրելու, որ պաշտօնական Պաքուն ամէն ինչ կ'ընէ՝ տարածաշրջանէն ներս հաստատուած իրավիճակը փոխելու համար:*

*Ռազմական փորձագէտ Արծրուն Յովհաննիսեան, անդրադառնալով այս բախումներուն, յայտնած է, որ իր տեղեկութիւններով Ատրպէյճան իրականութեան մէջ աւելի շատ զոհեր տուած է:*

*«Մենք ունենք ինֆորմացիա, որ իրենք արդէն մինչեւ 25 զոհ ունեն, եւ դա թաքցնում են», - ըսած փորձագէտը:*

*Տաւուշի մարզի գիւղապետերը կը հաստատեն նաեւ, որ ատրպէյճանական կողմէն ամէն գիշեր կրակահերթեր կ'արձակուին հայկական գիւղերու վրայ:*

# ՉԽԱԲԵՆՔ ԻՆՔՆԵՐՍ ՄԵԶ

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**

Վերջին մօտ մէկուկէս ամիսների ընթացքում հայ-ատրպէյճանական սահմանի Տաւուշի հատուածում հայկական զինուժը հերթական կորուստն է ունենում: Ապրիլին, երբ Հայաստանում խորհրդարանի ընտրութիւն էր, Այգեպար եւ Մովսէս գիւղերի միջեւ ընկած հատուածում սպանուեցին երեք հայ զինծառայողներ: Պաշտօնապէս յայտարարուեց, որ նրանք դարձել են ատրպէյճանական դիւերսիոն խմբի զոհ:

Այդ ժամանակահատուածում, Սերժ Սարգսեանը ՀՀԿ նախընտրական քարոզարշաւն էր իրականացնում հէնց Տաւուշի եւ Լոռու մարզերում: Սարգսեանը անդրադարձաւ այդ միջադէպին եւ յայտարարեց, թէ Հայաստանի պատասխանը չի ուշանայ, ու նաեւ յայտարարեց, թէ որեւէ մէկը թող չկարծի, թէ կարող է օգտուել Հայաստանի նախընտրական զբաղուածութիւնից:

Ուշագրաւ էր այդ միջադէպին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների արձագանքը: Նրանք հերթական անգամ ընդհանուր դարձուածաբանութեամբ դատապարտեցին հրադադարի ռեժիմի խախտումները, եւ յորդորեցին ձեռնպահ մնալ պատասխան քայլերից:

Դա արդէն նորոյթ էր, ուշագրաւ նորոյթ, որը դուրս մնաց շատերի ուշադրութիւնից: Ում էին համանախագահները կոչ անում ձեռնպահ մնալ պատասխանից, եւ ինչու հէնց այդ միջադէպի ժամանակ արձանագրուեց այդ նորոյթը: Դա վաղ թէ ուշ պէտք է լինէ՞ր, թէ եղաւ հէնց տուեալ միջադէպի միայն համանախագահներին եւ գուցէ հակամարտ կողմերի իշխանութիւններին յայտնի հանգամանքների պատճառով: Ի դէպ, այդ առումով ուշագրաւ էր, որ դրանից մի քանի օր առաջ էլ Ատրպէյճանը աննախադէպ տեւականութեամբ գնդակոծել էր սահմանի այդ հատուածի Ջինարի գիւղը, որտեղ, ի դէպ, տեղի է ունեցել նոր դիւերսիան:

Հետաքրքրական է նաեւ, որ Ջինարիի տեւական գնդակոծումից յետոյ համանախագահները չարձագանքեցին դէպքին, թերեւս համարելով, որ եթէ զոհեր չկան, ուրեմն կարելի է եւ աչք փակել տեղի ունեցածի վրայ: Դրանից օրեր անց եղաւ երեք զոհը, յետոյ ԵԱՀԿ Մինսկի խմբի յայտնի յայտարարութիւնը պատասխան չտալու յորդորով: Հիմա հերթական երեք զոհը, մօտ մէկուկէս ամիս անց:

Հայկական կողմը յայտարարում է, որ պատասխանել է Ատրպէյճանին, եւ հակառակորդի դիւերսիոն խումբը ծանր կորուստ կրելով նահանջել է:

Լաւ է, որ պատասխան գործողութիւններով Հայաստանը կորուստ է պատճառել հակառակորդին: Ընդհանրապէս լաւ է, որ հայկական զինուժը անպատասխան չի թողնում այդօրինակ միջադէպերն ու պատասխան գործողութիւնների շնորհիւ կամ տուեալ պահին, կամ քիչ աւելի ուշ, Ատրպէյճանն այդուհանդերձ հատուցում է:

Բայց խնդիրն այստեղ մի փոքր այլ է: Ի վերջոյ, պէտք է իհարկէ աղմկել, պէտք է իհարկէ դիւանագիտական հարթութեան վրայ ծաւալել բաւական աշխոյժ գործունէութիւն, նամակներ ու յայտարարութիւններ պատրաստել: Միեւնոյն ժամանակ պէտք է դատապարտել Ատրպէյճանի գործողութիւնները: Այստեղ թերեւս քննարկելու խնդիր չկայ:

Բայց, կայ մի հարց: Իսկ պէ՞տք է արդեօք քննարկել հայկական կողմում առկայ իրավիճակը: Պէ՞տք է արդեօք քննարկել, թէ ինչ է հնարաւոր անել հայկական կողմում պաշտպանուածութիւնն ու զինծառայողների անվտանգութիւնը բարձրացնելու ուղղութեամբ: Իսկ պէ՞տք է արդեօք հարց տալ, թէ ինչու է Հայաստանի զինուժը սահմանի գրեթէ միեւնոյն հատուածում երկրորդ անգամ տալիս 3 զոհ: Չէ որ ատրպէյճանական դիւերսիաների «պատմութիւնը» պէտք է ստիպի լինել առաւել ուշադիր, առաւել զգօն, առաւել կարգապահ: Պէ՞տք է արդեօք քննարկել, թէ ինչ վիճակում են այդ հանգամանքները: Պէ՞տք է պարզել, թէ արդեօք հայկական կողմում զոհերի առկայութիւնը որոշակի թերացումների եւ բացթողումների հետեւանք էր, եւ հնարաւոր կը լինէր խուսափել զոհերից, եթէ չլինէին այդ բացթողումները:

Հասկանալի է, որ այդ հարցերի որոշ մասը չի կարող հրապարակային, հանրային քննարկման նիւթ լինել: Բայց, արդեօք զինուժի բարձրաստիճան ղեկավարութիւնում այդ քննարկումները կան: Արդեօք կայ այդ առումով անաչառ քննութիւն, թէ օգտուելով որոշ հարցերում հանրայնացման աննպատակայարմարութիւնից, տեղի է ունենում ծածկադմփոց, ինչի հետեւանքով էլ ասենք սահմանային միեւնոյն հատուածում կարող են լինել շատ մօտ, կրկնուող երկու ողբերգական միջադէպեր:

Այստեղ միայն Ատրպէյճանին մեղադրելն ու միջազգային աղմուկ հանելը հաւասարազօր է ոչինչ չանելուն, եթէ հանգամանալից եւ մանրամասն չի քննարկւում իրավիճակը մեր կողմում եւ չեն լինում իրավիճակի կառավարելիութիւնն անհրաժեշտ մակարդակից ցածր գտնուելու համար պատասխանատուներ: Իսկ եթէ միեւնոյն հատուածում տեղի են ունենում միմեանց յաջորդող երկու դիւերսիոն յարձակումներ, ապա այստեղ թերեւս կան խնդիրներ, որոնք պէտք է հիմնովին լուծուեն, եւ թերեւս պէտք է դրանց լուծումը արտայայտուի նաեւ կադրային որոշակի քայլերով: Ի վերջոյ, Ատրպէյճանին հատուցելը իհարկէ շատ լաւ է, բայց մենք ունենք ամեն մի զինուորի կեանքի վրայ դողալու խնդիրը:

Բացի այդ, այստեղ զուտ քանակական յարաբերութեան խնդիր չէ: Նաեւ հոգեբանութեան հարց է: Երբ զինուորը զգում է, որ բանակային ղեկավարութեան համար, զինուժի հրամանատարութեան համար մարդը, զինուորը ոչ թէ գործիք է, այլ ինքնին արժէք, եւ ոչ թէ արժէք է որպէս գործիք, այլ արժէք է որպէս մարդ, ապա այդ զինուորը բոլորովին այլ հոգեբանութեամբ է մօտենում իր մարտական առաքելութեանը եւ անգամ մարտական կենցաղին:

Զինուորին որպէս արժէք դիտելը զուտ բարոյախրատական հարց չէ: Այստեղ խնդիրն այն է, որ զինուորը այլոց պաշտպանող մարդ է, եւ այդ մարդը այլոց պաշտպանելու հարցում կարող է առաւել արդիւնաւէտ գործել միմիայն սեփական պաշտպանուածութեան առաւելագոյն մակարդակի պայմաններում: Այսինքն, կեանքը զոհելու փիլիսոփայութիւնից թերեւս հարկ է որոշակիօրէն վեր կանգնել եւ այսպէս ասած արդիականացնել այդ փիլիսոփայութիւնը եւ առաջնորդուել նրանով, որ զինուորը պէտք է իր կեանքը ապահովի, որ կարողանայ նաեւ ապահովել իր թիկունքում գտնուողների կեանքը:

Երբ զինուորը տեսնում է, որ ինքը դիտւում է ընդամէնը որպէս գործիք, ոչ թէ որպէս արժէք, որը պէտք է այլ մարդկանց պաշտպանի նախ եւ առաջ իր իսկ պաշտպանուածութեան ապահովման միջոցով, նրա մօտ թերեւս էականօրէն նուազում է ինքնայարգանքի աստիճանը, ինչն էլ ինքնաբերաբար ազդում է թէ ծառայակիցների, թէ հրամկազմի, թէ ընդհանրապէս իր պաշտպանութեանը վստահուած պետութեան ու հասարակութեան հանդէպ յարգանքի վրայ:

Սրանք թերեւս միգուցէ բաւական խորքային խնդիրներ են, որոնք առաջին հայեացքից կարող են քիչ ուղղակի կապ ունենալ դիւերսիոն միջադէպի եւ ողբերգութեան հետ, դրա պատճառների կամ մոտիվի հետ: Բայց, թերեւս անվիճելի է, որ մեր գլխաւոր անելիքը մեր իսկ ձեռքում է, զինուժի որակական, հոգեբանական եւ տեխնոլոգիական կատարելագործման հարթութիւնում, երբ սահմանային վտանգաւոր հատուածներում զինծառայողները կ՚ունենան աննախադէպ տեխնոլոգիական հագեցածութիւն, հակառակորդի դիւերսիաներին առաւել արդիւնաւէտ եւ անկորուստ արձագանքելու համար: Դա ռազմավարական խնդիր է, որի լուծումը թերեւս կախուած է հէնց այն բանից, թէ որքանով է զինուորը արժէք որպէս մարդկային թանկ ռեսուրս, եւ որքանով է պետութիւնը ստանձնում այդ արժէքի պաշտպանութեան պատասխանատւութիւնը:

Ատրպէյճանը պէտք է դատապարտուի, ու պէտք է պատասխան տալ, եւ փառք բոլոր նրանց, ովքեր այդ պատասխանը Ատրպէյճանին պարտադրում են եւ կը պարտադրեն թէ դիւանագիտական, թէ ռազմական հարթութեան վրայ:

Բայց կան թերեւս պատասխաններ, որ մենք ինքներս պէտք է տանք մեզ, անաղմուկ, բայց անյետաձգելի պատասխաններ, որովհետեւ մենք պէտք է չսպասենք, որ Ատրպէյճանի ձեռքը կարող են բռնել: Եթէ հարկ է, մենք պէտք է արմատապէս վերանայենք պաշտպանութեան կառուցման մեր մօտեցումները բոլոր առումներով: Ամենակարեւորը, գոնէ այդ հարցում՝ զինուորին որպէս մարդ արժէք հռչակելու եւ այդ արժէքի պաշտպանութեանը հնարաւորինս անմնացորդ նուիրուելու հարցում չխաբենք որեւէ մէկին, լինենք բացառապէս ազնիւ:

massispost.com
daily news updates

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES

New York Life · Anthem · Blue Shield · Aetna · Health Net · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

### Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ

# ՄՈՒՐԱՏ ՏԷՐՏԷՐԵԱՆ

## (ԽՈՐՈԽՈՆՑԻ ՄՈՒՐԱՏ, Ս. ՄՈՒՐԱՏ)

**ՏՈՔԹ. ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ**

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան մարտական գործիչներու եւ կազմակերպիչներու փաղանգին կը պատկանի Խորոխոնցի Մուրատ (Ս. Մուրատ):

Ս. Մուրատ ծնած է Սեբաստիոյ Խորոխոն գիւղը:

Պատանի տարիքին ամբողջ ընտանիքով կը տեղափոխուին Կ. Պոլիս: 1896ին, Պապ Ալիի ցոյցին յաջորդող թրքական վայրագութիւններուն զոհ կ՚երթան Ս. Մուրատի հայրն ու կրտսեր եղբայրը: Աւելի ուշ՝ բժշկութիւն ուսանելու համար Ամերիկա մեկնած մեծ եղբայրը զոհ կ՚երթայ Թոքախտի: Ս. Մուրատ կը մնայ իր մօր հետ:

Կը յաճախէ ամերիկեան Ռապըրթ Գոլէճը: Երիտասարդութեան սանդխամատին կը մտնէ Հնչակեան կուսակցութեան շարքերը: Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ Վարիչ Մարմինը, ուսման համար Ս. Մուրատը կը ղրկէ Լոնտոն, ուր ան իր մասնակցութիւնը կը բերէ կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան աշխատանքներուն:

Ի տես Ս. Մուրատի կարողութիւններուն, Կեդրոնական Վարչութիւնը Ս. Մուրատը որպէս լիազօր գործիչ կը ղրկէ Պարսկաստան, փոխարինելու համար Փարամազը՝ որ իր խումբով արդէն անցած էր Վան:

Պարսկաստանի մէջ Մուրատ կը ստանձնէ Փայաջուկ գիւղի դպրոցին աւագ ուսուցիչի պաշտօնը եւ միաժամանակ կ՚ունենայ կուսակցական-կազմակերպչական արդիւնաւէտ գործունէութիւն:

Այդ շրջանին, Հնչակեան կուսակցութեան գործունէութեան կարեւոր բնագաւառներէն էր զէնքի եւ զինամթերքի մէկտեղումը Պարսկաստան, այդ՝ Արեւմտահայաստան տեղափոխելու հեռանկարով: Մուրատ անձնապէս կը գլխաւորէ այդ աշխատանքը: Պարսկաստանի շրջանի հնչակեան յայտնի ղեկավարներէն Ալեքսանտր Տէր Վարդանեան կը վկայէ. «Զինեալ խումբը զէնքերու փոխադրութեան գործը կը տանէր ձմեռ ժամանակ, կառավարութեան լրտեսներու աչքէն հեռու մնալու համար: Անգամ մը զէնքով բեռնաւորուած, ռուսական սահմանէն՝ Արաքս գետին վրայէն՝ կ՚ուզեն անցնիլ: Գետը սառած կ՚ըլլայ: Մեր շալակաւորները ապահով զգալով սառի կարծրութիւնը վրայէն կը քալեն: Գետին կիսուն սառը կը կոտրի եւ շալակաւորները կ՚իյնան ջուրը: Բաւական չարչարուելէ վերջ, դուրս կու գան, բայց մինչեւ ցամաք ելլելը արդէն բոլորն ալ կը դառնան սառէ-մարդ: Ահագին տառապանքով անոնք կը շարունակեն իրենց ճամբան մինչեւ կը հասնին որոշուած սահմանամերձ գիւղ մը...: Ս. Մուրատի եւ ընկերներու ոտքերը կը դնեն տաւարի աղբի մէջ, որպէսզի մոյկերը կակուղնան, բայց այդքանով ալ չէր վերջանար տղայոց մռմուռը: Ս. Մուրատին գուլպաները գրեթէ միսին միացած կ՚ըլլան: Մինչեւ գուլպաները կը փրցնեն՝ ոտքերու կաշիներն ալ հետը կը փրթին, որու հետեւանքով անոր ֆիզիքականը բաւական կ՚ազդուի եւ ամիսներով կը տառապի, մինչեւ որ նոր կաշի կու գայ եւ զգայնութիւնն ալ կը վերահաստատուի» (1):

Այդ շրջանին, հնչակեան ֆետայական խումբերը կեդրոնացած էին Պարսկաստանի կարգ մը հայկական գիւղերուն մէջ՝ Փայաջուկ, Սաւրա, Սալամերիկ եւայլն, ինչպէս նաեւ պարսկա-թրքական սահմանագիծին վրայ: Հնչակեան խումբերու ընդհանուր պատասխանատուն էր խմբապետ Աւօն (Աւետիս Գասպարեան): «Ս. Մուրատի անմիջական աջակիցն ու զինակիցն էր խմբապետ Աւօն: Անոնք զիրար կը լրացնէին եւ միասին անպարտելի ույժ մը կը ներկայացնէին: Սալմաստցիք չափազանց կը յարգէին եւ կը սիրէին այդ երկու տիպար յեղափոխականները եւ անոնց հեղինակութիւնը շատ մեծ էր բոլոր գիւղերուն մէջ»:(2) Դժբախտաբար, այդ շրջանին հնչակեան եւ դաշնակցական «զինուորներուն» միջեւ նաեւ տեղի կ՚ունենային բախումներ: 1899 Սեպտեմբերի երեկոյ մը, երբ Մուրատ եւ Աւօ կազմակերպչական գործերով Փայաջուկէն կ՚ուղղուէին դէպի Սաւրա, դառանակալ գնդակներու տարափ մը կը տեղայ անոնց վրայ: Աւօ կը նահատակուի իսկ Մուրատ վիրաւոր վիճակի մէջ դիրք կը գրաւէ փոսի մը մէջ ու կը դիմադրէ (3): Աւոյի այնտեղի նահատակութիւնը ծանր հարուած էր հայ ազատագրական շարժման: Ան մշեցի քաջ կռուող մըն էր, Սասունի, Կ՚ Պոլսոյ եւ Կովկասի մէջ մասնակցած էր յեղափոխական շարժման, Փարամազի խումբով անցած էր երկիր ու գործած Վանի մէջ, վիրաւորուած ու բանտարկուած: Աւոյի յանդուգն մէկ գործն ալ կ՚ըլլայ իր սպանութենէն շուրջ տարի մը առաջ: Ինը հոգինոց դաշնակցական ֆետայիներու խումբ մը կ՚անցնի Պարսկաստան եւ Մելհամ գիւղին մէջ մատնուելով կը ձերբակալուի, պարսկական իշխանութիւնները, հայ ֆետայիներուն հետ աննախընթաց եւ ամբողջապէս անբացատրելի հաշուեյարդար կը տեսնեն գլխատելով զանոնք (4): Աւօ վրէժխնդիր կ՚ըլլայ մատնիչ Զաքէին հանդէպ եւ գիշեր մը մտնելով անոր տունը կը սպաննէ զայն ու ընտանիքին բոլոր անդամները:

Պարսկաստանի շրջանի հնչակեան ծանօթ գործիչներէն Վահան Մարսեանի վկայութեամբ «Մուրատ լման չապաքինած, սկսած էր ուսուցչական գործին, երբ ենթարկուեցաւ երկրորդ մահափորձի մը»: Դպրոցի բակին մէջ, դաշոյններով զինուած խումբի մը կողմէ յարձակման կ՚ենթարկուի, բայց պատահականօրէն վրայ հասած ընկերներէն մէկուն հետ կը դիմադրեն եւ յարձակողները փախուստի կը մատնեն, անոնցմէ մի քանին վիրաւորելէ ետք: (5):

Ս. Մուրատ «մասնաճիւղերու գործերու զարկ տալու համար» կ՚այցելէ Թաւրիզ եւ Էնզելի: (6):

Վ. Մարսեան կ՚ընէ նաեւ այլ ուշագրաւ վկայութիւն մը գրելով թէ «Սեբաստացի Մուրատը (չշփոթել Մուրատ Խրիմեանի հետ-Ե.Ճ.) որոշ գործի համար Կովկաս կանչուելով կը ղրկուի Տաճկաստան»: Ի՞նչ գործով Մուրատ կը ղրկուի Տաճկաստան, դժբախտաբար այս մասին, ամբողջական տեղեկութիւններ չկան. միայն Թէոդիկն է որ կու տայ ուշագրաւ բացատրութիւն մը գրելով. «Կը վարէ մարտական խումբեր Պարսկաստան եւ Թուրքիա, մանաւանդ այն արշաւախումբին որ կ՚անցնէր Հայաստան, երբ Անդրանիկի 1904ի, Սասնոյ շարժումներէն յետոյ՝ այդ շրջանի ժողովուրդը կը մնար անպաշտպան»: (7)

Ըստ երեւոյթին Մուրատ երկար չի մնար Արեւմտահայաստանի մէջ, որովհետեւ 1905ին, հայթաթարական բախումներուն ժամանակ, ան կ՚երեւնայ Թիֆլիսի մէջ, Սոլոլակ փողոցի ինքնապաշտպանական դիրքերուն վրայ: Հաւանաբար այդ շրջանին է, որ Մուրատ կը ծանօթանայ ու կը մտերմանայ նախկին հնչակեան, ապա ՌՍԴԲԿ-ին միացած եւ աւելի ուշ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի (ՀՕԿ) նախագահ Գրիգոր Վարդանեանին հետ որ իր մասին կը գրէ. «Ս. Մուրատ մեր տան յարգամեծար հիւրն էր: Այս տողերը գրելու պարագային աչքիս առջեւ կու գայ իր պարթեւ հասակը, ազնուական դիմագիծը, որու համար չեմ կարող լացս բռնել: Արցունքոտ աչքերով կը գրեմ այս տողերը, ա՜խ թէ պատեհութիւն ունենայ զինք ներկայացնելու իր հարուստ գործունէութեամբը, որ քիչերու վիճակուած էր» (8)

Օսմանեան Սահմանադրութենէն ետք Մուրատ կը վերադառնայ Կ. Պոլիս ու կը շարունակէ ազգային-կուսակցական գործունէութիւնը: 1909ին կը մասնակցի ՍԴՀԿ Կ. Պոլսոյ 6րդ համագումարին ինչպէս նաեւ Տաճկաստանի շրջանի պատգամաւորական ժողովներուն: Կ՚ընտրուի ՍԴՀԿ Տաճկաստանի Վարիչ մարմնի ադամ:

1911 Մայիսին, Մուրատ կ՚ընկերանայ Ստեփան Սապահ Գիւլեանին դէպի Փոքր Հայք կատարած անոր քարոզչական-կազմակերպչական ուղեւորութեան, որ կը տեւէ շուրջ չորս ամիս: Այդ ընթացքին անոնք կ՚այցելեն նաեւ Մուրատի ծննդավայրը՝ Սեբաստիա ու ինչպէս կը վկայէ Ս. Սապահ Գիւլեան, երբ կը մօտենան Սեբաստիոյ. «Ընկ. Մուրատը սկսել է իր ծննդավայրի հոտը առնել. ընկել է հոգեկան մի ալեկոծ վիճակի մէջ, իր կերպարանքը թէ տխրութիւն, թէ ուրախութիւն է արտացոլացնում: Հոգւոյ երկու լարերն էլ միաժամանակ թրթռում են: Ու երգում է իր մանկութեան ժամանակից սովորած Քէօռ-Օղլու երգը, որի բերդը ժամանակին դրուած է եղել այդ լերան գագաթի վրայ, հետքերը տակաւին նշմարւում են: Մուրատ երգում է մելամաղձոտ, ուժեղ, հնչուն ձայնով, աչքերին թէեւ արտասուք չկայ, բայց որոշ է՝ հոգին լալիս է, որքան աշխատում է իրեն պահել՝ անկարելի է լինում, կուրծքի ելեւէջը, երգի ոլորակները ամէն ինչ յայտնում են...« (9): Սեբաստիոյ մէջ, Մուրատ հնչակեան հին եւ յանդուգն ֆետայի Բարսեղ Դարբինեանի հետ կ՚այցելէ շրջակայ գիւղերը «կազմակերպելու եւ ինքնապաշտպանութեան վերաբերեալ պէտք եղած միջոցները ստեղծելու՝ այդ մասին մշակուած ծրագրին համաձայն»: (10)



Սեբաստիա այցելութիւնը ճակատագրական կ՚ըլլայ Մուրատին համար: Ան կը ծանօթանայ Նազենի Դարբինեանին, կ՚ամուսնանայ անոր հետ եւ 1913ին կը հաստատուի Սեբաստիա: Հոն եւս Մուրատ կը շարունակէ իր ազգային-հասարակական գործունէութիւնը: Սեբաստիոյ Ազգային Առաջնորդարանին կողմէ կը նշանակուի կրօնական ժողովի ատենապետ:

Ս. Մուրատ աւելի շատ ծանօթ կ՚ըլլայ որպէս զէնքի մարդ՝ քան գրչի: Ան շատ քիչ կ՚օգտագործէ գրիչը որպէս պայքարի միջոց: Այդ քիչ պարագաներուն սակայն, անոր գրիչը կ՚ըլլայ խիստ ու հատու: 1912ի օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն մասին անդրադառնալով, ան Կ. Պոլսոյ Կուսակցութեան օրկան «Նոր Աշխարհ» օրաթերթին մէջ կը գրէ. «Այն բերանները, որոնք դեռ մինչեւ երէկ Իթթիհատը կը փառաբանէին, այսօր անէծք կը կարդան: Բայց ասիկա անկեղծութեան յայտարար նշան մը չէ: ... Կ՚ըսեն, թէ Իթթիհատը զիրենք խաբեր է եւ հայ ազգի թուին համեմատ ներկայացուցիչներ չէ տուած: Քանի որ Իթթիհատն է փշրանքներ տուողը, բնական է որ նա պիտի տար այնքան, որքան որ ինքը կը ցանկար: ... Ե՞րբ, ո՞ր ժամանակ հայութիւնը որպէս մէկ ամբողջութիւն Իթթիհատին է դիմած եւ անոր հետ համաձայնութիւն կնքած: Հետեւաբար, ի՞նչ իրաւունքով կը պահանջուի այն, ինչ որ Իթթիհատը չէր կրնար տալ՝ իրաւունքի տեսակէտով որովհետեւ հայ ազգը իր հետ որեւէ համաձայնութիւն կնքած չէ: Եթէ խաբեբայ մը կայ, այն ալ Դաշնակցութիւնն է, որ Իթթիհատի հետ խօսեր է, որպէս հայ ազգի ներկայացուցիչ»: (11)

1914 Սեպտեմբերին Հնչակեան ղեկավարներու ձերբակալութիւնը զէշ նախազգացումներով կը համակէ Սեբաստիան: «Սեբաստիան չէր քնանար: Գնէլ վրդ. Գա-

Շար.ը էջ 19

# ՖՐԱՆՍԱՀԱՅ ՆԿԱՐԻՉ ԺԱՆ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ՝ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀՀ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆՈՒՄ



*Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան պատկերասրահում բացուեց ֆրանսահայ նկարիչ Ժան Գազանճեանի անհատական ցուցահանդէսը՝ «Երեւակայական բնապատկերներ» խորագրով: Մօտ մէկ ամիս ամերիկահայ համայնքի համար կը ցուցադրուեն նկարչի բնանկարները եւ քանդակները, որոնք, Ժան Գազանչճեանի տիկնոջ՝ Քրիստին Արժիլեի ներկայացմամբ, յիշողութեամբ ստեղծուած պատկերներ են՝ բնութեան ու շրջակայ միջավայրի շաղկապուածութեան արտացոլմամբ:*

*Ժան Գազանչճեանի անհատական ցուցահանդէսի բացմանը ներկայ էին Լոս Անճելոսի արուեստասէր հասարակութեան ներկայացուցիչներ՝ նկարիչներ, ռեժիսորներ, արուեստաբաններ, հասարակական եւ քաղաքական գործիչներ:*

*ՀՀ գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանը, ողջունելով «Հայաստանի տանը» Ժան Կազանչեանի ցուցահանդէսի բացումը, շեշտեց, որ հիւպատոսութեան այդ նախաձեռնութիւնը համայնքի նշանաւոր դէմքերին առաւելագոյն ճանաչելի դարձնելու քայլերից է, որը շարունակական կը լինի:*

*Ցուցահանդէսին ներկայ էր նաեւ USC պրոֆեսոր, սիւրռեալիզմի վերլուծաբան, քննադատ Գլորիա Օբերսթայնը: Նա, իբրեւ Ժան Գազանճեանի ստեղծագործութեան մեծ գիտակ, շեշտեց, որ նկարչի գործերում նկատելի են աղերսները հայ ժողովրդի պատմութեան ծանր դրուագների հետ, այդուհանդերձ, ըստ արուեստաբանի, Ժան Գազանճեանի արուեստը չի սահմանափակւում տարածութեան եւ ժամանակի միեւնոյն տիրոյթում: «Նա կարեւոր ասելիք ունի աշխարհին ու մարդկութեանը՝ արդիական բոլոր ժամանակներում:», ասաց արուեստաբանը:*

*Ժան Գազանճեանի կինը՝ արուեստաբան Քրիստին Արժիլեն, ով ֆրանսացի յայտնի կոլեկցիոներ, դադաիզմի եւ սիւրռեալիզմի քարոզիչ Պիեռ Արժիլեի դուստրն է, համարում է, որ Կազանչեանը սյուրռեալիզմի հետեւորդ է, ով կրում է հայկական երեւակայական մտածողութիւնը՝ արտայայտուած արուեստի միջազգային լեզուով:*

*Յայտնի նկարիչը բազմիցս ցուցադրուել է աշխարհի շատ երկրների հեղինակաւոր սրահներում: Ժան Կազանչեանը ծնունդով մուսալեռցի է, մանկութիւնն ու պատանեկութիւնն անցկացրել Լիբանանում, երկար տարիներ ապրել Ֆրանսայում: Այժմ ապրում է ԱՄՆ-ում:*

# «ՍՈՒՐԻԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՎԻՃԱԿԸ ՆԵՐԿԱՅ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ»

*Սուրիական տագնապի ամէնօրեայ արհաւիրքը ապրող Միջին Արեւելքցին ընդհանրապէս եւ Սփիւռքահայը յատկապէս չի կրնար անտարբեր մնալ Սուրիահայ գաղութի ներկայ վիճակին դիմաց կամ անոր սպառնացող անորոշ ապագայով:*

*Օգտուելով Հալէպի Հայ Աւետարանական Էմմանուէլ Եկեղեցւոյ հովիւ, Վեր. Սերոբ Մկրտիչեանի այցելութենէն, Հարաւային Քալիֆորնիոյ Հայ Աւետարանական Եկեղեցիներու համախմբումը կազմակերպած է գաղութիս հետ հանդիպման երեկոյ մը նիւթ ունենալով «Սուրիահայ Գաղութին Վիճակը Ներկայ Իրադարձութիւններու Լոյսին Տակ»:*

*Հանդիպումը տեղի կ'ունենայ Երեքշաբթի Յունիս 12, 2012ի երեկոյեան ժամը 7:30ին Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Այվազեան սրահին մէջ: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել Ջաւէն Խանճեանին 818-679-4030 կամ Վեր. Ռազմիկ Մինասեանին 323-851-5265 թիւերով: Սիրով հրաւիրուած է Հարաւային Քալիֆորնիոյ հայ հասարակութիւնը:*


## ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
## ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
## ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680


# ՄԵՐ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ
# ՆԱՅԻՐԻ ՂԱՐԻՊԵԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

*Ուսումնական տարեշրջանն իր աւարտին հասնելով բազմահարիւր հայորդիներ շրջանաւարտ կ'ըլլան տարբեր մասնագիտութիւններով, Գալիֆորնիոյ պետական եւ անձնական համալսարաններէն:*

*Ուրախալի է տեսնել որ ոմանք գերազանց յաջողութեամբ կ'արժանանայ բացառիկ գնահատականներու եւ պարգեւներու: Այդպիսին է Նայիրի Ղարիպեանը որ վերջերս, պատուոյ յիշատակութեամբ, ընթացաւարտ եղաւ Western University of Health and Science բժշկական համալսարանէն: Ան արդէն սկսած է իր երեք տարուան փորձնական աշխատանքներուն, UCLA-ի Olive View բժշկական կեդրոնին մէջ:*

*Նայիրի Ղարիպեան եղած է գերազանցիկ ուսանողուհի թէ Փասատինայի Յովսէփեան վարժարանի եւ թէ Կլենտէյլի Հայ սքուլին մէջ: Ան անդամակցած է նաեւ ՍԴՀԿ «Կայծ» երիտասարդական Միութեան:*



*Կը շնորհաւորենք Նայիրին եւ իր ծնողները, մաղթելով նորանոր յաջողութիւններ:*

# ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀՀ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍ ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ



*Չորեքշաբթի, Մայիս 30, 2012-ին, նախապէս որոշուած ժամադրութեամբ, Հայկական Համագաղութային Մարմինի անդամներ՝ Խաչիկ Շահինեան, Վրոյր Պուլղուրճեան, Յովհաննէս Ահմարանեան եւ Անդրանիկ Շահինեան այցելեցին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճլըսի մօտ՝ հիւպատոս պր. Գրիգոր Յովհաննիսեանին որ ջերմ ընդունելութիւն ցոյց տուաւ եւ իր տեսակէտները յայտնեց միութեանս կողմէն արծարծուած հարցերու առնչութեամբ:*

*Հայկական Համագաղութային Մարմինը երկու գլխաւոր ծրագիրներ ներկայացուց որոնց վրայ արդէն մեծ աշխատանքներ կը տարուին:*

*ա) Փասատինայի մէջ Measure A-ի անցընումը Յունիս 5ի հանրաքուէով:*

*բ) Փասատինայի մէջ Ցեղասպանութեան հարիւրամեակի համագաղութային ոգեկոչումը որ հետեւեալ ծրագիրներով պիտի նշուի.*

*1. Rose Bowl-ի մէջ մեծ հանրահաւաք*

*2. Rose Parade Տողանցքի մէջ՝ հայերը բաժին պիտի ունենան*

*3 Pasadena Memorial Park-ին մէջ՝ կառուցել Ապրիլեան Եղեռնի յուշակոթող մը:*

*Պարոն հիւպատոսը քաջալերեց այս ձեռնարկները եւ իր աջակցութիւնը խոստացաւ որ այս հայանպաստ ծրագիրները յաջողութեամբ պսակուին:*




# Massis Weekly

Volume 32, No. 21 | Saturday, JUNE 9, 2012

## Deadly Fighting Between Armenian and Azerbaijani Forces

### Armenian Units Neutralize Azerbaijani Saboteurs Killing Five



YEREVAN -- One Armenian soldier was killed and two others wounded while repulsing an attack by an Azeri unit trying to infiltrate Nagorno-Karabakh positions at around 4 a.m. Wednesday morning from the contact point in Horadiz.

The press service of the Karabakh Defense Army reported that the aggression was stopped, with Azeris also suffering losses. It added that this is the fourth attempt in June alone by Azeri forces to penetrate the borders with Armenia and Karabakh.

A day earlier, an Azeri unit of 15 soldiers reportedly tried to infiltrate the Armenian border near the village of Voskepar in the Tavush province but withdrew after incurring heavy losses.

The Azerbaijani Defense Ministry said five of their soldiers were killed in what it described as an Armenian commando raid on its frontline positions in the western Gazakh district bordering Armenia's Tavush province.

Armenia's Defense Ministry confirmed deadly fighting in the area but denied any cross-border incursions by its forces stationed there. It said they only "neutralized" an Azerbaijani "sabotage group." "Nobody was killed or wounded on the Armenian side," added a ministry statement.

A similar attempt was foiled on June 4 when Azeri forces tried to infiltrate the Armenian border near the Berdavan and Chinari villages in Tavush. Three Armenian soldiers were killed during the incident and several others were wounded.

The Armenian Defense Ministry said the soldiers -- Hrach Sargsian, Zohrab Balabekian and Karen Davtian -- died while fighting back a cross-border incursion by Azerbaijani forces into the northern Tavush region.

"The sabotage advance was halted and the enemy was repelled, suffering casualties," read a ministry

Continued on page 4

## Armenia and Japan Sign Agreement on Nuclear Safety

TOKYO -- President Serzh Sarkisian met with Japanese Prime Minister Yoshihiko Noda on Wednesday during an official visit to Japan that focused on the development of bilateral ties and nuclear safety.

A joint statement signed by the two leaders after the talks said the Armenian government will use "the Japanese experience" in boosting the safety of operations of the nuclear power plant at Metsamor. It said Yerevan will specifically look into the "knowledge and lessons" learned from Japan's response to last year's explosions at the Fukushima Daiichi nuclear plant that followed a powerful earthquake.

"The prime minister of Japan pointed out that his country intends to share with the international community its experience in enhancing the safety of nuclear plants and the two sides stressed the importance of Armenia's cooperation with Japan for that purpose," Sarkisian's press office said in a separate press release.

The Fukushima disaster sparked renewed calls in and outside Armenia for Metsamor's closure. Local environmentalists argued that just like Japan, Armenia is situated in a seismically active region prone to catastrophic earthquakes.

Armenian government officials and nuclear experts dismissed such concerns, saying that Metsamor's Soviet-era reactor design is different from Fukushima's and that the facility is reliable enough to withstand a powerful earthquake.

Still, the Yerevan government responded to the Fukushima blasts by deciding in March 2011 to initiate a comprehensive international review of Metsamor's safety. The International Atomic Energy Agency (IAEA) subsequently sent ad hoc Operational Safety Review Team (OSART) to Armenia for a two-week inspection of the plant. The OSART concluded in June 2011 that the plant poses an "acceptable" level of risk to the environment.

The statement signed by Sarkisian and Noda said an Armenian government delegation will participate in an international conference on the fallout from the Fukushima disaster which Japan plans to hold in December.

## Secretary of State Clinton: Armenian-Turkish Relations Should be Normalized Without Preconditions



YEREVAN -- United States Secretary of State Hillary Rodham Clinton arrived in Armenia Monday afternoon for a quick visit as part of her seven-day seven-nation European tour also including the South Caucasus and Turkey.

The short trip was the opening leg of Clinton's second tour of Armenia, Azerbaijan and Georgia in two years. It involved talks with President Serzh Sarkisian and Foreign Minister Edward Nalbandian as well as an address to Armenian civil rights activists.

"We are pleased to see Armenia continue to work to strengthen your democratic institutions, to promote transparency, advance the rights of a free press, root out corruption, respect universal rights and freedoms," Clinton told a joint news conference with Nalbandian.

Clinton again endorsed official Yerevan's view that Turkey should stop linking parliamentary ratification of the U.S.-brokered normalization agreements signed with Armenia in 2009 to a resolution of the Nagorno-Karabakh conflict.

"We strongly support ratification of the Turkey-Armenia protocols without preconditions," she said. "We commend Armenia and President Sarkisian for the leadership they have shown on this issue."

"As I said when I was here two years ago, the ball remains in Turkey's court," stressed the chief U.S. diplomat.

Clinton further made clear that the United States will remain "very actively involved" in international efforts to improve Turkish-Armenian ties and end the Karabakh conflict. "There is no linkage between the protocols process and the Nagorno-Karabakh negotiations as they are separate," she said. "But we are equally engaged and pushing hard to try to achieve a peaceful resolution of the Nagorno-Karabakh matter."

**Turkey rebuffs US call to normalize relations with Armenia - page 2**

## Freedom House Annual Report: Armenia Ruled by Semi-Consolidated Authoritarian Regime

NEW YORK -- Armenia has semi-consolidated authoritarian regime, says newly released Freedom House's repot Nations in Transit 2012.

Nations in Transit is Freedom House's comprehensive, comparative study of democratic development in 29 countries from Central Europe to Eurasia.

Special attention in the report is drawn to electoral processes, civil society, independent media, local democratic governance, corruption and other factors.

The ratings of states are based on a scale of 1 to 7, with 1 representing the highest level of democratic progress and 7 the lowest. The Democracy Score is an average of ratings for the categories tracked in a given year.

Armenia's democracy score in 2011 is 5.39. The authors note improvements in combating corruption.

"E-government services reduced opportunities for bribery, while new regulations and stricter enforcement led to higher numbers of corruption lawsuits and fines against senior officials and large companies," the report says.

As regards other aspects, Armenia underwent no changes as compared with the last year.

# Iran, Armenia Reach Agreement on Building Meghri Power Plant



YEREVAN -- Iran and Armenia have reached an agreement for the construction of Meghri hydroelectric power plant over the Aras River which forms the common border between two countries.

The agreement was reached during Iranian Energy Minister Majid Namjou's one-day trip to Armenia on Saturday.

During the trip, Namjou conferred with his Armenia counterpart, Armen Movsisian, and the two sides agreed to begin the construction of the joint power plant on August 22, 2012.

According to the agreement, the hydroelectric power plant, which will straddle the border river, will have the capacity to produce 130 megawatts (MW) of electricity. The project is estimated to cost $350 million.

Construction of the power plant will begin simultaneously in Armenia's Meghri and Iran's Qarachilar regions.

Earlier in January, Mir Fattah Ghareh Bagh, the managing director of Iran Grid Management Company (IGMC), said the country's electricity exports to Armenia would increase upon the completion of the 400-kV power transfer line, which will connect Iran's electricity network to the Armenian city of Agarak.

According to Iranian Deputy Energy Minister Mohammad Behzad, the new power transmission line will take Iran's electricity to Georgia, Russia and Europe.

# U.S. Senate Majority Whip Dick Durbin Visits Armenia



YEREVAN -- Senator Dick Durbin, a Democratic leader in the U.S. Congress, visited Armenia on Friday for talks with the country's top leaders that reportedly focused on regional security.

Durbin, who is currently the Senate majority whip, held separate meetings with President Serzh Sarkisian and Foreign Minister Edward Nalbandian. He was also scheduled to meet Armenian female politicians and civic activists involved in Turkish-Armenian cross-border programs funded by the United States.

"The president and the U.S. senator discussed issues relating to the development of U.S.-Armenian relations and current affairs and challenges in the region," Sarkisian's press office said in a statement. It gave no details.

A separate statement by the Armenian Foreign Ministry said Nalbandian praised Durbin for his desire to "familiarize himself with Armenia's approaches to regional issues." Nalbandian also briefed him on recent developments in the Nagorno-Karabakh peace process.

As well as being the second-highest ranking member of the upper house of Congress, Durbin is a member of the Senate Foreign Relations Committee. He also sits on its Subcommittee on European Affairs.

Both Sarkisian and Nalbandian were reported to thank the Illinois senator for supporting congressional draft resolutions on Armenian Genocide.

The Armenian president also commended "Armenia's friends in the U.S. Senate" for advocating financial and other assistance to his country which he said has had a "great significance for Armenia's development."

The U.S. Embassy in Yerevan said earlier in the day that "domestic issues" will also be on the agenda of Durbin's talks. The official Armenian sources reported no such discussions, however.

# Tigran Sarkisian Reappointed Prime Minister of Armenia



YEREVAN -- President Serzh Sarkisian has reappointed Tigran Sarkisian as Prime Minister and head Armenia's new government that will be formed later this month.

The presidential press service said in a terse press release on Saturday that the head of state signed the reappointed decree "based on paragraph 4 of Article 55 of the Constitution of the Republic of Armenia."

Tigran Sarkisian (no relation to President Sarkisian), 52, has led the Armenian government since April 2008. Before that he headed the country's Central Bank for 10 years. Tigran Sarkisian joined the ruling Republican Party of Armenia (RPA) in November 2009.

The Prime Minister and all members of his cabinet submitted their resignations to President Sarkisian as the new Armenian parliament elected on May 6 held its opening session on Thursday. Under the Armenian constitution, the head of state has ten days to appoint a new prime minister. The new government is to be formed within the following 20 days.

President Sarkisian will begin on Saturday consultations with senior lawmakers from the RPA and the Orinats Yerkir Party, its junior partner in the new ruling coalition, on the government's composition.

The two parties signed a new power-sharing deal earlier this week. Orinats Yerkir is expected to retain control of three ministerial portfolios.

# Hürriyet Daily:

# Turkey Rebuffs US Call to Normalize Relations with Armenia

ANKARA / YEREVAN -- Ankara has rebutted a statement by the United States calling on Turkey to take steps to normalize its relations with Armenia, citing the Armenian Constitutional Court's previous rulings on the two countries' diplomatic protocols.

"Turkey's position on the issue is clear," a Turkish diplomat told the Hürriyet Daily News, adding that the Armenian court's Jan. 12 decision established that the protocols conformed to the country's constitution.

U.S. Secretary of State Hillary Clinton urged Turkey to normalize relations with Armenia, speaking to journalists in Yerevan on June 4, saying "the ball is in Turkey's court."

In the Armenian court's decision about the constitutionality of protocols that could pave the way for diplomatic relations with Turkey, the Armenian Constitutional Court's reference to the 1915 killings of Armenians at the hands of the Ottoman Empire has drawn ire from Ankara. The reference to the killings in the ruling was against the spirit of the normalization process with Yerevan, Prime Minister Recep Tayyip Erdogan said after the Armenian court's 2010 ruling. "We have never taken the protocol to our Constitutional Court. We took it directly to our Parliament, without making changes. We didn't employ a mediator on the text. We didn't carry out any read-between-the-lines operations. This is proof of our sincerity. Armenia has tried to change the text," Erdogan said.

The fifth article of the court's ruling makes reference to Armenia's declaration of independence in a manner that angered Turkey, while the document's 11th paragraph says, "The Republic of Armenia stands in support of the task of achieving international recognition of the 1915 genocide in Ottoman Turkey and Western Armenia." The accords, signed by the foreign ministers of Turkey and Armenia in October 2009, need parliamentary approval in both countries for ratification.

Turkey and Armenia currently have no diplomatic relations, as Ankara closed its border with the country in 1993 because of its war with Azerbaijan over the disputed region of Nagorno-Karabakh.

In 2009, the Turkish and Armenian foreign ministers signed protocols to establish diplomatic ties and reopen their shared border. The protocols also called for a joint commission to examine the two countries' shared history. Along with the Armenian court's decision, the normalization process stalled after Turkey faced a backlash from its traditional ally, Azerbaijan, and opposition at home.

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# New Book Exposes Forced Turkification of Jews

Their Fight against Anti-Semitism, and Turkish-Jewish Leadership Lobbying against Recognition of Armenian Genocide

TORONTO -- The Zoryan Institute has announced the translation and publication of a new book by noted author Rifat Bali, Model Citizens of the State: The Jews of Turkey during the Multi-Party Period (Fairleigh Dickinson University Press, Rowman & Littlefield Publishing Group, 2012).

This book provides an exposé of the treatment of the Jewish community in Turkey from 1950 to the present, their fight against anti-Semitism, the struggle for their constitutional rights, and the attitude of the Turkish state and society towards these problems.

In a review of the Turkish edition that appeared in the Armenian Weekly, Turkish journalist Ayse Gunaysu and a member of the Committee Against Racism and Discrimination of the Human Rights Association of Turkey (Istanbul branch) since 1995, described the book as "groundbreaking . . . unearthing facts and first-hand accounts that unmistakably illustrate how the Turkish establishment blackmailed the leaders of the Jewish community—and through them Jewish organizations in the United States—to secure their support of the Turkish position against the Armenians' campaign for genocide recognition . . . The book also offers rich material about how Turkish diplomats and semi-official spokesmen of Turkish policies, while carrying out their lobbying activities, threatened both Israel and the U.S. by indicating that if the Jewish lobby failed to prevent Armenian initiatives abroad—Turkey might not be able to guarantee the security of Turkish Jews . . . It has been a routine practice for Turkish authorities to invariably deny such threats. However, Bali's industrious work in the archives reveals first-hand accounts that confirm these allegations."

In explaining his motivation for writing this book, Bali states. "There are a number of facts which triggered my starting to research the history of the Jews in the Turkish Republic. They can all be summed up in the fact that I was tired of listening to and reading the rosy narrative that was repeated over and over by the leaders of the Turkish Jewish community, as well as by Turkish intellectuals, politicians and historians. The same narrative was also predominant outside Turkey. I wanted to discover what was really behind this rhetoric".

Bali details how, despite the attempt of Jewish community leaders in Istanbul to fit into the mold of the "model" Turkish citizen as defined by Kemal Ataturk, and regardless of the official government policy toward the Jewish community, the anti-Semitic attitudes of the majority Muslim population in Turkish society were ever present.

The book describes how, initially, the Jewish community received similar treatment by the government of Turkey and had similar problems, fears and reactions as the Armenian and Greek minorities during the Single Party period, 1923-1949, to such things as the Capital Tax Law and policy of Labor Battalions. During the first two decades of the Multi-Party period, it endured the September 6, 1955 pogrom, the May 27, 1960 revolution, and the 1971 military coup. All three minorities suffered equally from these critical events, with loss of life and property and consequent emigrations to Greece, Israel, Europe and North America.

Bali explains how a shift in the Turkish state's treatment of its Jewish citizens started in the late 1960s and early 1970s due to three pivotal events outside of Turkey: the 1967 Israeli Six-Day War, the 1974 Turkish invasion of Cyprus, and the movement for international recognition of the Armenian Genocide. He shows that the Turkish government in the 1970s reversed its policy of prohibiting minorities' links to outside organizations by encouraging the Jews of Turkey to connect with American Jewish organizations, once it realized the importance of American Jewish political lobby groups. Since then, Turkey has adopted a policy of utilizing the American Jewish lobby against the Greek lobby to lift the Cyprus related arms embargo, and against the Armenian lobby to further its genocide denial policies. Bali details efforts to distance the American Jewish community from the Armenian community by propagandizing that the Armenian Genocide is a non-truth, or that whatever may have happened in 1915 it can not be compared to the Jewish Holocaust and therefore can not be called genocide, and that Turks have been very tolerant and friendly to Jews since their expulsion from Spain in 1492.




Bali illustrates that with this new policy, successive Turkish governments obtained the cooperation of Turkish Jews to convince the American Jewish lobbies to actively support pro-Turkish measures, including fighting against Armenian Genocide resolutions in the US Congress, excluding the Armenian Genocide from the Holocaust Museums in Washington and Los Angeles, prohibiting papers on the Armenian Genocide from being presented at Israeli Holocaust conferences, prohibiting the showing of Armenian Genocide related movies in US and Israel, etc. The tactics used by Turkish governments included financial assistance, economic concessions and other privileges, but also veiled threats that lack of cooperation by the Jewish lobby, the State of Israel, or Turkish-Jewish leaders would jeopardize the safety and economic well-being of the Jews in Turkey.

When asked about the possible effect his research could have, Bali answers, "I do not believe that the book will have any sort of negative impact on Israeli-Turkish and/or Turkish-Jewish relations. Real politics and strategic concerns always dominate and even embellish past history. However I hope that at last the English-speaking public will have the opportunity to read the "real" story of Turkish-Jewish relations instead of an embellished one".

In documenting the Turkish state's manipulation of its vulnerable Jewish minority and their acquiescence, this book serves as a valuable case study of how Realpolitik in domestic politics and foreign relations distorts the truth and how coercion by the powerful contributes to the violation of collective human rights. It will be of interest to academics and students of non-Muslim minorities in Turkey, political lobbyists in America, Israeli policy-makers, as well as to the Jewish, Greek and Armenian communities around the world.

Rifat N. Bali, born in 1948 in Istanbul, is an independent scholar specializing in the history of Turkish Jews and an associate member of the Alberto-Benveniste Center for Sephardic Studies and the Sociocultural History of the Jews (Ecole Pratique des Hautes Etudes/CNRS/ Université Paris-Sorbonne). He is the winner of the Alberto Benveniste Research Award for 2009 for his publications on Turkish Jewry.

For more information contact the Zoryan Institute by email zoryan@zoryaninstitute.org or telephone 416-250-9807.









## Dr. Aslanian Installed as Hovannisian Chair in Modern Armenian History

LOS ANGELES -- The Society of Aarmenian Studies has installed Dr. Sebouh David Aslanian as the Richard Hovannisian Chair in Modern Armenian History (endowed by the Armenian Educational Foundation) at the University of California, Los Angeles. Aslanian was selected for the chair in April 2011 and is the author of From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants From New Julfa (Univ. of California Press, 2011), which has received the PEN literary award for outstanding first book of the year from UC Press and the Houshang Poursharariati Iranian Studies Book Award from the Middle East Studies Association. Aslanian is currently gathering material for a book on the history of diasporic Armenian print culture.



Born and raised in Ethiopia, Aslanian is the grandson of Armenian immigrants who fled the Ottoman Empire in the 1890s. His maternal grandfather, George Djerrahian, co-founded the first privately owned printing press in Ethiopia in 1931. The family emigrated to the United States in 1976, on the heels of the Ethiopian Revolution, and then settled in the United Arab Emirates, where Aslanian attended middle school, before moving to Canada.

After completing his undergraduate degree at McGill University in Montreal, Aslanian received his Ph.D. with distinction from Columbia University. Before joining UCLA's faculty, he taught at California State University, Long Beach; Cornell University; the University of Michigan; and Whitman College. From 2009 to 2010, Aslanian was a Mellon Foundation postdoctoral fellow in world history at Cornell.

Able to conduct research in a range of European languages (French, Italian and Spanish) as well as classical Armenian, Aslanian is fluent in the western and eastern dialects of modern Armenian. In addition, he is one of the few scholars active today who is able to conduct research in the dialect of Julfa — the home, until the early 17th century, of a group of Armenian merchants near today's republic of Armenia.

With the goal of illuminating the little-told history of French expansion into the Indian Ocean, Aslanian is now working on a microhistory of an Armenian merchant from Julfa, Marcara Avachintz, who in 1666 was appointed by Louis XIV and his minister of finance, Jean-Baptiste Colbert, as the first regional director in the Indian Ocean and Iran of the newly created French East India Company.

He also is working on the history of the Santa Catharina, an Armenian-freighted ship that was seized by the British navy in 1748 against the backdrop of the War of the Austrian Succession. Using more than 2,000 pieces of family and mercantile correspondence that were on the ship at the time of its capture, Aslanian plans to illuminate the larger history of globalization in the Indian Ocean arena during the 17th and 18th centuries.

In addition, Aslanian is gathering material for a third book, on the history of diasporic Armenian print culture across a range of areas, including Venice, Amsterdam and Madras. In a related activity, he is organizing a two-day international conference at UCLA on the history of Armenian print culture. Entitled "Port Cities and Printers," the Nov. 10–11 conference will celebrate the 500th anniversary of the printing of the first Armenian book in Venice.

## Dream Fund at UCLA Contributes $100,000 to Merdinian School

LOS ANGELES -- The Board of Directors, Administration, and Faculty are proud to announce that the Dream Fund at UCLA has made a generous contribution of $100,000 to C. & E. Merdinian Armenian Evangelical School located in Sherman Oaks, CA.

We express our deep gratitude and appreciation to the Dream Fund at UCLA for the assistance that will enable Merdinian to continue its mission. The Merdinian School focuses on providing our students with a solid foundation for them to pursue their higher education goals and to grow and develop into successful, responsible citizens.

The Dream Fund was established by what Chancellor Gene Block called "the extraordinarily generous and inspirational gift" from Kirk Krikorian through the transfer of assets of the Lincy Foundation.

Chancellor Block recognized the philanthropic gift as crucial in helping UCLA ". . . to thrive as a center for transformational research, innovative instruction, and durable and effective community partnerships." The Merdinian School community is pleased and proud to be a part of this initiative.

**massisweekly.com**
**updated every Friday**

## Joyce Philibosian Stein Awarded Ellis Island Medal of Honor

NEW YORK -- Joyce Philibosian Stein, an ex-officio member of the Armenian Missionary Association of America (AMAA) Board of Directors, Co-Chair of the AMAA National Orphan and Child Care Committee, Trustee of the Stephen Philibosian Foundation and ex-officio member of the Board of Trustees for Haigazian University, was honored on May 12 by the National Ethnic Coalition of Organizations (NECO), sponsors of the Ellis Island Medal of Honor. The Ellis Island Medal of Honor was presented to Mrs. Stein on Ellis Island, where 12 million immigrants entered the United States from 1892 to 1954.

Each year since 1986, NECO has honored the nation's diverse past by sponsoring the Ellis Island Medals of Honor. The Medals of Honor pay tribute to the ancestry groups that comprise America's unique cultural mosaic. The Medals are presented on Ellis Island, in a dramatic ceremony, to American citizens from across the country for their outstanding contributions to their communities, their nation and the world.

Past Ellis Island Medal of Honor recipients include six Presidents of the United States, Nobel Prize winners, athletes, entertainers, and leaders of industry, education, the arts, government, media and others whose work has made a lasting impact on humanity. They are awarded to outstanding American citizens, from all walks of life, who have distinguished themselves through their significant contributions to this country. The Ellis Island Medal of Honor ranks among the nation's most prestigious awards. The United States Senate and House of Representatives have officially recognized the Medals of Honor, and each year the recipients are listed in the Congressional Record. To date, over 1,800 American citizens have received Ellis Island Medals of Honor.

Mrs. Stein is the daughter of the late Sirpuhe Philibosian Conte and Stephen Philibosian, a philanthropist, entrepreneur and a co-founder of Haigazian University in Beirut, Lebanon. Both having crossed the Ellis Island threshold, would be amazed to know their daughter was awarded this medal of honor. They were true Americans who in that spirit encouraged the very American pursuits of giving of oneself.

Mrs. Stein was born in New York City and attended Colby/Sawyer College, Southern Methodist University and



graduated from the University of Pennsylvania. She also holds an honorary degree from Haigazian University (LLD). She lived in St. Andrew's Scotland while her husband, Joe, attended St. Mary's College. She now resides with her husband in Indian Wells, CA. In keeping with her father's legacy, Mrs. Stein has wholeheartedly supported the AMAA and Haigazian University in leadership positions. Among her many other contributions to philanthropic causes, she served as a volunteer and major fundraiser for the Children's Hospital in Philadelphia and as Chair of the "Daisy Day" Fund, when President Dwight Eisenhower was the Honorary Chairman. She has also served as a member of the Support Committee of the Philadelphia Orchestra.

Her husband, Joe, represents AMAA in the United Armenian Fund and is involved in numerous other Armenian organizations and projects. Her daughter, Stephanie Landes, is a current member of the AMAA Board of Directors and her daughter, Tina Segel, is a member of Haigazian University Board of Directors. She also actively serves on the LA Child and Orphan Committee and has sponsored the annual Luncheon and Fashion Show. Mrs. Stein is actively involved in the lives of her six grandchildren.

"The AMAA congratulates Joyce on this very prestigious award,"said Levon Filian, Executive Director of the AMAA. "Joyce is a true leader who puts her heart and soul into each and every project to make the world a little better than how she found it."

## Deadly Fighting Between Armenia and Azerbaijan

**Continued from page 1**

statement. "The Armenian Armed Forces control the situation along the line of contact, carrying out actions commensurate with the situation," it said without elaborating.

The escalation of tensions along the Armenian-Azerbaijani border and near Karabakh comes amid a continuing regional tour by U.S. Secretary of State Hillary Clinton whose itinerary included Baku, on Wednesday.

Clinton said she was very concerned about "the danger of escalation of tensions and the senseless deaths of young soldiers and innocent civilians" she warned of possible "disastrous consequences" of escalating violence in the Nagorno-Karabakh conflict zone.

Speaking after talks with Azerbaijan's President Ilham Aliyev in Baku, Clinton said she is "deeply concerned about the danger of escalating tension, which could have unpredictable and disastrous consequences."

"This cycle of violence and retaliation must end, she said," according to the AFP news agency.

Armenian military authorities, meanwhile, reported continuing tension in the northeastern borderlands in Tavush where they said more shelling took place overnight.

# ՀԱԼԷՊ
## ՈՉ ԵՒՍ Է ԸՆԿ. ԲԺՇԿ. ՅՈՎԻԿ ՊԷՐՊԷՐԵԱՆ

### «Ծառերը ոտքի կը մահանան»

*Մայիս 16-ի արեւը վերջին անգամ պիտի ծագէր Յովիկին համար...*

*Մայիս 17-ի արեւը սեւ երիզով պիտի յայտնուէր Ս.Դ.Հ.Կ.-ի Հալէպի օճախին վերեւ...*

*Որքա՜ն անընդունելի, որքա՜ն անհաւատալի, բայց եւ այնպէս դաժան իրականութիւն էր՝*

*Ոչ եւս էր ընկեր Յովիկ Պէրպէրեան...*

*Անոր համար կեանքը վերջ գտած էր իր ճակատագիրը դարձած ազգային-գաղափարախօսական յանձնառութեան պատնէշին վրայ:*

*Ընկ. Յովիկ սրտահար կինար Ն.Ս.Մ.Մ.-ի ժողովասրահին մէջ ե՛ւ ներկայի, ե՛ւ յառաջիկայի աշխատանքային ծրագիրը, եւ անոր իրականացման միջոցն ու եղանակը ընկերներուն ներկայացնելէ անմիջապէս ետք...*

*«Ծառերը ոտքի կը մահանան», ինչպէս ծառատիպ Յովիկին մահը ....*

*Ճակատագրի քմա՞յքն էր, թէ անխուսափելիին խորհուրդը ....*

*Յետոյ, պահ մը անձկալի սպասումը անհնարին հրաշքին եւ հուսկ, ընկալումը դաժան իրականութեան .....*

*Մահը իրողութիւն մըն է լոկ անոնց համար, որ կը մեկնին անդարձ, մինչ մնացողները կը շարունակեն ապրիլ իրենց աննիւթացած սիրելիներուն հետ, կը շարունակեն յուսալ եւ աղօթել զանոնք գէթ իրենց երազներուն մէջ տեսնել, կը շարունակեն փարիլ տեսիլքին, կը շարունակեն իրենց սուգն ու տխրութիւնը լուալ անիրական ու անրջային այն աշխարհին մէջ, ուր յաւերժի ճամբորդները կ՛ապրին....*

*Ծանր է սիրելի մեռելներու բեռը ....*

*Դաժան է մանաւանդ ազգային -գաղափարախօսական յանձնառութեան պատնէշին վրայ ինկածներու կորուստը , որոնց անյետացումով մեր գոյապայքարը ծանր հարուած կը կրէ եւ մեր երթը քիչ մը աւելի կը դժուարանայ....*

*Իրական յաղթանակները՝ յաղթական ապրելով կ՛իրականանան:*

*Իրական յաղթանակները կ՛իրականանան նաեւ՝ երբ մեզմէ առյաւէտ հեռացած ազգանուէր ընկերներու փոխանցաջահը պինդ կը պահենք մեր ձեռքերուն մէջ, մեր գլխուն վերեւ եւ անոնց հոգիին կաթկթող լոյսով կը բոցավառենք մեր ներքին պայծառութեան հնոցը, հաւատալով , որ սարսափելին, ահարկուն՝ յեղակարծ մահը չէ , այլ միւսը՝ իբր մարդիկ ամէն օր, ամէն պահ իրենց մէջ տակաւ կը մեռցնեն մարդը ....*

*Ամէնադժուար բանը՝ մարդ ըլլալն է......*

*Ընկ. Յովիկ իր էութեան բաղկացուցիչ բջիջներով եղաւ այդ մարդը, եղաւ Կիլիկեան Կրթական Հաստատութեան պատուաբեր սանը, եղաւ Հ.Հ. գիտութեան օճախներէն վկայուած բժիշկը, եղաւ անկաշառ հայրենասէրը, եղաւ յանձնառու միութենականը, եղաւ Ս.Դ.Հ.Կ.-ի արժանաւոր գործիչ , ղեկավար , եղաւ անզուգական ամուսին , հայր , եղաւ անդաւաճան ընկեր, բարեկամ, մէկ խօսքով եղաւ ՄԱՐԴ.......*

*Մայիս 17-ին Հալէպի Հնչակեաններու օճախը նեղ կու գար սգակիր ընկերներու, հարազատներու եւ բարեկամներու հոծ բազմութեան, որոնք եկած էին իրենց յարգանքի տուրքը մատուցելու եւ վերջին հրաժեշտը տալու Ս.Դ.Հ.Կ.-ի դրօշով ծածկուած դագաղին մէջ յաւիտենական քուն մտած սիրելի Յովիկին.....*

*Քահանայ հայրերու աղօթքէն ետք, Կիլիկեան Կրթական Հաստատութեան Հոգաբարձութեան, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմի խօսքը ներկայացուց օրդ. Վարդուհի Ջաթալպաշեան, ապա արցունքոտ կշռոյթով Յովիկին գաղափարի ընկերները երգեցին «Տուր ձեռքդ ընկեր»ը ....*

*Յետմիջօրէի ժամը 4:00ին Յովիկին յուղարկաւորութիւնն էր, բազմահարիւր սգակիրներու մասնակցութեամբ թափորը ուղղուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցի, ուսամբարձ տարուող դագաղը կ՛առաջնորդուէր Հ.Մ.Մ.-ի փողերախումբին սգաւոր կշռոյթով, եկեղեցւոյ բակին մէջ դագաղը կը դիմաւորուէր Հ.Մ.Մ.-ի փողերախումբին սգաւոր կշռոյթով, եկեղեցւոյ բակին մէջ դագաղը կը դիմաւորուէր Հ.Մ.Մ.-ի պատուի կեցած սկաուտներով եւ արենոյշներով:*

*Ազգային-կուսակցական գործիչ ընկ. Յովիկ Պէրպէրեան արժանացաւ համազգային մակարդակով տեղի ունեցող յուղարկաւորութեան:*

*Թաղման կարգը կատարեցին Հալէպի հայ երեք համայնքապետերը, յանձինս՝ Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Տէր Շահան Ս. Եպս. Սարգիսեանի, Բերիոյ թեմի կաթողիկէ համայնքի գերապայծառ Պետրոս Արք. Միրիաթեանի եւ Սուրիոյ ու Յորդանանի Աւետարանական եկեղեցիներու համայնքապետ վերապատուելի՝ Յարութիւն Սէլիմեանի:*

*Ներկայ էին նաեւ Հ.Հ.Հալէպի գլխաւոր հիւպատոս՝ Կարէն Գրիգորեան, Հ.Հ. Տէր Զօրի Պատուոյ Հիւպատոս՝ Սուրէն Վարդանեան, Հ.Յ.Դ.-ի , Ռ.Ա.Կ.-ի եւ Հալէպահայ մշակութային, մարզական ու բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ.....*

*Եկեղեցիին մէջ ընթերցուեցաւ Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ Տէր Արմաշ Եպս. Նալպանտեանի Յովիկին տիկնոջ Յասմիկին, անոր զաւկին՝ Նարեկին եւ Կիլիկեան Կրթական Հաստատութեան Խնամակալութեան ուղղուած ցաւակցագիրը:*

*Ազգ. Գերեզմատան մէջ, յետ թաղման, եկեղեցական արարողութեան, Յովիկին գաղափարակից ընկերները Յովիկը յաւերժութիւն ուղղեւորեցին ազգային յեղափոխական երգերու թնդիւնով.....*

*Այդ պահուն Յովիկի շիրիմին հարեւանութեամբ բարձրացող անմահ քաններու յուշակոթողը արցունք ցայտեց ..... դեռ կանուխ էր անոնց միանալու ....*

*Փոխան գերեզմանատան Ս.Դ.Հ.Կ.-ի վարիչ մարմնի անունով ներկայացուելիք դամբանականը սգակիրներով խառնուած սրահին մէջ կարդաց Տօքթ. Ջատիկ Պալապանեան, ապա ընթերցուեցաւ Հ.Հ.Սուրիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Արշակ Փոլատեանի Ս.Դ.Հ.Կ.-ի Սուրիոյ Հիւսիսային շրջանի վարիչ մարմնին եւ Պէրպէրեան ընտանիքին ուղղուած ցաւակցագիրը:*

*Հուսկ, տեղի ունեցաւ հոգեճաշ:*

*Երազի եւ իրականութեան բաւիղներուն մէջ տարուբերուող սգակիրները ակամայ համոզուած էին, որ **ՈՉ ԵՒՍ ԷՐ ԸՆԿ. ՅՈՎԻԿ ՊԷՐՊԷՐԵԱՆ***

*Թղթակից*

# ԴԱՄԱՍԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ՀՈՂԻՆ ՅԱՆՁՆԵՑ ՆԱՀԱՏԱԿ ԼԵՒՈՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԸ



*29 Մայիս, 2012-ին, Հալէպի մօտ եւ Թուրքիոյ սահմանամերձ Աթարէպ շրջանին մէջ, դամասկահայ երիտասարդ եւ սուրիական բանակի զինծառայող Լեւոն Գույումճեանի (ծնեալ 1 Յունուար 1992-ին) ծառայած զօրամասը ենթարկուեցաւ հակակառավարական ուժերու լարած թակարդին, որու պատճառով նահատակուեցան 18 սուրիացի զինուորներ, որոնց կարգին նաեւ Լեւոն Գույումճեանը: Այսպիսով ան Սուրիոյ մէջ տեղի ունեցած դէպքերու հետեւանքով զոհուած չորրորդ հայ նահատակը դարձաւ: Նահատակին մարմինը Դամասկոս բերուեցաւ 30 Մայիս, 2012-ին:*

*Թեմիս Քահանայ Հայրերու առաջնորդութեամբ եւ Հ.Մ.Մ.-ի փողերախումբի պատւոյ շքերթի եւ նուագի ուղեկցութեամբ նահատակին մարմինը եկեղեցի բերուեցաւ, ուր կատարուեցաւ եկեղեցական կարգը: Նահատակ զինուորին դագաղը զարդարուած էր Սուրիական եւ Հ.Մ.Մ.-ի սկաուտական դրօշներով:*

*Երիտասարդ նահատակ Լեւոն Գույումճեանը վաղ տարիքէն անդամակցած էր Հ.Մ.Մ.-ի սկաուտական շարքերուն, դառնալով փողերախումբի պարտաճանաչ նուագող վայելելով իր ղեկավարներուն եւ շարքային ընկերներուն սէրն ու յարգանքը:*

*Թաղման տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի 31 Մայիս, 2012-ին, Դամասկոսի Առաջնորդանիստ Սբ. Սարգիս Եկեղեցւոյ մէջ: Արարողութիւնը գլխաւորեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Տէր Արմաշ Ս. Եպս. Նալպանտեանը, մասնակցութեամբ Դամասկոսի քոյր եկեղեցիներու Առաջնորդ Սրբազաններու եւ հոգեւորականներու, նահատակին զինակիցներու եւ դամասկահայ հոծ բազմութեան:*

*Յաւարտ եկեղեցւոյ արարողութեան յանուն Հ.Մ.Մ.-ի սկաուտութեան եւ Հ.Մ.Մ.-ի մեծ ընտանիքին խօսք առաւ Տիար ընկեր Վրէժ Պօյաճեանը, որ նահատակ շարքայինի կենսագրականը տալով, յայտնեց իր ցաւակցութիւնները:*

*Սրբազան հայրը իր սրտի խօսքով մխիթարեց նահատակին մօրն ու հարազատներուն: Ան շեշտեց թէ Լեւոնը ըլլալով սուրիացի հայ մը իր կեանքը զոհած էր իր Սուրիական հայրենիքին համար, որովհետեւ այս թանկագին հողն ու ասպնջական արաբ ժողովուրդը դարձած էին կեանքի ու փրկութեան պատճառն ու առիթը Թուրքին եաթաղանէն մազապուրծ եղած իր նախնիներուն համար: Եւ հետեւելով մեր գաղութի այլ զաւակներու օրինակին՝ ինչպիսիք են Զօրավարներ Արամ Գարամանուկեանը, Հրանդ Մալոյեանը եւ Ալպէր Քիլճեանը եւ այլեր, ան իր կեանքն ու արիւնը ի սպաս դրաւ Սուրիական հայրենիքի ապահովութեան եւ կայունութեան համար:*

*Սրբազան Հայրը նշեց նաեւ թէ մեր այսօրուայ նահատակ՝ Լեւոն Գույումճեան, երբեք պիտի չզլանար իր կեանքն ու արիւնը մատուցել իր մայր հայրենիքին Հայաստանին համար, երբ արեան կանչը հնչէր: Առաջնորդ Հայրը մասնաւորաբար ըսաւ. ,Վստահ եմ, որ երբ Հայաստանի պաշտպանութեան ահազանգը հնչէ, նահատակ Լեւոն Գույումճեան, նոյն նախանձախնդրութեամբ իր կեանքը պիտի տար Հայաստանի պաշտպանութեան համար: Արդարեւ ինք մեզի տուաւ իր կեանքը: Իսկ մենք ի՞նչ կրնանք տալ ...: Սիրելի Լեւոն, ես քեզի երեք սրբութիւններ կու տամ. առաջինը ափ մը հող պապենական մեր մայր Հայաստանէն: Երկրորդը՝ պուտ մը ջուր մեր հայրենիքի մեր պապերու սրբավայրերէն: Եւ երրորդը՝ Սբ. Էջմիածնէն բերուած օրհնեալ խունկ: Այս սրբութիւնները թաղեցէք իր գերեզմանին մէջ ...»:*

*Եկեղեցւոյ արարողութենէն ետք կրկին Հ.Մ.Մ.-ի փողերախումբի յուզիչ նուագակցութեամբ Նահատակին դիակը առաջնորդուեցաւ Դամասկոսի հայկական ազգային գերեզմանատուն ուր եւ յանձնուեցաւ հողին:*

*Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:*

---

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ՏՕՔԹ. ՅՈՎԻԿ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ վաղահաս մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալ այրիին, զաւկին, ընտանեկան պարագաներուն, Հալէպի Ն.Ս.Մ.Մ.ին եւ համայն հարազատներուն:**

# ՄԱՀՈՒԱՆ 60-ԱՄԵԱԿ (1952-2012)
# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴԵԱՆ
## Պատմագէտ եւ Երեւանի Պետական Համալսարանի Առաջին Տնօրէն (1873-1952)

*ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*



### Վախճանումը

*Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Ընծայարանի Ա կարգի ուսանող էի երբ դասի պահուն մեր մատենագրութեան ուսուցիչ Սիմոն Սիմոնեան տեղեկացուց դարասկիզբի ներհուն բանասէր եւ պատմագէտ Յակոբ Մանանդեանի մահը, 79 տարիքին, պատահած Երեւանի մէջ 1952 Փետրուարին: Սիմոնեանէն մնայուն կերպով կը լսէինք նոյն անունը յարատեւ զոր կը հնչէր լիաբերան իր թաւ ձայնով եւ շեշտով, բայց այս վերջին անգամ ցաւով եւ ափսոսանքով, միշտ յիշեցնելով անպայման կարդալ յայտնի պատմագէտ-փրոֆեսորին «Քննական Տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան» երեք հատորեակը որպէս հայ դասական մատենագիրներու պատմագրական ամենէն ճիշդ քննարկումը: Յիրաւի երբ յետագային իմ մատենագրական գործերուն ձեռնարկեցի, նոյն հատորները եղան գրադարանիս մնայուն աղբիւրները այնքան կենսական եւ ուսանելի մեր պատմութեան ամենէն թաքուն եւ չյայտնաբերուած բնագաւառներու ուսումնասիրութեան համար:*

*Մի քանի ամիս ետք, 1952 Յունիսին Անթիլիասի իր բնակարանին մէջ կը վախճանէր հայագիտութեան հսկայ մը եւս՝ յանձին Երանաշնորհ Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց Կիլիկիոյ Կաթողիկոսին: Երկուքին մահը անտա-րակոյս ծանր ճնշեց մեր ուսուցչին Սիմոն Սիմոնեանի վրայ որ հանգուցեալ Հայրապետին կողմէ իրեն որպէս գիտական աշխատակից կարգուած էր 1946-ին:*

*Ակադեմիկոս Յակոբ Մանանդեան իր նախկին տարիներու բեղմնա-ւոր պատրաստութեան եւ հեղինակութեան տարիներէն ետք, 1920 թուին Երեւան կը հաստատուէր եւ Խորհրդային Հայաստանի Պետութեան 1921 Յունուար 7-ի հրամանագրով Պետական Համալսարանի Տնօրէն (ռեկտոր) կը նշանակուէր, մնայուն կերպով վարելով հայ ժողովուրդի պատմութեան կաճառի վարիչի եւ դասախօսի, ինչպէս նաեւ արեւելագիտութեան եւ պատմագրութեան բաժնի պաշտօնները:*

### Սկզբնական Տարիները

*Յակոբ Մանանդեան, ծնած է 1873-ին Ախալցխա, եւ Թիֆլիսի իր բարձրագոյն կրթութենէն ետք մեկնած Գերմանիա եւ հետեւած Ենայի Համալսարանի պատմա-բանասիրական ճիւղին, ապա՝ Լայպցիգի եւ Ստրազբուրգի Համալսարաններէն ներս, հմտանալով լեզուաբանութեան, բանասիրութեան եւ տնտեսագիտութեան նիւթերուն մէջ, 1897-ին պաշտպանելով իր դոկտորական թեզը Ենայի Համալսարանի կաճառին առջեւ՝ 6-րդ դարու հայ պատմագիր Մովսէս Կաղանկատուացիի «Պատմութիւն Աղուանից Աշխարհի» երկին նուիրուած իր երկասիրութիւնը, տիրանալով փիլիսոփայութեան դոկտորի կոչումին: Մանանդեան տիրապետած է նաեւ կարգ մը լեզուներու՝ ռուսերէնի, ֆրանսերէնի, գերմաներէնի լատիներէնի եւ յունարէնի:*

*Գերմանիայէն դարձին, վկայուած եւ զինուած լեզուներու գիտելիքներով, Մանանդեան Հայրենիք կը վերադառնար Տ.Տ. Մկրտիչ Ա Խրիմեան Հայրիկ Կաթողիկոսի օրով, եւ 1900-1905 թուականներուն Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանին դասախօս կը կարգուէր իր տարեկից երախտաւորներուն հետ՝ Հ. Աճառեանի, Մ. Աբեղեանի, Ս. Մալխասեանի հետ միասին: Կը վարէր նաեւ «Արարատ» ամսագրի փոխ խմբագիրի պաշտօնը: Սերտած է Էջմիածնի Մատենադարանի ձեռագիրները եւ Հրաչեայ Աճառեանի հետ հրատարակած «Հայոց Նոր Վկաներ»ը: Լման 15 տարի ուսուցչական եւ պատմագրական մեծ վաստակ թողած է Մայր Աթոռէն ներս: Հոն աւարտած է 1911-ին «Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի» աշխատութիւնը: Տասը տարի հեռացած է Հայաստանէն եւ զբաղած որպէս հաւատարմատար-փաստաբան:*

### Մանանդեան Իրաւաբան

*Նիւթական անձուկ պայմաններ հարկադրեցին Մանանդեանը հետեւելու իրաւաբանութեան: Հայաստանէն մեկնած է այդ պատճառով եւ Դորպատի Համալսարանի իրաւաբանական ճիւղը աւարտելով 1909-ին վկայուած է ու մեկնած Պաքու ուր մինչեւ 1919 դատախազի օգնականի եւ ապա հաւատարմատարի պաշտօնները վարած՝ ափսոսանք պատճառելով Հայաստանի եւ հայագիտութեան ժամանակաւորապէս: Սակայն բարեբախտաբար Սովետական կարգերու հաստատումէն ետք վերադարձած է հայրենիք եւ կարգուած Երեւանի Պետական Համալսարանի առաջին տնօրէնը:*

*Մանանդեանի անունը լայն արձագանք գտած է Համալսարանէն եւ Պատմական Գիտութիւններու Կաճառներէն ներս իբրեւ գիտնական, քննադատ եւ աղբիւրագէտ պատմաբան, որուն հայ եւ օտարազգի ուսանողներ դիմած են հայ ժողովուրդի պատմութեան վաւերական ուսումնասիրութեան համար:*

### Համալսարանի Տնօրէն

*Իր կեանքի վերջին 30 տարիները եղան ամենէն բեղմնաւոր տարիները Երեւանի Համալսարանին համար ուրկէ երեք սերունդ եւ բազմաթիւ շրջանաւարտներ հասան իր ուսուցչութեան ներքեւ: Մասնաւորաբար այդ տարիներուն էր որ ստեղծագործեց եւ գրեց իր աննախընթաց պատմագիտական գիրքերը հետեւեալ կարգով: Անոնք կը մնան անժամանցելի եւ անփոխարինելի իրենց աժէքով եւ քննարկումեամբ, քանի որ ո՛չ ոք ձեռնարկած էր մեր հին մատենագրութեան մէջէն պեղել ու քննել տնտեսական, ճանապարհներու, առեւտուրի, տուրքերու, շինականներու, ճորտերու, հոգեւորականներու, «ազատ»ներու «ոստանիկ»-ներու եւ այլ տիրականներու միջնադարեան շատ բարդ եւ մանրամասն իրավիճակը: Յատուկ երախտիք կը պարտինք Փրոֆ. եւ գիտնական Յակոբ Մանանդեանին իր կատարած սպառիչ եւ մնայուն աշխատասիրութիւններուն համար:*

*1. «Յունաբան Դպրոցը եւ Նրա զարգացման շրջանները» (1928)*

*2. «Հայաստանի պատմութիւնը Թուրք-Թաթարական արշաւանքների շրջանում» (1922)*

*3. «Դիտողութիւններ հին Հայաստանի շինականների դրութեան մասին՝ մարզպանութեան շրջանում» (1925)*

*4. «Հայաստանի արքունի հարկերը մարզպանութեան շրջանում» (1926)*

*5. «Նիւթեր հին Հայաստանի տնտեսական կեանքի պատմութեան» (1927)*

*6. «Կշիռները եւ չափերը հնագոյն հայ աղբիւրներում» (1930)*

*7. «Հաաստանի քաղաքների, առեւտրի ու արհեստների զարգացումը Հայաստանում» (1930 ռուսերէն)*

*8. «Ֆէոդալիզմը հին Հայաստանում» (1934)*

*9. «Հին Հայաստանի գլխաւոր ճանապարհները ըստ Պեւտինգերեան քարտէզի» (1936)*

*10. «Քննական տեսութիւն հայ ժողովուրդի պատմութեան» 4 հատոր (1945, 1952, 1957,1960)*

*11. «Տիգրան Երկրորդը եւ Հռոմը» (1972)*

### Երկու Յայտնի Երկերը

*Վերեւի գործերէն երկուքը կը մնան գերազանց երկեր հայագիտութեան համար: «Քննական Տեսութիւն»ը հայ ժողովուրդի պատմութեան առաջնորդող հատորները կը հանդիսանան մեզի ծանօթ որեւէ հատորներէ առաջ եւ աւելի: Համալսարանական ուսանողներուն համար այդ հատորները կը մնան որպէս համադրեալ գիտական սկզբնաղբիւր ամենաճոխ հայ եւ օտարազգի աղբիւրներու վկայութիւններով:*

*Առաջին հատորը (1945) կ'ընդգրկէ հայոց պատմութիւնը նախաքրիստոնէական շրջանէն մինչեւ Արշակունեաց թագաւորութեան հաստատումը 66 թուին: Հատորին Բ մասը (1957)՝ Արշակունեաց թագաւորութեան շրջանը (66-428) կը բովանդակէ, եւ Գ մասը (1952) Արաբներու եւ Սելճուքեան արշաւանքներու մասին է, ինչպէս նաեւ Զաքարեաններու իշխանութեան շրջանը: Վերջինը՝ (1960) Արաբներու արշաւանքի մասին է Սեբէոս եւ Ղեւոնդ պատմիչներու եւ արաբ պատմիչներու գրածներուն համաձայն:*

*Իր բազմակողմանի զարգացումով Յակոբ Մանանդեան որպէս պատմաբան, իրաւագէտ եւ տնտեսագէտ, իր խորաթափանց եւ որոնող միտքով միշտ նոր եւ վերջին խօսքը ըսած է այս եւ միւս երկասիրութեանց մէջ: Կարելի չէ Հայոց Պատմութիւնը իր խկութեանը մէջ սերտել առանց Մանանդեանի «Քննական Տեսութիւն» հատորներուն:*

*Հիմնական միւս գործը եղաւ իր «Ֆէոդալիզմը Հին Հայաստանում« ծաւալուն գիրքը, ուր հեղինակը մանրամասն վերլուծած է ու պարզաբանած հայ նախարարական կարգի ներքին բովանդակութիւնը եւ անոր էական բոլոր առանձնայատկութիւնները, ինչպէս հողատիրութեան ձեւերը, սորկական յարաբերութիւնները, «ազատ»ները, «ոստանիկ»ները, հոգեւորականները եւ անոնց իրաւական ու տնտեսական դրութիւնը: Իր այս հոյակապ գոր-*

*Շար.ը էջ 18*





ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Միջոցառումներ նուիրուած Ս.Դ.Հ.Կ.-ի 125 ամեակին

**Սեպտեմբեր 16, 2012**

Հայաստանի Անկախութեան Փառատօն

**Սեպտեմբեր 21, 2012**

Ազգային Երգերու Երեկոյ

**Հոկտեմբեր 27, 2012**

Միօրեայ Գիտաժողով

**Նոյեմբեր 18, 2012**

125 Ամեակի Եզրափակիչ Հանդիսութիւն

# ՄԵՐ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԼԵԶՈՒՆ

*ՄՆՐՈՒԺԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ*

## *1. ԼԵԶՈՒՆ «ՄԱՔՐԵԼՈՒ» ՄԱՐՄԱՋԸ*

*Լեզուն «մաքրելու» մեր այս յարատեւ մարմաջն անհեթեթ է, հակագիտական անիմաստ պատճառով:*

*Աշխարհում չի եղել, չկայ ու չի լինի գոնէ մի՛ «մաքուր» լեզու, որովհետեւ առանց բառային փոխառութեան լեզուն չի ապրի, իսկ փոխառութիւնները արհեստական «համարժէքներով» փոխարինելը բառային մի ահաւոր աղմուկ է ստեղծում ու լեզուն դարձնում է ծանրաշարժ, խրթին, «անհամ ու անհոտ ու ջրիկ» մի բան ու սպանում է դա:*

*Սա լեզուաբանութեան այբբենական ճշմարտութիւններից է, բայց մերոնք հակառակ են սրան:*

*Թէ որ մարդը սա գիտի ու տրամաբանութիւնից էլ լրիւ զուրկ չի, ոչ մի անգամ լեզու «մաքրելուց» չի խօսի:*

*Երկրորդ՝ երկու-երեք հարիւրամեակ առաջ եւրոպական գիտութիւնը որոշեց, որ տերմինների համար պիտի գործածեն հին յունարէնն ու լատիներէնը, որ լեզուները չծանրաբեռնուեն սինոնիմներով, ու «բառային աղմուկը» չխաթարի լեզուական ինֆորմացիան:*

*Սա արուեց նաեւ այն բանի համար, որ տարբեր լեզուներով խօսող գիտնականներն իրար հնարաւորին չափ հեշտ հասկանան, որովհետեւ երբ հրաժարուեցին գիտական գործերը լատիներէնով գրելուց, պարզուեց, որ սա՛ է իրար հասկանալու ամենահեշտ ու անխուսափ ուղին:*

*Սրա համար էլ բոլոր ժողովուրդները ողջ աշխարհում, բացի Հայաստանն ու հայերը, համարում են, որ թէ՛ դպրոցական, թէ՛ բուհական կրթութեան առաջին խնդիրներից մէկը մանուկներին ու պատանիներին գիտական միջազգային կոչուող տերմինները սովորեցնելն է:*

*Նեղմիտ մտաւորականը հակառակ է սրան ու չի հասկանում, որ հայերէնը բացառութիւն չի:*

*Երեւի բոլորն էլ լաւ գիտեն, որ «հայացրած» բառ ու տերմինների մեծագոյն մասը մեռած է ու բանաւոր խօսքի մէջ չի գործածւում, բայց համարեա բոլոր մտաւորականներն էլ (շատ անգամ՝ վախենալով, թէ իրենց կը համարեն տգէտ) «հայացնում են» օտար համարուող բառ տերմինները:*

*Այս մարդիկ չեն էլ պատկերացնում, թէ քանի՜-քանի տասնեակ հազարի է հասնում գիտական տերմինների թիւն, ու չեն հասկանում, որ հակառակւում են լեզուի հենց էութեանն ու բնաւորութեանը:*

*Իրօք, ասենք բենզինը թարգմանեցիք քարիւղով, դէ հիմա էլ «թարգմանէք՝ մազութը, սոլիարկան, կերոսինը, նաւթը, էթանը, բութանը, պոզիտրոնը, բարիոմը, միւոնը, մեզոնը, հիպերոնը, կաոնը, գլիւոնը, քուարկը եւն, եւն:*

*Լեզուաբանութեան փորձով հաստատուած ամենահիմնական դրոյթներից մէկն ասում է, որ ամէն մի լեզու էլ անընդհատ ու պարտադիր փոխւում է, ու փոփոխութեան հիմնական ձեւերից մէկը՝ օտար բառերի փոխառութիւնն է: Մէկ ուրիշ հիմնական դրոյթն էլ, ինչպէս ասուեց, պնդում է, թէ լեզուն չի ենթարկւում անհատի կամ անհատների ոչ մի խաւի կազմած ծրագրին:*

*Սրանցից ու Լեզուի Գլխաւոր Օրէնքից բխում է, որ փոխառած բառերը հայերէն են, եթէ լեզուի կրողների մեծ մասը գործածում է դրանք:*

*«Թարգմանական» մարմաջով տառապող «հայրենասէրը» չի հասկանում սա, չի հասկանայ, որ իր այս «ելակէտը» թէ՛ անհեթեթ է, թէ՛ շատ անգամ ծիծաղելի ու նոյնիսկ ողորմելի: Օրինակ՝ մի տիտղոսաւոր գիտնական ֆոտոն ու էլեկտրոն բառերի համար առաջարկել է լուսիկ ու սաթիկ (կամ՝ լուսոն ու սաթոն) «հայերէն համարժէքները»:*

*Հակառակի պէս էլ, ֆոտոնները ենթարկւում են Բոզե-Էյնշտէյնի, իսկ էլեկտրոնները՝ Ֆերմի-Դիրակիստատիստիկային, ու սրա համար էլ ասում են, թէ «ֆոտոնը բոզոն է, իսկ էլեկտրոնը՝ ֆերմիոն»: Հիմա ի՞նչ, սրանից յետոյ ասենք, թէ «սաթիկը ֆերմիոն է, իսկ լուսիկը բոզո՞ն» (կամ՝ իրար բախուեցին մի ֆերմիոն սաթոն ու մի բոզոն լուսո՞ն:*

*Էլեկտրոնի հակամասնիկին՝ պոզիտրոնին ի՞նչ ասենք՝ պոզի սաթո՞ն:*

*Կամ իզոթերմ պրոցես-ի տեղն ասենք նոյնաջերմ գործընթա՞ց: Այսպէս ասելով, ինչքա՞ն կը խելօքանանք ու ինչքա՞ն կը հզօրացնենք հայ գրականութիւնն ու գիտութիւնը: Թէ՞ կը դառնանք ծիծաղելի ու նոյնիսկ ողորմելի, որովհետեւ հետամուտ կը լինենք միայն ձեւին՝ մոռանալով բովանդակութիւնը, քանզի տերմինը պիտի այնքան «մասնագիտացած լինի», որ չխառնուի տուեալ լեզուի նոյնանուն բառերին:*

*Երբ ասածս ձեւով տերմինը իբր «հայացնում են», հնարաւոր է, որ առնուազն հինգ «վթար» լինի: Հնարաւոր է, որ տերմինի իմաստային դաշտը լայնանայ, նեղանայ կամ (նաեւ սրանց հետ միասին) շեղուի: Սրանցից երրորդն աւելի յաճախ է լինում:*

*1. Հնարաւոր է, որ տերմինը «հայացնելիս» այդ տերմինի իմաստային դաշտն անասելի լայնանայ: Օրինակ, երբ բժիշկների գործածած տամպոնի փոխարէն գրում են՝ միջադիր, այս տերմինի իմաստային դաշտն առաւելագոյն չափով լայնանում է, որովհետեւ մէջը դնելու ամէն մի բանին էլ կարելի է՝ ասուի միջադիր:*

*Երբ տերմին բառ ու դարձնում ենք եզր, իմաստային դաշտը լայնանում է, որովհետեւ ամէն բանն էլ եզր ունի, ու ամէն մի բանի եզրը տերմին չի, սա անվիճելի է: Բայց այս անգամ տերմին բառի նաեւ իմաստն է շեղւում ու դառնում է լրիւ անորոշ, այնինչ, տերմինի իմաստը լրիւ որոշակի է:*

*2. Հնարաւոր է, որ տերմինը «հայացնելիս» այդ տերմինի իմաստային դաշտը նեղանայ: Օրինակ, երբ ռեսուրսի փոխարէն գրում ենք աղբիւր, իմաստային դաշտը նեղանում է մինչեւ մեր սար ու դաշտերի աղբիւրները, ու այս անգամ՝ էլ չի լինի, որ երկրի ողջ ռեսուրսների փոխարէն գրենք՝ երկրի ողջ աղբիւրները, կամ երկրի ջրային ռեսուրսների փոխարէն գրենք՝ երկրի ջրային աղբիւրները: (Ի հար կէ, կարելի է, որ ռեսուրսի տեղը երբեմն ասուի՝ աղբիւր կամ պաշար: Բայց մէկ է, մարդկային ռեսուրսների տեղը չի ասուի մարդկային պաշարներ: Բայց սա էլ չպիտի լինի կատեգորիկ պահանջ: Թող սրանք բոլորն էլ գործածուեն):*

*3. Հնարաւոր է, որ տերմինը «հայացնելիս» այդ տերմինի իմաստային դաշտը շեղուի: Օրինակ, երբ վոլտմետրի ու ամպերմետրի փոխարէն գրում ենք՝ վոլտաչափ ու ամպերաչափ, իմաստային դաշտը շեղւում է, որովհետեւ հայերէնի օրէնքներով այս իբր «հայացրածները» նշանակում են՝ վոլտիչափ (վոլտի «թայը») ու ամպերի չափ (ամպերի «թայը»):*

*Իրօք, բա չե՞նք ասում՝ գրկաչափ (մի գրկաչափ ցախ, խոտ եւն), մի արմնկաչափ (արմունկի չափ) կտոր, մատնաչափ (մատի չափ) ու նոյնիսկ՝ Մատնաչափիկ, ոտնաչափ (ոտի չափ) եւն, եւն:*

*Ու եթէ սրանք նոյնիսկ ճիշտ էլ լինէին, վոլտմետրն ու ամպերմետրը իբր «հայացնելով» հարցը չէր լուծուի, որովհետեւ յունարէն մետր բառն արդէն իրօ՛ք է հայացել, ու հայերէնն առանց սրան անհնար է: Օրինակ, հազար մետր-ի տեղը ոչ մէկը երբեք չի ասի հազարաչափ: Բացի սա, ամպերն ու վոլտն է՛լ են բառ, իսկ սրանք «չհայացան», ուրեմն, մէկ է, խնդիրը չլուծուեց:*

*4. Երբ մանոմետրի փոխարէն գրում ենք՝ ճնշաչափ, նախորդ կէտի համաձայն, իմաստային դաշտը շեղւում է, որովհետեւ հայերէնի օրէնքով սա նշանակում է՝ ճնշելու չափով (կամ ճնշելու «թայը»): Բայց սրա իմաստային դաշտը նաեւ լայնանում է, որովհետեւ, օրինակ, արեան ճնշումը չափելու տոնոմետրն է՛լ է «ճնշաչափ», բարոմետրն է՛լ, աներոիդն է՛լ, ու այս չորս տերմինը դառնում են մէկ: Մանոմետրը, տոնոմետրն ու բարոմետրն ու աներոիդը «մասնագիտացել են», ամէն մէկն ի՛ր ոլորտում կիրառուելու համար:*

*5. Մեր 2-4 դասարանների մայրենի լեզուի դասագրքերն իրենց վարժութիւնների բաժնում անընդհատ աշակերտին ասում են. «Բնագի՛րը կարդայ» (օրինակ, Թումանեանի որեւէ հեքիաթինը): Սրանց հեղինակները իբր «հայացրել» են տեքստ բառը, բայց այս հայացրածի իմաստային դաշտը թէ՛ նեղացել է, թէ՛ շեղուել:*

*Պարզ չի՞, որ ամէն բնագիր էլ տեքստ է, բայց ամէն տեքստ բնագիր չի: Հետաքրքիր է, հենց իրե՛նք, այս «հանճարեղ» հայացնողները, երբեւէ Թումանեանի գոնէ մէկ տեքստի բնագիրը կարդա ցե՞լ են:*

*Մեր մաքրամոլների այս «սկզբունքներով» մոգոնած համարեա բոլոր «հայերէն» բառերն էլ ահաւոր երկար են, ու դրանց գործածութիւնը, օրինակ, պոեզիայում համարեա անհնար է, ու սրանց մեծագոյն մասը Ջուկովսկու ասած լեզուական հրէշներից է:*

## *2. ՄԱՆԿԱՄՏՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ՞ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ*

*Կազմակերպուած ու արդէն ոչ պրիմիտիւ լեզուն նոր արմատ չի ստեղծում: Սրա փոխարէն կազմակերպուած լեզուն նոր արմատներն (ու բառերը՝ առհասարակ) փոխ է առնում ա՛յն լեզուներից, որոնք աւելի պատուելի է համարում: Կազմակերպուած լեզուի համար սա՛ է նոր արմատ ստեղծելու ամենալաւ ու ամենահեշտ ձեւը:*

*Առանց բառային փոխառութեան լեզուն կորցնում է նոր պայմաններին իսկոյն յարմարուելու իր ունակութիւնն ու դառնում է անհամ ու անհոտ, անյարմար, ու այդ*

*Շար.ը էջ 19*


Նոր Սերունդ Մշակութային Միութիւն
Թէքէեան Մշակութային Միութիւն
Համազգային Մշակութային Ընկերակցութիւն
Իրանահայ Միութիւն
Պոլսահայ Միութիւն

*Սիրով կը հրաւիրեն Ձեզ*

**ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳԻՐՔԻ 500-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

*Գլխաւոր Բանախօսներ՝*

**Հ. ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏՄԵԱՆ**
*«Պատմական Ակնարկ եւ Արժեւորում Հայկական Տպագրութեան – 1512-էն 1720ականները»*

**ԴՈԿՏ. ՍԵՊՈՒՀ ԱՍԼԱՆԵԱՆ**
*«Վենետիկէն՝ Մադրաս – Մխիթարեաններու Տպագրական Ցանցը»*

*

*Գեղարուեստական յայտագիրով կը հրամցուին*

Նուագ - Երկնային Համոյթ՝
**ՍԱԼԲԻ**, *Սրինգ*
**ՍՕՍԻ**, *Տաւիղ*

Ասմունք՝
**ՄԱՐԱԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ**
**ԱԼՎԱՐԴ ՈՒԶՈՒՆԵԱՆ**

Երգչախմբային Կատարումներ՝
**ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ**
**ՄԻՔԱՅԷԼ ԱՒԵՏԻՍԵԱՆ**, *Խմբավար*

Կը ցուցադրուին հնատիպ հայերէն գիրքեր
եւ հայերէն տառերու նմուշներ

**Կիրակի, 10 Յունիս 2012 - կ.ե. 5:00-ին**

**ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**
117 S. Louise Street, Glendale, California 91205

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ **ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

## ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ 66-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ



*Երիտասարդաց Կազմակերպութեան Ընդհանուր Համագումարին մասնակցող եկեղեցականներու եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներու խմբանկար*

Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան 66-րդ Ընդհանուր Համագումարը, նախագահութեան Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի եւ հիւրընկալութեամբ Շիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ, տեղի ունեցաւ Մայիս 24-25 օրերուն Շիգակոյի «Հոթէլ Սաքս»ի մէջ: Համագումարին յաջորդեց Մարզական Շաբաթավերջը՝ Մայիս 25-28 օրերուն:

Երկօրեայ այս համագումարին մասնակցեցան 13 հոգեւորականներ եւ Թեմի 23 ծուխերու երիտասարդաց կազմակերպութեանց 75 պատգամաւորներ: Օրուան ատենապետն էր Սամ Մրոֆիքա՝ Շիգակոյի հիւրընկալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիէն եւ փոխ ատենապետը՝ Կարէն Թոնոյեան՝ Ֆէրլոնի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցիէն:

Բացման աղօթքը կատարեց Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան եւ ներկայ երիտասարդներուն ուղղած իր պատգամին մէջ նախ իր գնահատանքը յայտնեց կազմակերպիչ ծուխին, Երիտասարդաց Կազմակերպութեան Կեդրոնական Խորհուրդին եւ ներկայ պատգամաւորներուն: Ապա, արտայայտուեցաւ Երիտասարդաց Կազմակերպութեան առաքելութեան մասին եւ թելադրեց որ ամէն մէկ անդամ ինքնիրեն հարց տայ թէ ինչո՞ւ երիտասարդական կազմակերպութեան միջոցաւ ընտրած է իր եկեղեցիին ծառայելու ուղին: «Մեր ազատ կամքով մեր մասնակցութիւնը կը բերենք Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան: Ինչո՞ւ համար այս նախընտրութիւնը կատարած ենք. ես կը կարծեմ որ ամէն մէկը իր պատճառն ու ներշնչման աղբիւրը ունի: . . . Խոնարհութեան ու հեզութեան, այլոց օգտակար հանդիսանալու կամեցողութեան, գոհաբերութեան եւ ներողամտութեան արժէքները մեզ կ՛առաջնորդեն հետեւելու Քրիստոսի ոտնահետքերուն եւ իրականացնելու Երիտասարդաց Կազմակերպութեան առաքելութիւնը: Մասնաճիւղերու ներկայացուցիչները իրենց վարք ու բարքով պարտին օրինակ հանդիսանալ երիտասարդ սերունդին», ըսաւ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Համագումարի ընթացքին՝ ներկաները փոքր խումբերու բաժնուեցան եւ խորհրդակցեցան Կազմակերպութեան զանազան հարցերու եւ մանաւանդ քրիստոնէական ոգիի գործադրութեան եւ փոխանցման կարեւորութեան մասին:

Համագումարի ընթացքին Կեդրոնական Խորհուրդի երկու նոր անդամներ ընտրուեցան՝ Անի Կրիկորեան՝ Ռէյսինի Ս. Մեսրոպ Եկեղեցիէն եւ Ճանըթան Փէլաճէզ՝ Լիվինկսթընի Ս. Աստուածածին Եկեղեցիէն, վերընտրուեցաւ Արմէն Թէրճիմանեան՝ Ուաշինթըն Տի. Սի.ի Ս. Աստուածածին Եկեղեցիէն:

Մայիս 27-ին, հանդիսապետութեամբ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի, Ս. Պատարագ մատոյց հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Առէն Աբղ. Ճէպէճեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին եւ Ս. Խորանին սպասարկեցին ներկայ երիտասարդները, եւ բոլորը Ս. Հաղորդութիւն ստացան: Այս առթիւ, Առաջնորդ Սրբազան Հայրը հաստատեց եւ օրհնեց Կեդրոնական Խորհուրդի նորընտիր անդամները:

Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի անդամ եւ Պոսթոնի Հայկական Ժառանգութեան Հիմնարկի Նախագահ Տիար Ճէյմս Գալուստեան խօսեցաւ Պոսթոնի մէջ վերջերս տեղի ունեցած Ժառանգութեան Զբօսայգիի բացման արարողութեան մասին, որ տեղի ունեցաւ Մայիս 22-ին:

Մայիս 25-ին տեղի ունեցաւ Առաջնորդի Կէսօրուան Ճաշը, որուն ընթացքին Ֆրամինկհամի Սրբոց Թարգմանչաց Եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Գրիգոր Քհնյ. Սապունճեանի յանձնուեցաւ «Հայր Հայկազուն Մելքոնեան Մրցանակ»ը՝ Հայ Եկեղեցւոյ երիտասարդներու նկատմամբ իր ցուցաբերած առաջնորդութեան եւ նուիրեալ ծառայութեան համար:

Նոյնպէս գնահատական մրցանակներու արժանացան հետեւեալները.

«Կրեկըրի Արբաճեան Մրցանակ»՝ Մայք Ճիվէլէկեանին՝ Ուայթ Փլէյնզի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիէն

«Սամ Ներսէսեան Մրցանակ»՝ Անի Կրիկորեանին՝ Ռէյսինի Ս. Մեսրոպ Եկեղեցիէն

«Մասնաճիւղի Թիւ 1 Մրցանակ»՝ Ռէյսինի Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ մասնաճիւղին

«Տ. Յարութիւն Քահանայ եւ Երէցկին Փաթրիշիա Տակլի Մրցանակ»՝ Դոկտ. Սամ Միքայէլեանին՝ Առաջնորդարանի զարգացման բաժանմունքի համակարգող

## ՀԱԼԻՎՈՒՏԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՅՑ. ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՆՈՒԻՐԱՀԱՒԱՔ



Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան, Ծխական Խորհուրդն ու Շինութեան Յանձնախումբը Առաջնորդ Սրբազան Հօր վերահսկողութեամբ, արդէն իսկ պատրաստած են հայկական ոճով նոր եկեղեցւոյ կառուցման ճարտարապետական աշխատանքը:

Արդարեւ, Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցին 1973 թուականէն ի վեր լծուած է իր հոգեւոր առաքելութեան եւ լաւագոյնս օգտակար հանդիսացած է մեր հաւատացեալ ժողովուրդին: 1997էն ի վեր Ծուխին Հոգեւոր Հովիւն է Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան, որ Առաջնորդական Փոխանորդն է նաեւ Հարաւային Գալիֆորնիայի: Լիայոյս ենք, որ նոր եկեղեցւոյ կառուցմամբ աւելի կարելիութիւններ պիտի ստեղծուին մեր ներկայ եւ ապագայ սերունդներուն համար:

Ի նպաստ եկեղեցւոյ կառուցման Յունիս 10ի երեկոյեան ժամը 6:00ին Սուրբ Յովհաննու Կա-րապետ Հայց. Եկեղեցւոյ «Տաղլեան Մշակութային Կեդրոն»ին մէջ տեղի պիտի ունենայ ընդունելութեան, իսկ ժամը 7:00ին ալ ճաշկերոյթ եւ նուիրահաւաք:

## ՌՈՒՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՏԱԹԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ԿԸ ՔԱՐՈԶԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ



Գոհունակութեամբ կը հաղորդենք Թեմիս համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ Ռումանիոյ Հայոց Թեմի նորընտիր Առաջնորդ՝ Գերշ. Տ. Տաթեւ Եպիսկոպոս Յակոբեան Յունիս 5-15, 2012 հիւրաբար պիտի գտնուի Արեւմտեան Թեմէն ներս:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հրաւէրով, բարձրաստիճան հիւր հոգեւորականը Կիրակի, Յունիս 10ին, առաւօտեան ժամը 10:30ին պիտի պատարագէ եւ քարոզէ Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ: Արարողութեանց պիտի հանդիսապետէ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճար՝ միասնաբար աղօթելու եւ լսելու հիւր հոգեւորականին օրուան պատգամը:

---

Ընդհանուր Համագումարն ու Մարզական Շաբաթավերջը հիւրընկալուած էր Շիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերութեան մասնաճիւղին կողմէ, մասնակցութեամբ Էվընսթընի Ս. Յակոբ Եկեղեցւոյ եւ Փէյլըս Հայթցի Ս. Յովակիմ եւ Աննա Եկեղեցւոյ մասնաճիւղերուն:

Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի անդամներ Արժշ. Տ. Գրիգոր Քհնյ. Սապունճեանէ եւ Տիար Ճէյմս Գալուստեանէ բացի ներկայ էին՝ Հոգշ. Տ. Առէն Աբղ. Ճէպէճեան, Արժշ. Տ Առաքել Քհնյ. Ալճալեան,Արժշ. Տ. Վազգէն Քհնյ. Գուգույեան, Ասկըր Թադոսեան (ատենապետ), Լիզա Եսայեան (ատենադպիր) եւ Փօլ Մարտոյեան:

Յաջորդ տարուան Ընդհանուր Համագումարի եւ Մարզական Շաբաթավերջի հիւրընկալը պիտի ըլլայ Փրավիտէնսի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ մասնաճիւղը:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

## ԵՐԵԽԱՍ ՔՈՒՆԻՆ ՄԷՋ ԿԸ ՔԱԼԷ

*Պզտիկներու ծիծաղապատկերի (cartoons) հռչակաւոր դէմքերէն «Թոմ» կատուն դուրս կ՚ելլէ իր անկողինէն եւ ձեռքերը դէպի առջեւ երկարելով կը քալէ, իր ճամբուն վրայ գտնուող առարկաները զարնուելով եւ աստիճաններէն վար գլորուելով: Մինչ «Ճերի» մուկը երբ նկատէ, թէ այդ միջոցին «Թոմ»ը քովէն կ՚անցնի առանց զինք հարուածելու, եւ երբ կը գիտակցի թէ «Թոմ»ը տակաւին քնացած է, ամենայն դուրգուրանքով անոր անկողին կը վերադարձնէ:*

*Այս ծիծաղաշարժ տեսարանը կարգ մը երեխաներու մօտ իսկական պատկերի մը կերպով կ՚արտացոլայ: Ինչո՞ւ կարգ մը երեխաներ կը քալեն իրենց քունի ընթացքին: Արդեօք այս հոգեկա՞ն թէ օրկանային հարց մըն է: Արդեօք այս մշտակա՞ն թէ անցողակի վիճակ մըն է: Քունի ընթացքին քալելը (somnambulism) հարց մըն է, որմէ կը տառապին 5-12 տարեկանի միջեւ եղող պզտիկներուն 15 առ հարիւրը: Սակայն այս վիճակին պատճառները տակաւին սահմանուած չեն:*

*Ժառանգական գործօնը կայ. այդ վիճակէն տառապող փոքրիկին ընտանեկան պարագաներուն մէջ գտնուած են նոյն վիճակէն տառապող անձեր: Կան նաեւ տեսութիւններ, ըստ որոնց՝ երեխային շրջապատը ազդեցութիւն կ՚ունենայ անոր քունին վրայ: Օրինակի համար, աղմուկը, բարձր ձայներն ու երաժշտութիւնը, որոնք պզտիկին քնանալու ժամանակին կը նախորդեն, խանգարում կը պատճառեն անոր:*

*Կարգ մը պարագաներու, այս վիճակին պատճառը կրնայ ըլլալ երեխային մօտ մակնեզիումի պակասը: Սակայն չափահասներու մօտ, որոնք հազուադէպ կը տառապին այս վիճակէն, պատճառը կրնայ ըլլալ հանդարտեցուցիչ կամ այլ տեսակի դեղերու գործածութիւնը, կամ ալքոհոլիք խմիչքներու մոլութիւնը:*

*Մասնագէտին համաձայն, քունի ընթացքին քալելը որեւէ առնչութիւն չունի երեխային մօտ հոգեկան հարցերու հետ, որովհետեւ հոգեբանական բոլոր ուսումնասիրութիւնները կը նշեն, թէ հոգեկան խանգարումը կամ մտահոգութիւնը պատճառ չեն դառնար, որ անձ մը քունի ընթացքին քալէ, այլ այդ վիճակին պատճառը ժառանգական կամ ֆիզիքական կ՚ըլլայ:*

*Այս վիճակը ընդհանրապէս ի յայտ կու գայ մանկութեան հանգրուանի աւարտին եւ պատանութեան հանգրուանի սկզբնաւորութեան, եւ հազուադէպ կը շարունակուի չափահասութեան տարիքին: Ամէնէն աւելի տարածուած պատճառը ֆիզիքական գործօնն է: Ճանչցուած իրողութիւն մըն է, թէ քունը հանգրուաններու բաժնուած է. կը սկսի թեթեւ քունով, ապա խորունկ քունը եւ յետոյ դանդաղ քունն ու երազներ տեսնելու հանգրուանը: Իւրաքանչիւր հանգրուանի տեւողութիւնը 90 վայրկեան է, եւ որովհետեւ պզտիկը 7-8 ժամ կը քնանայ, դանդաղ քունի հանգրուանը իր մօտ աւելի երկար է քան չափահասին մօտ: Հետեւաբար, այս վիճակը ի յայտ կու գայ քունի առաջին քառորդին ընթացքին եւ բնաւ չի պատահիր փոքրիկին արթննալուն նախորդող հանգրուանին:*

*Քունի ընթացքին քալելը կը բաժնուի երկու տեսակներու.*

*Դանդաղ քալելը, որ չի վնասեր երեխային, եւ արագ քալելը՝ որ ժամանակի ընթացքին պզտիկը հետապնդուած ըլլալ կը թուի:*

*Իսկ եթէ ուեւէ անձ պատահածին մասին հարց տայ իրեն, ան կրնայ կամ պատասխանել եւ կամ չպատասխանել, իսկ եթէ արթնցնեն զինք՝ անոր մօտ շփոթի նշաններ ի յայտ կու գան:*

*Երկու պարագաներուն ալ ընթացքին, մայրը պէտք է մեղմօրէն անկողին վերադարձնէ փոքրիկը, որպէսզի վերջինս հոն շարունակէ իր քունը:*

*Ծնողք հարկ է գիտակցին, թէ իրենց երեխային կատարածը ակամայ վարուելակերպ մըն է, եւ նախընտրելի է թմրեցուցիչ դեղերու չդիմել, բացի այն պարագաներէ, երբ այդ վիճակը իսկական վտանգի կ՚ենթարկէ պզտիկին կեանքը:*

*Մասնագէտը կը շեշտէ, որ քունի ընթացքին քալելուն նկատմամբ ծնողք պէտք չէ իրար անցնին: Այս վիճակէն տառապող փոքրիկներուն 33 առ հարիւրին մօտ այդ դէպքը ամիսը մէկ անգամ կը պատահի, մինչ այդ մէկ անգամէ աւելի կը կրկնուի անոնցմէ 3 առ հարիւրին մօտ: Միայն այս բազմաթիւ անգամներ կրկնուող պարագային է, որ բժիշկ մասնագէտը կը միջամտէ, որովհետեւ այդ կրկնութիւնը կրնայ ազդել երեխային ցերեկային գործունէութեան ու գիտակցութեան վրայ:*

*Ախտորոշումը կը պահանջէ բազմաթիւ մանրազնին հարցումներու պատասխանները: Օրինակի համար, ի՞նչ պատահեցաւ քալելու ընթացքին, այս հարցը ի յայտ գալէ առաջ եւ վերջ ինչպէ՞ս էր պզտիկին վիճակը, ո՞ր ժամերուն ան կը քալէ եւ արդեօք ան կը յիշէ՞ իր հետ պատահածը:*

*Մասնագէտը կը նշէ, թէ ծնողք պէտք է նախապաշտպանական քայլեր առնեն, որոնք կը պաշտպանեն երեխան՝ քունի ժամանակ ինքզինքին վնաս հասցնելէ: Այդ քայլերն են հետեւեալները.*

**Պէտք է պզտիկին համոզել, որ իր հետ պատահածը սովորական եւ ժամանակաւոր հարց մըն է:*

** Փակել բոլոր դռներն ու պատուհանները, եւ հեռացնել սուր առարկաները եւ լուցկին:*

** Հեռացնել բոլոր այն առարկաները, որոնց կրնայ զարնուիլ ան, ինչպէս նաեւ կարելի է ազդարարիչ զանգակ զետեղել անոր սենեակին դուռին վրայ:*

** Եթէ մայրը նկատի առած է երեխային գիշերային քալելու ժամերը, կրնայ անոր արթնցնել քալելու սկսելէն քառորդ ժամ առաջ:*

## ՊԶՏԻԿԻԴ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

*1) Որպէսզի պզտիկդ ուղիղ ողնաշար ունենայ, քեզի կը ներկայացնենք շարք մը գործնական քայլեր.*

** Իրեն վերաբերեալ կահկարասիները իր չափին թող յարմարին:*

** Զինք մղէ մարզանք կատարելու. քալել, վազել, պարել, պարանով ցատկել, լողալ, գնդակով խաղալ, եւայլն:*

** Ամրան եղանակին թոյլ տուր անոր, որ ծովափին աւազով խաղայ եւ պարտէզին մէջ զբաղի (անշուշտ նկատի առնելով անոր տարիքը եւ ցանկութիւնը):*

** Իր դպրոցական կամ մարզական պայուսակները ընտրէ կռնակին վրայ շալկուող տեսակներէն եւ ոչ թէ մէկ ձեռքով քաշուողներէն, եւ ուշադիր եղիր, որ անոնք յարմարին իր կշիռքի ծանրութեան հետ:*

** Հերթականօրէն քննել տուր անոր ողնաշարը:*

** Առանց անհոգութիւն ընելու, այս մասնագտութեամբ բժիշկի դիմէ եթէ զգաս, թէ անոր ողնաշարին մէջ ծուռութիւն մը կայ, թէկուզ թեթեւակի:*

*2) Պզտիկներդ աղիքային անհանգստութիւններէ պաշտպանելու համար, որոնք կը բազմանան մանաւանդ ամրան եղանակին, հետեւիր հետեւեալ շատ պարզ քայլերուն.*

** Ձեռքերդ տաք ջուրով եւ օճառով լուայ ամէն անգամ երբ զինք պիտի կերակրես, չորիկը փոխես կամ իր ճաշը պիտի պատրաստես:*

** Ձեռքերդ դարձեալ լուայ, իր ձեռքերն ալ նոյնպէս, երբ դուն բաղնիք կը մտնես կամ իրեն կը մտցնես, ինչպէս նաեւ ճաշը ուտելէ առաջ եւ վերջ:*

** Եթէ պզտիկդ աղիքային բորբոքումէ տառապի, զինք հեռու պահէ իր քոյր/եղբայրներէն, ազգականներէն եւ ընկերներէն, որպէսզի չփոխանցէ անոնց:*

** Բժիշկին դիմէ եթէ ան ուրիշ ախտանշաններէ ալ տառապի, ինչպէս փսխունք, չորութիւն եւ բարձր տաքութիւն:*

*3) Նորածինդ եւ սննդական հարցերը.*

*Վերջերս ծնողներուն մօտ տարածուած է իրենց նորածին երեխային համար ընտրել «էքզոթիք» կաթի տեսակները, ինչպէս այծի կամ ոչխարի, ինչպէս նաեւ անոր բուսական տարբերակները, ինչպէս սոյայով, նուշով կամ կաղինով պատրաստուածները: Մասնագէտներ զգուշացուցած են այս հարցէն, որ կրնայ այդ նորածիններուն մօտ քալսիումի եւ երկաթի պակաս յառաջացնել, ինչպէս նաեւ պատճառ դառնալ անոնց սխալ աճման:*

*Հոս հարկ է յիշեցնել, որ նորածին երեխաներուն համար նախընտրելի է բնական սնտուութիւնը (կարելիութեան պարագային) կամ այն պատրաստուած տեսականիները, որոնք յատկացուած են երեխային այս զգայուն հանգրուանին համար, անշուշտ նկատի առնելով մանկաբուժին տուած ցուցմունքներն ու թելադրութիւնները:*

*4) Մարզանքը անհրաժեշտ է պզտիկներուն.*

*Բրիտանական կառավարութիւնը, ծնողներուն ուղղած իր ցուցմունքներու նոր շարքով, խրատեց անոնց, որ իրենց հինգ տարեկանէն նուազ եղող պզտիկներուն նոյնիսկ խթանեն մարզանք կատարելու՝ օրական երեք ժամ շարժումի մէջ մնալով, որպէսզի անոնք պաշտպանուին գիրութենէ:*

*Գիտահետազօտող Սալլի Տէյվիս ըսած է, թէ գալով տակաւին քալել չսկսած երեխաներուն, բազմաթիւ ապացոյցներ կան, որոնք ցոյց կու տան, թէ անոնց առաջին տարիներուն ընթացքին շատ անհրաժեշտ է անոնց թոյլ տալ, որ գետինը սողան, խաղան ու դառնան:*

*Բրիտանական ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ երեխաներուն միայն 30 առ հարիւրը պէտք եղած շարժումները կը կիրարկէ, մինչ ուրիշ ուսումնասիրութիւններ իրար վերագրած են պզտիկներուն կատարած քիչ շարժումները եւ անոնց ուղեղին տկար աճումը:*


**REQUEST FOR PROPOSALS (RFP 7559) EXTERMINATION/ PEST CONTROL SERVICES**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified extermination firms to provide Pest Control Services to 6,529 multi-family residential units, management offices, and community centers at various locations owned by the Authority. Copies of the RFP may be obtained online beginning May 18, 2012 at www.hacla.org/ps. Proposals will be accepted at The Housing Authority of the City of Los Angeles located at 2600 Wilshire Blvd., 4th floor, General Services Department, Los Angeles, CA 90057, until 10:00 A.M., June 22, 2012**

5/31, 6/7/12
CNS-2316400#
MASSIS WEEKLY



# Burbank Airport

## Bid Request General Contractors

**Qualified "A", licensed Contractors are invited to submit sealed bids by 2:05 PM, July 5, 2012 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority for Project Number E11-23, AIRCRAFT RESCUE AND FIRE FIGHTING BUILDING EXTERIOR - FLOOR. The Work in general consists of, but is not limited to, demolition of existing concrete floor (while protecting existing structural tension rods), relocation and/or undergrounding of utilities, installation of clarifier unit and tie-in to existing sewer at the Bob Hope Airport Fire Station. Plans and specifications can be obtained directly from the Bob Hope Airport Web site at www.bobhopeairport.com under Business Opportunities. All bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Call Bobbi Greenspahn at (818) 565-1305 for more information. A pre-bid conference will be conducted on June 20, 2012, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Office, 2800 Clybourn, Burbank, California, 91505. Located at the corner of Sherman Way and Clybourn.**

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ 3:0 ՀԱՇԻՒՈՎ ՅԱՂԹԵՑ ՂԱԶԱԽՍՏԱՆԻՆ



*Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին մէջ Երեքշաբթի օր տեղի ունեցաւ Հայաստան - Ղազախստան ֆուտպոլի ընկերական հանդիպումը:*

*Առաջին իսկ վայրկեաններուն մեր հաւաքականը հետաքրքրական խաղ ցուցադրելով կրցաւ դարպասը գրաւել:*

*Ոգեւորուած առաջին կոլէն՝ հայ ֆութպոլիստները աւելի աշխոյժ սկսան գործել:*

*Առաջին խաղակէսին արդիւնքներով երկու կոլի հեղինակ դարձաւ Գէորգ Ղազարեան եւ եւս մէկ կոլ արձանագրեց Եուրա Մովսիսեան:*

*Երկրորդ խաղակէսի մեկնարկին Ռոպերթ Արզումանեանին փոխարինեց Մկոյեանը, իսկ Կարլէն Մկրտչեանին՝ Սարկիսովը:*

*Հայաստանի հաւաքականը 3:0 հաշիւով յաղթեց Ղազախստանի հաւաքականին:*

### ԵՒՐՕ 2012Ի ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ Է

*Լեհաստանի մայրաքաղաք Վարշաւիոյ մարզադաշտի կառուցման մասնակցող շինարարները յայտարարած են որ Եւրոպայի առաջնութեան բացման օրը կրնան մարզադաշտի մուտքը արգելափակել: Արդարեւ, 40 շինարարական ընկերութիւններ յայտարարած են որ իրենց աշխատանքներուն համար գումար չեն ստացած: Անոնք անյապաղ գրաւոր երաշխաւորագիր կը պահանջեն, իրենց գումարներու վճարման շուրջ «Եթէ մեզի «ոչ» ըսեն, այդ ժամանակ ինքնաշարժերով եւ մարդոցմով կը փակենք դէպի մարզաշմուտքը» ըսած են շինարարները:*

### ՉԻՆԱՍՏԱՆ 10 ՄԻԼԻՈՆ ԵՒՐՕ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ «ՍԻՒԲԸՐ ԲԱԺԱԿ»Ի ՄՐՑՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ

*Սպանիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը Չինաստանի մայրաքաղաք Փէքինի իշխանութիւններէն պաշտօնական նամակ ստացած է, «Սիւբըր Բաժակ»ի մրցումն իրենց երկրին մէջ կայացնելու համար: Չինացիները կ'առաջարկեն որ Սիւբըր Բաժակ»ի մրցումը տեղի ունենայ Փէքինի «Թռչունի բոյն» մարզադաշտին մէջ: Սպանացիները հաւանաբար տեղի տան, քանի որ այդ խաղին համար որպէս նախնական գումար կ'աջարկուի 10 միլիոն եւրօ: Համաձայնութեան պարգային մրցումը տեղի պիտի ունենայ Օգոստոսին:*

### ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴԵԱՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*ծին մէջ ճշդուած են առաջին անգամն ըլլալով հին Հայաստանի ընկերային ու տնտեսական բազմաթիւ եզրաբանութիւնները, անոնց իմաստն ու գործնական նշանակութիւնը:*

*Իր գործերէն հետեւեալները անգլերէնի թարգմանուած են եւ հրատարակուած Լիզպոնի մէջ 1965 թուին հետեւեալ անուններով:*

*1. The Foreign Trade of Armenia.*

*2. Armenia's Economic Prosperity.*

*3. The Development of Trade and Cities.*

*4. Trade and Trade Centers in Armenia.*

*5. The Commercial Importance of Armenia During Arab Invasions and Bagratuni Kingdom.*

*6. The Trade and Cities After the Fall of Bagratuni Kingdom.*

*7. A Brief Survey of Ancient Armenia (New York, 1975).*

*Յակոբ Մանանդեան կը մնայ որպէս 20-րդ դարու ամենաբեղուն, հմուտ եւ տաղանդաւոր պատմագէտներէն մին՝ արժանի ամէն երախտիքի:*




### ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԻՏԱԼԻԱ 3-0

*Եւրօ-2012էն առաջ հաւաքական առաջին կարգի ֆուտպոլի ընկերական հանդիպումներն արդէն իրենց աւարտին հասնելու վրայ են: Այդ ծիրէն ներս Ռուսաստան յաղթեց Իտալիոյ 3-0: Նմանապէս Մեքսիքօ յաղթեց Պոսնիոյ 2-1, Լատվիան՝ Լիտվիոյ 5-0, Հունգարիան՝ Չեխիոյ 2-1, Աւստրիա՝ Հունգարիոյ 3-2:*

### ԼԻԲԱՆԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ ՔԱԹԱՐԷՆ 1-0

*Աշխարհի ֆուտպոլի ախոյեանութեան մրցումներու գծով Պէյրութի մէջ կայացած միջազգային մրցումին, Քաթարի խումբը յաղթեց Լիբանանի հաւաքականին 1-0 հաշիւով: Արդարեւ միակ կոլ նշանակողն եղաւ Անտրէս Սէպասթիան Քինթանասը, խաղի 64րդ վայրկեանին:*

### ԱՄԵՆԷՆ ԲԱՐՁՐ ԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՊԱՐՉԵԼՈՆԱ ԵՒ ՌԻԱԼ ՄԱՏՐԻՏ

*Միջազգային լրատու գործակալութեանց հաղորդումներուն համաձայն ներկայիս աշխարհի մէջ ամենաբարձր վճարուող մարզիկները Պարչելոնայի եւ Ռիալ Մատրիտի ֆուտպոլիստներն են:*

*Ըստ տեղեկատուութիւններուն Պարչելոնայի մարզիկին տարեկան միջին աշխատավարձն է 8.7 միլիոն ամերիկեան տոլար: Իսկ Ռիալ Մատրիտինը՝ 7.8 միլիոն:*

*Eurosport-ի համաձայն առաջին 10ին մէջ կան նաեւ հետեւեալ ակումբները՝ Մանչսթր Սիթի (3րդ), Չելսի (4րդ), Միլան (7րդ), Պայէրն Միւնիխ (8րդ) եւ Ինթըր Միլան (10րդ):*

*Ամերիկեան հետեւեալ ակումբները կը գրաւեն կարեւոր դիրքեր Լոս Անճելոսի Լէյքըրզ պասքեթպոլի խումբը (5րդ), ինչպէս նաեւ պէյսպոլի երկու ակումբներ Նիւ Եորք Եանքիզ (6րդ) եւ Ֆիլատելֆիա (9րդ):*

*Անգլիոյ Մանչեսթըր Եունայթտ խումբը կը գրաւէ 11րդ դիրքը:*

### ՏԷՐ ԿԱՆԳՆԻՆՔ ՄԵՐ ԵՐԱԽԱՆԵՐՈՒՆ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

տրուի անոնց: Ոնիրի համազօր կը նկատուի դոյզն բռնաբարութիւն՝ երեխայի վրայ, ըլլայ տունը, ըլլայ փողոցը, ըլլայ դպրոցէն ներս: Մօտաւորապէս ազատ, անկաշկանդ եւ մանկավարժականօրէն գեբարդիական համարուող պայմաններու ներքեւ հասակ կը նետեն անոնք: Այդ բոլորը գերազանցապէս գնահատելի, այլապէս՝ շնորհաւորելի ձեռնարկումներ են: Այդ աշխատանքները արդիւնաւորուեցան շնորհիւ երկարատեւ, հետեւողական բարեսիրական աշխատանքներու, ընդդէմ՝ երեխաներու շահագործման բիրտ պայմաններու անէացման ճանապարհին: Պատիւ՝ Կանանց Դեմոկրատական Տիեզերական Համադաշնակցութեան եւ ընկերային եւ պետական այն բոլոր կառոյցներուն, որոնց բարեսիրական վեհ ձգտումներէն մին հանդիսացաւ, նաեւ, ստեղծել երեխաներու ֆիզիքական, ապահովական, կրթական եւ դաստիարակչական առողջ զարգացման յատուկ պայմաններ:

Անշուշտ, նման՝ ընդհանրապէս ազատ, մանկավարժական տեսութիւններով յղփացած եւ պետականօրէն պաշտպանուած պայմաններու ներքեւ հասակ նետող երեխաներ, շատ անգամներ հակամէտ կը դառնան դրականի կողքին, իրենց մէջ զարգացնելու նաեւ շռայլ վարժութիւններ, սովորութիւններ, բնազդային դրոյթներ, որոնց գերեվարող բնոյթին եւ տխուր հետեւանքներուն ծանօթ են հայ եւ օտար բոլոր ծնողները: Անոնք կը տառապին տեսնելով, որ իրենց աւանդականօրէն ունեցած երբեմնի ազդու հակակշիռը տակաւ կը սահմանափակուի իրենց երեխաներուն վրայ...:

Ընդհանրապէս մեր ընկերային կեանքի մակարդակներու վրայ եւ մասնաւորաբար մեր հայ ընտանեկան յարկերէն ներս, յատկապէս ծնողք-երեխայ փոխյարաբերութիւններու մակարդակին՝ գայթակղեցուցիչ բարդութիւններ, կը յայտնուին՝ վերլուծումներու կարօտ հարցեր, որոնք մեր այսօրուան մտորումներէն դուրս կը մնան: Ամէն դէպքին, թող որ կարճատեւ, պիտի արժէր որ կանգ առնէինք այդ վերլուծումներու կարօտ շատ մը հարցերու շարքին գտնուող, առանձնապէս մեր համայնքին իւրայատուկ հարցի մը վրայ, որ ընդհանրապէս կը վերաբերի մեր մեսրոպեան լեզուի պահպանման առաջնահերթութեան:

Մեր երեխաները մեր ապագան են: Ինչ ալ ըլլան մեր սփիւռքեան ընկերային, կրթական, դաստիարակչական, քաղաքական եւ քարոզչական պայմանները՝ ունինք մեր լեզուի պահպանման հրամայականը, որ առանձնապէս կը բանայ մեր ծնողներուն, կրթական հաստատութիւններուն եւ մեր ազգային բոլոր կառոյցներուն վրայ:

Մեր ընտանեկան երդիքներուն տակ հայերէն լեզուն պիտի բարբառի միշտ եւ ամէն առիթներով: Մեր ուսումնական հաստատութիւններէ ներս պիտի ուսուցանուի հայերէն լեզուն, տեղական օտար վարկանիշային լեզուներու չափանիշերով: Մեր համայնքային ակումբներէն ներս մշտապէս զարկ պիտի տրուի տրուի հայախօսութեան: Գերիշխող լեզու պիտի դարձնենք հայերէնը: Օգնութիւն պիտի փութացնենք մեր երեխաներուն, որ փոքր տարիքէն ընտելանան իրենց մայրենի լեզուին հետ, ինչպէս սահուն կերպով կ'ընտելանան օտար լեզուներու հետ: Ինչպէս օտար լեզուներու պարագային՝ պիտի աշխատինք նոյն վարկանիշային արժեւորումը տալ հայերէն լեզուի ուսուցման: Այս է միջոցը, ընդհանրապէս մեր՝ իբրեւ ծնողներ եւ մասնաւորապէս մեր երեխաներու մէջէն թօթափելու ամէն դժկամութիւն եւ բարդոյթ՝ մայրենի լեզուին հանդէպ:

Այս պիտի ըլլայ մէն մի սփիւռքահայու նշանաբանը, «Երեխաներու Օր»ուան բարեբաստ տօնական առիթով, զոր կ'ողջունենք ամբողջ սրտով:

## ՄՈՒՐԱՏ ՏԷՐՏԷՐԵԱՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*լէմքեարեանի գլխաւորութեամբ Ս. Նշան վանքին մէջ գիշերային գաղտնի ժողովներ տեղի կ՚ունենային: Ս. Մուրատն ալ որպէս պատասխանատու գործիչ կը մասնակցէր այդ ժողովներուն» (12): Ու օր մը, բնաւորութեամբ զաղտնապահ Մուրատ, իր կնոջ կ՚ըսէ. «Մեր ժողովներուն մէջ յաճախ կը խօսուի, մաս մը կտրիճներով ապաստանիլ Պարտիզակ կամ Պախչէճքըի լեռներն ու մթնաձոր պուրակները, մինչեւ որ ժողովուրդը արթննայ եւ հետեւի մեզի: Հոն դիմադրութեան ճակատ կազմելու մեծ հնարաւորութիւններ կան»: (13)*

*Եղած կանխատեսումները տեղին էին: Պատերազմի սկսելէն յետոյ, գերի ինկած զինուոր ռուս սպայի մը փախուստը Սեբաստիոյ հիւանդանոցէն, պատրուակ կ՚ըլլայ որ շրջանի հնչակեան եւ դաշնակցական պատասխանատուները, հրաւիրուին նահանգապետին մօտ: Այդ քաղցրաբարոյ հրաւէրը կը վերածուի ձերբակալութեան եւ բանտարկութեան որոնց մէջ նաեւ Մուրատ: Այսքանը ճիշդ է, որովհետեւ Մուրատի կինը կը վկայէ թէ նամակագրական կապ ունեցած է իր ամուսինին հետ, անոր բանտ գտնուած ժամանակ: Ապա, Մեծ Եղեռնին, տեղի կ՚ունենայ բանտարկուած հայերուն սպանդը: Առաջին տպաւորութիւնը այն կ՚ըլլայ, որ Մուրատ եւս, իր բանտակիցներուն հետ բռնած է սպանդի ճամբան: Թէոդիկ եւս Մուրատ Տէրտէրեանը կը դասէ Սեբաստիոյ մէջ նահատակուածներու շարքին:*

*Սակայն, ժամանակի ընթացքին կը պարզուի, թէ իրականութիւնը այլ է: Մուրատ կը յաջողի փախուստ գալ կալանքէն եւ բարձրանալ լեռ: Այս վարկածին որպէս առաջին փաստ կը բերուի այն նամակը որ Մուրատ գրած է Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութեան ղեկավար իր ընկերոջ Ղուկաս Աղբարին (Տէօվլէթեան): Նամակին մէջ կ՚ըսուի. «Ընկ. Ղուկաս, մենք ինքնապաշտպանութեան համար լեռ բարձրացանք: Ինչ-ինչ պատճառներէ թելադրուած Սեբաստացի Մուրատ իր քանի մը ընկերներով անյայտ եղած է: Այժմ մենք կը գտնուինք Էնտերէսի լեռները: Մեզի միացած են Զառայ-Կովտուն-Խնժառի-Խորախոն-Կավրա-Խորսանա եւ չմշկածագի փաստկան հայերը: Տրամադրութեանս տակ ունիմ հազարէ աւելի զինուած երիտասարդութիւն մը եւ տասնեակ հազարէ աւելի ժողովուրդ: Խմբապետներու համաձայնութեամբ նպատակ ունինք ուղղուիլ դէպի ռուսական սահման: Կարելի եղած արագութեամբ եկէք միացէք մեզի: Հնչակեան խմբապետ Խռխորանցի Ս. Մուրատ: 1915 Ապրիլ 23» (14): Դժբախտաբար, այս կարեւոր նամակին սկզբնաղբիւրը յայտնի չէ: Սակայն, մամուլին մէջ երեւցած երկու լրատուական հրապարակումներ, յստակ լոյս կը սփռեն Մուրատի կեանքի վերջին ոդիսականին վրայ: Թիֆլիսի հնչակեան օրկան «Գաղափար»ը կը գրէ. «Ռուս-Թրքական պատերազմի նախօրեակին, ամերիկահայ խումբ մը առաջնորդութեամբ Ս Մուրատի եւ Աւոյի Շապին-Գարահիսարի մէջ լեռ են բարձրացել: Ներկայիս մեզ հասած ստոյգ տեղեկութիւններն այդ մասին հետեւեալներն են, զոր կը պատմէ նոր փախած ականատես մը: Ս. Մուրատի խումբը մինչեւ 1915 թ. Սեպտեմբեր 22-ը, կռուելով կ՚անցնի Տերսիմ: Երբ Ջարդարար խուժանին ձեռքէն հազիւ ազատուած հատ ու կտոր հայերին թուրքերը դարձեալ հալածելով կ՚ուզեն Քէմախի կիրճէն անցնիլ, կոտորելու համար, հոդ վրայ կը հասնի Մուրատի խումբը, իր հետ ունենալով բազում տերսիմցի քիւրտեր, յարձակում կը գործն հայերը փոխադրող զօրքին վրայ ու բոլոր հայերը կ՚ազատեն: Մահուան ճանկէն հազիւ ճողոպրած, խեղճ ու թշուառ հայերը դեռ մինչեւ այսօր ողջ կը մնան Տերսիմի մէջ, շնորհիւ ազատարար խումբին եւ քաջարի հերոս Մուրատին: Բայց դժբախտաբար հոն է, որ խմբապետ Մուրատը կը սպաննուի հերոսաբար, իր բաժին ինկած պարտականութիւնը կատարելէ վերջ եւ սակայն ամբողջ խումբը եւ տերսիմցի քիւրտերը, բոլորուելով հերոսի դիակին շուրջ կ՚երդուին, որ ամբողջ Տերսիմը իրենց հետ միասին գործեն ի նպաստ հայ ժողովուրդի»: (15)*

*Քանի մը տարի ետք ալ Ամերիկայի հնչակեան օրկան «Երիտասարդ Հայաստան»ը այս մասին կը հրապարակէ ականատեսի մը վկայութիւնը ուր կ՚ըսուի. «Կ՚աւետեմ ձեզ, Սեբաստիոյ քաջ կորիւններէն երեք խումբերու մնացորդներու ազատումը:... Չեմ կրնար նկարագրել մեր քաշածները, վասնզի կարելի չէ, անկարելի է. միայն կու գայ ձեզ աւետել, որ Ս. Մուրատի խումբէն ազատուեցան 17 կտրիճներ, Բ. Համբարձումեանի խումբէն 15. մեր խումբը որ 57 հոգիէ կը բաղկանար, 32 հոգի մնացինք, սեբաստացի կռուող հազարի մօտ գունդէն 64 կտրիճներ միայն անցան Կովկաս: Միւսները մնացի՞ն թէ՞ մեռան, հիմակ ու հիմա մի հարցնէք, վասնզի լուր առնելը հնար չէ»: (16)*

*Ու այդպէս ալ Ս. Մուրատի մահուան պարագաները կը մնան ամբողջապէս չբացայայտուած, բայց ան հաստատապէս կը մնայ 125-ամեակի կերտիչներէն մէկը:*

************

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ**

1. Նազենի Ս. Մուրատ եւ Առաքել Եղիկեան, «Խորոխոնցի Ս. Մուրատ», Պէյրութ, 1969, տպ. «Տօնիկեան», էջ 21-22:

2. Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան», Ա. հատոր, Պէյրութ, 1962 էջ 407:»

3. «Հնչակ», 1902, Նոյեմբեր 1, «Աւօ (Աւետիս Գասպարեան)»:

4. «Դրօշակ», 1898 Նոյեմբեր 30, «Պարտրի Զոհերու Ինը Ընկերների Նահատակումը Սալմաստում» եւ 1899 Յունուար 31, «Մահլամի Նահատակների Յիշատակին»:

5. Արսէն Կիտուր..., էջ 408:

6. «Հնչակ», 1935 Օգոստոս, Ռ., «Հնչակեան Գործունէութիւնը Սալմաստ-Ուրմի Գաւառներում Մէջ»:

7. Թէոդիկ, «Յուշարձան Ապրիլ (11) Քսանչորսի», Բ. տպագրութիւն, հրատ. Ցեղասպանութեան 70-ամեակի Լիբանանահայ Կեդրոնական Մարմին, Պէյրութ, 1985, էջ 60:

8. Ն. Մուրատ եւ Ա. Եղիկեան, .., էջ 24-25:

9. Ս. Սապահ-Գիւլեան «Փոքր Հայքի Յիշատակներ», Գահիրէ, 1916, էջ 346-348:

10. Նոյն, էջ 320:

11. «Նոր Աշխարհ», 1912 Ապրիլ 19/2 Մայիս, Ս. Մուրատ «Օրուան Հարցերը»:

12. Ն. Մուրատ եւ Ա. Եղիկեան,..., էջ 47:

13. Նոյն, էջ 48:

14. Գերսամ Ահարոնեան, «Յուշամատեան Մեծ Եղեռնի», հրատ. «Զարթօնք» օրաթերթի, Պէյրութ, 1965, Խորէն Այվազեան «Շապին-Գարահիսարի Հայութեան Գոյամարտը», էջ 774-775:

15. «Գաղափար», 1916 Մայիս 3, Աստուածատուր, «Շապին Գարահիսարի Հնչակեան Մուրատի Խումբը եւ Տերսիմի Քիւրտերուն Ապստամբութիւնը»:

16. «Երիտասարդ Հայաստան», 1919 Փետրուար 12, Սարգիս Օննիկեան, «Նամակ Ռուսիայէն-Սեբաստիայէն Կովկաս Սեբաստացի Հնչակեան Ուժերը եւ Զօրավար Անդրանիկ»:

## ՄԵՐ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԼԵԶՈՒՆ

*Շարունակուած էջ 15-էն*

*լեզուով խօսողները արհամարհում են հենց իրե՛նց լեզուն ու ձգտում են ուրիշ, իրենց կարծիքով, աւելի ազդեցիկ ու պատուաւոր լեզուներն իմանալուն:*

*Բառային փոխառութիւնների դէմ պայքարելը լեզուն սպանելու ամենաարագ ուղին է:*

### *3. ՕՏԱՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Վերջերս մեր մաքրամոլները մի անհեթեթ ու գէշ բան է՛լ են նում. օտար անունները գրում են իբր իրենց «մայրենի արտասանութիւնով» ու, կամայ թէ ակամայ, բոլորին ստիպում են, որ իրենց գրածները «հայացնեն», բայց միայն հենց իրե՛նց հասկացածի պէս:*

*Մեր աւագ դպրոցի ֆիզիկայի հեղինակները իրենց լեզուաբանութեան ու թարգմանութեան գիտակ են համարում ու կվարցի տեղը գրում են քվարց ու էյնշտէյնի տեղն էլ՝ Այնշտ(թ)այն, բայց թող այս պարոններն ասեն, թէ ինչու են այդ գրքում, օրինակ, գրել՝ Մարիոտ, Բրոուն, Դալտոն, Իսահակ Նիւտոն, Ռոբերտ Հուկ, Ռեզեր ֆորդ, Յունգ, փոխանակ գրէին՝ Մաղիօ (ֆրանսերէն այսպէս են ասում), Բրաուն, Դոլթն, Այզեք Նիւթն, Րոբըրթ Հուք, Րադըֆոդ, Յանգ (համարեա անգլիացիների արտասանելու պէս):*

*Մի բան էլ ասեմ օտարանունները տառադարձելու մասին:*

*Մերոնք հենց որ մի արեւմտեան օտար բառի մէջ t, p ու k են տեսնում, սրանց տեղը գրում են՝ տ, փ ու ք, չմտածելով, որ, օրինակ՝ ֆրանսերէնն այս հնչեղ խուլերը չունի. ունի միայն պարզ խուլե րը՝ տ-ն, կ-ն ու պ-ն: (Գերմաներէնն էլ՝ հակառակը. պարզ խուլերը չունի, ունի միայն հնչեղները՝ թ-ն, փ-ն ու ք-ն): Մեր այս «ի մաստուններն» այս «մանրուք նե րը» չգիտեն, ու որ տեղ էլ որ t, k ու p են տեսնում, տառադարձում են թ, ք ու փ:*

*Սրանց պէս հազար ու մի բան կայ, ու անհնար է, որ ոչ լեզուաբանը այս ամէնն իմանայ: Իսկ մեր համարեա բոլոր հեղինակներն էլ լեզուաբան չեն:*

### *4. Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԱՐՈՒԻ*

*Մենք ունենք «Լեզուի տեսչութիւն» անունով մի հիմնարկ, ինչը ճիշտ այսպէս է վարւում ու երբեք չի զգում, որ արդիւնքը ոչ միայն զրօ է, այլեւ՝ բացասական, որովհետեւ հակառակ է լեզուի էութեանն ու վնասակար է:*

*Այսպէս էր վարւում նաեւ մեր նախկին տէրմինաբանական կոմիտէն, ինչն այսօր չի գործում:*

*Բայց աւելի ցաւալի է, որ այս մարդիկ, համարեա առանց բացառութեան, հայրենասէրի կեցուածքով յայտարարում են, թէ «յոյժ կարեւոր ու հայրենանուէր գործ են անում»:*

*Այս, իրօք որ, համազգային աղէտից փրկուելու մի ճար կայ միայն, որ մեր մտաւորականները պետական օրէնքի հարկադրանքով (երեւի նախկին Տերմինաբանա կան կոմիտէ-ի պէս մի զսպող (ու հա մար յա ՄԻԱՅՆ ԶՍՊՈՂ, ոչ թէ նորից բառ ու տերմին «հայացնող») հիմնարկի միջոցով) ընդունեն հետեւեալ չորս կանոնը.*

*ԿԱՆՈՆ 1. Եթէ տերմին կոչուածը (կամ բառը) արդէն հաստատուել ու գործածւում է հայոց կենդանի լեզուի ու գրական ոճերի մէջ, դա այլեւս չպիտի «հայացուի», ու պիտի համարուի հայերէն ու գործածուի առանց սահմանափակութեան:*

*ԿԱՆՈՆ 2. Եթէ տերմինը նոր է ու լեզուի մէջ դեռ չի գործածուել, դա պիտի գործածուի իր «օտար» ձեւով, եթէ դրա հայերէն «համարժէքը» բազմիմաստ է կամ անյարմար: Եթէ տերմինը գիտական է ու խիստ տարածուած, պիտի ընտրուի դրա միջազգային ձեւը:*

*ԿԱՆՈՆ 3. Եթէ մէկն ու մէկը վերջերս իբր «հայացրած» տերմինի փոխարէն գործածում է սրա միջազգային ձեւը, պիտի համարուի թոյլատրելի, ու նոյնիսկ՝ խրախուսելի, որովհետեւ սա շատացնում է հայերէն գրական ոճերի յարմարուելու (ադապտացիայի) ունակութիւնը, ուրեմն նաեւ կենսունակութիւնը:*

*ԿԱՆՈՆ 4. Արդէն կայունացած անունները չպիտի «ուղղուեն» կամ փոխարինուեն ուրիշներով, թէ չէ՝ այս պրոցեսը երբեք վերջ չի ունենայ:*

*Լրիւ նոր անունները տառադարձելիս աւելի լաւ է հետեւենք անուան մայր գրութեանը, յաճախ փակագծերի մէջ դնելով (եթէ հնարաւոր է) մայր գրութիւնը. օրինակ, Ռոբերտ Թաչեր (Thatcher): (Չեմ ասում, թէ ոչ մի բառ չպիտի հայացնենք: Պիտի հայացնենք, բայց չափով ու գիտութեամբ):*

*Եթէ ապագայ Տերմինաբանական կոմիտէն չպիտի գործադրի այս չորս կանոնը, չպիտի զսպի մեր կեղծ հայրենասէրների անհեթեթ ու վնասակար գործունէութիւնը, ու թէ սա պիտի մեր Լեզուի տեսչութեան պէս ինքն է՛լ զբաղուի «հայերէնը մաքրելով», աւելի լաւ է, որ այս տեսակ ո՛չ մի կոմիտէ էլ չլինի (ու ոչ է՛լ որեւէ լեզուի տեսչութիւն լինի):*

*Թէ չէ՝ վսեմից մինչեւ ծիծաղելին ու այլանդակը շատ անգամ մի քայլ է՛լ չի:*

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.



2012
AGBU-AYA | ՀԲԸՄ-ՀԵԸ
LOS ANGELES
WORLD GAMES
July 28th - August 5th 2012
OPENING CEREMONY
Sunday July 29th, 2012
Pasadena City College, Pasadena, CA
VICTORY BALL
Saturday August 4th, 2012
Universal Studios Backlot
For more information or volunteer opportunities call: (626) 794 7942
info@agbugames.com | www.agbugames.com
S P O N S O R S
EH National Bank
HAIG'S
SecureNet
karoun
FIRST CALIFORNIA BANK
MT SIERRA COLLEGE
HI-TECH ELECTRO DESIGN
Voskos